Հ. ատարակ. Բ. Հ. Կոլտուրական Միութեան
Հրատարակչական Մասնաճիւղի — № 26

Տպագրուած է Սաղմոսի իսաւ Դաւիթ-Աւան Իզբաստայի ծախքով.

ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Հին դար

...ъ Культурнаго Союза
...ской Секціи № 26
Ар... янской исторіи
...ній періодъ
...ъ Теръ-Григорьянцъ

Յատուածով
Հայոց Ծխ. դպրոց. ծրագրին
Տ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
Ուսուց. Բազ. Հ. Հոխի. օր. դպր.

ԲԱԳՈՒ
Տպարան „ԱՐԱՄԱԶԴ"

ԲԱԿՈՒ
Типографія „АРАМАЗДЪ"

1912

Հրատարակ. Ի. Հ. Ազգային Գրքերեան
Հրատարակչական Մասնաճիւղի — № 26

Տպագրուած է Սաղնախի խան Դաւիթ-Աւան Իզբաշայի ծախք.

(47.925)
2-46

ՁԵՌՆԱՐԿ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հին դար

1369
1286

Изданіе Б. А. Культурнаго Союза
Издательской Секціи № 26

Учебникъ Армянской исторіи

Древній періодъ

Составилъ Т. Теръ-Григорьянцъ

Հայ Գրքի Ազգ. Գրադարան
Նոր Նախիջեւան

Յառաջաբանով
Հայոց Ծխ. դպրոց. ծրագրին
Տ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
Ուսուց. Բաց. Հ. Հոխի. օր. դպր.

17 x 12

ԲԱԴՈՒ
Տպարան „ԱՐԱՄԱԶԴ"
1912

Typographie „ԱՐԱՄԱԶԴ" Баку 1912 г.

Ներածություն

Պատմությունը ազգերի կեանքն է ներկայացնում իրանց աստիճանական զարգացման և անկման շրջաններում։ Որևէ ազգի յառաջադիմությանն ու անկմանը նպաստում են ներքին և արտաքին հանգամանքներ։ Սակայն ազգերը մեռնելով՝ նրանց ստեղծած քաղաքակրթությունը չէ մեռնում, այլ որևէ ճանապարհով հաղորդւում է ուրիշներին, որոնք իրանց հերթին մշակում են իրանց յետնորդներին թողնելու համար։

Լուսաբանել այն դէպքերը, որոնք նպաստում են մարդկային ցեղերի քաղաքակրթության զարգացմանը, աստիճանական կարգով ներկայացնել նրանց նշանակությունն այդ գործում՝ ահա պատմության գործը։ Նշանակում է՝ արդի պատմությունն ուսումնասիրում է այն դէպքերը, որոնք ազդել են մարդկանց քաղաքակրթության զարգացմանը կամ անկմանը։

Պարզ է ուրեմն, որ պատմությունն զբաղւում է քաղաքակիրթ ազգերի կեանքով։ Հայերը պատկանում են այդ ազգերի թուին։

Ա.

Ուրարդու.

Երկրի սահմանները, դիրքը, կլիման, լեռները, գետերը, լճերը, քաղաքական բաժանումն. Ուրարդուի պատմութեան աղբիւրները։

Առաջաւոր Ասիայի այն բարձրաւանդակը, որի սահմաններն են՝ հարաւային կողմից Տիգրիսի, հիւսիս-արևելքից Կուրի և արևմուտքից Ալիսի հովիտները, դեռ ևս Քրիստոսի ծննդից շատ դարեր առաջ յայտնի էր Ուրարդու անունով։ Այդ բարձրաւանդակը հիւսիս-արևմտեան կողմից յենւում է մի լեռնաշղթայի, որ այժմ կոչւում է Պարիսարեան կամ Խաղդեաց լեռներ։

Բարձրաւանդակի կենտրոնում բարձրանում է սպիտակափառ Մասիս սարը, որ իր ձիւնապատ կոնաձև գագաթը ամպերից էլ բարձր ցցած՝ կարծես դիտում է իր շուրջը։ Նա բաղկացած է երկու գագաթներից՝ կողք-կողքի։ Նրանցից մէկը կոչւում է Մեծ Մասիս, միւսը՝ Փոքր Մասիս։ Մասիսը հնում կոչւում էր և Արարատ. երևի հէնց այդ լեռան անունովն էլ նրա շրջակայքը կոչուել է Ուրարդու։ Յետակայում յոյներն այդ երկիրն անուանել են Ար-

ՄԵՆԻԱ, պարսիկները՝ ԱՐՄԻՆԱ, իսկ հայերը՝ ՀԱՅԱՍՏԱՆ։

Սկզբում Ուրարդու կոչուել է Արարատի շուրջը տարածուած մի նահանգը, որն իր տարածութեամբ մեծ չէ եղել այժմուայ Երևանեան նահանգից, բայց երբ այդ երկրի գերիշխանութիւնը տարածուեց և հարևան նահանգների վրայ, այն ժամանակ ամբողջ բարձրաւանդակը նոյն անունով կոչուեց։

Արարատից ճիւղաւորուում են զանազան ուղղութեամբ մեծ և փոքր լեռնաշղթաներ իրանց զագաթներով. նրանցից նշանաւորներն են. Զրաբաշխի և Բինգեօլի լեռները՝ բազմաթիւ Զրառատ վտակներով, Տաւրոսի լեռները, որոնք երկու ճիւղերով արևմտեան կողմից գոգաւորում են այդ երկիրը. նրանց են պատկանում Նպատ զագաթը, Գրգուռ, Ընձաքիարս և Վարագայ. Ծաղկոցի, Արագած և Հայոց Տաւրոսը կամ Սասուն. Սիւնեաց, Գեղարքունեաց, Մթին կամ Ստորին Կովկասեան լեռներ։

Այդ լեռները երկրի մէջ կազմում են անթիւ զուարճալի հովիտներ, Զրարի ձորեր, պտղաբեր դաշտեր և մեծ ու փոքր լճեր։ Լճերից նշանաւորներն են՝ Վանայ (հնում՝ Բզնունեաց), Սևանայ (հնում Գեղամայ) և այլ փոքրիկ լճակներ։

Հայաստանի լեռներն իրանց Զրառատ

գետերով ոռոգում են համարեա ամբողջ առաջաւոր Ասիան։ Այդ լեռներից բղխում են նշանաւոր գետեր՝ իրանց մեծ ու փոքր վտակներով. Եփրատ, Տիգրիս, Կուր և Երասխ։ Եփրատը բղխելով Էրզրումի լեռներից՝ ընդունում է իր մէջ փոքր Եփրատը կամ Արածանին (հնում կոչւում էր Արանդիաս, իսկ այժմ տաճիկներն անուանում են Մուրադ-չայ), հոսում է նախ դէպի արևմուտք, ապա դէպի հարաւ. և դուրս գալով Հայաստանից՝ ծուռում է դէպի հարաւ-արևելք և ոռոգում է ամբողջ Միջագետքը։ Տիգրիսը բղխելով Ծովք լճակից՝ ձախ կողմից ընդունում է արևելեան Տիգրիսն իր վտակներով և անցնելով հարաւային Հայաստանով դէպի արևելք, ծուռում է դէպի հարաւ-արևելք, ապա՝ հարաւ և միանալով Եփրատի հետ՝ թափւում են Պարսից ծոցը։ Կուրի միայն վերին մասն է Հայաստանով հոսում. Երասխն է, որ սկիզբն առնելով Բարձր Հայքից՝ ամբողջովին հոսում է Հայաստանի միջով դէպի արևելք և խառնուելով Կուրի հետ՝ թափւում է Կասպից ծովը։ Երասխի մէջ ձախ կողմից թափւում են. հին Ախուրեանը (այժմ տաճկական անունով՝ Արփա-չայ), Հրազդանը կամ Զանգին, Որոտն և Հագար և ուրիշ մանր գետակներ։

Այսպիսով Բինգեօլի և Զրաբաշխի լեռները այդ գետերին թէ ուղղութիւն են տալիս և թէ անուանում են։

Եղանակները խիստ են. երկար ձմեռները և սառնամանիքները մի կողմից և անտառների շողերը միւս կողմից յատուկ են այդ երկրին։ Ձիւնը շատ առատ է լինում. ձմեռը բոլոր լեռներն ու դաշտերը ծածկւում են ձիւնի հաստ շերտով. հեռուից սև կէտերի նման նկատւում են միայն գիւղերը։ Ճանապարհները ծածկւում են հաստ սառուցով, իսկ գառիվայրերը թաղւում են բարձրութիւններից թափուող ձիւնի տակ։ Գարնան ձիւնը հալւում է, որից գոյանում են կարկաչուն վտակներ, նորանոր գետակներ և հեղեղատներ. նրանք թափւում են գետերը և յորդացնում։ Հիւսիսից՝ Կովկասեան ձիւնապատ լեռներից ազատ փչում են ցուրտ քամիներ, որովհետև այդ կողմից երկրի սահմանները միանդամայն բաց են և երկիրը հեռու է լեռնաշղթայից։

Երկիրը պտղաբեր է և համեմատաբար առողջ, քան թէ Ասիայի արևելեան մասերը։ Երկրի զանազան վայրերում տարածւում են հովիտներ և դաշտավայրեր. օր. Մուշի, Կարինի, Երևանի, Խարբերդի, Բասենի, Բարերդի, Խնուսի՝ բացի Երասխի և Տիգրիսի հովիտներից։ Լեռների լանջերը մեծ մասամբ ծածկուած են կամ դարտը խոտով և կամ հարուստ անտառներով։ Նշանակում է՝ երկիրը յարմար է թէ երկրագործութեան և թէ խաշնարածութեան համար։

Բնում են բարեխառն և մասամբ տաք գոտու համարեա բոլոր բոյսերը, օր. հացաբոյսեր, բամբակ, ծխախոտ քնջութ, կանեփ, վուշ, բանջարեղէններ, խաղող, թութ. կենդանիներից գովուած են. ոչխարը, այծը, մանաւանդ ձին, եզը, կովը, գոմէշը, էշը, ջորին և այլն։

Այդպիսի բազմատեսակ բնութիւն ունեցող երկիրը ազգաբնակութեան մէջ պէտք է զարգացնէր եւ բազմատեսակ ձիրքեր։ Երկրի պտղաբերութիւնը զարկ կը տար եւ վաճառականութեանը։

Երկրի սահմանները ցածր՝ են և դուրկ բնական պատուարներից։ Երկրի սահմանները բաց էին թէ օտար խաղաղութեան եւ թէ նրանց արշաւանքների առաջ։ Հետեւութեամբ կարելի էր երկրի սահմանները ընդարձակել եւ յարաբերութիւն ունենալ օտար ժողովուրդների հետ։

Քրիստոսից հազարաւոր տարիներ առաջ ամբողջ բարձրաւանդակը բաժանւում էր մանր գիւղապետութիւնների կամ տոհմաբերութիւնների, որոնց վրայ իշխում էին տոհմապետներ. այդ տոհմապետները թագաւոր տիտղոս էին կրում, իսկ տոհմաբերութիւնները՝ թագաւորութիւններ էին կոչւում։ Սակայն արտաքին յարձակումներն ստիպեցին այդ մանր թագաւորութիւններին միանալ և կազմել աւելի խոշոր թա-

գաւորութիւններ, թէև նրանք շարունակեցին իրանց թագաւորներն ունենալ, որոնք անկախ գլխաւոր թագաւորից՝ կառավարում էին իրանց երկրները։

Ժ.-րդ դարում յայտնի էին հետևեալ թագաւորութիւնները.

ա. Բուն Ուրարտու՝ այժմուայ Այրարատեան նահանգը.

բ. Բիայինա՝ Վանայ լճի արևելեան կողմում.

գ. Մուսասիր կամ Արսիսա (Մուշ և Արճէշ)՝ Վանայ լճի արևմտեան կողմում.

դ. Մելիդ (Մալաթիա)՝ Եփրատի աջ ափին.

ե. Միլգիս՝ Էրզրումի նահանգը.

զ. Նայիր՝ Վանայ լճի հարաւային կողմում՝ Եփրատից մինչև Ուրմիոյ լիճը. սա բաժանւում էր 23 թագաւորութիւնների.

է. Մաննա՝ Ուրմիոյ լճի հիւսիսում՝ Ղարադաղ և Սիւնիք.

Ասորեստանի արձանագրութիւնների մէջ այդ երկրները նախ ընդհանուր անունով Նայիրի երկիր են անուանուած, թերևս նրա համար, որ նախ այդ մասն էր Ասորեստանին սահմանակից և երկրորդ՝ այդ շրջանում Նայիրի երկրի թագաւորներն են Ասորեստանի յարձակումներին դիմադրել։ Իսկ երբ երկար դիմադրութիւնից յետոյ Նայիրի երկրի թագաւորների ոյժը

ջլատւում է և նրանք ստիպուած են լինում առաջնութիւնը զիջել աւելի հզօր՝ Ուրարտուի թագաւորներին, այն ժամանակ Ասորեստանի միապետներն էլ իրանց արձանագրութիւնների մէջ յիշատակում են միայն Ուրարտու անունը, որ յատուկ էր ամբողջ երկրին։

Ուրարտուի նախնական պատմութեան իբրև աղբիւրներ ծառայում են սեպաձև արձանագրութիւնները, պեղումներից հանած հնութիւնները, յոյն պատմիչները՝ Հերոդոտ, Քսենոֆոն և Ստրաբոն և ազգային աւանդութիւնները, որ բերում է մեր պատմահայր Մովսէս Խորենացին։

Բ.

Խալդեր.

I.

Նախնական տեղեկութիւններ խալդերի մասին. նրանց պարապմունքը, բնակավայրերը, տնային իրերը, արհեստները և կրօնը։

Անյիշելի ժամանակներից 'ի վեր Տաւրոսի և Արարատի մէջ ընկած տարածութեան վրայ բնակւում էին մանր ցեղեր, որոնք ընդհանուր անունով կոչւում էին խալդեր։

Ո՞վքեր էի խալդերը, մարդկային ո՞ր սերնդին էին պատկանում, ի՞նչ լեզուով էին խօսում,—մինչև այժմ պարզուած չէ։

Նրանք բարձրահասակ էին, ուժեղ, ծանր, դիմացկուն, կռուի և աշխատանքի մէջ դաժան, խիստ բնաւորութեամբ և իրանց անկախութեամբ հպարտ։ Այդպէս են ներկայացնում նրանց յոյն պատմիչները։ Մենք նրանց պատահում ենք պատմութեան մէջ այն ժամանակ, երբ նրանք բաւականաչափ քաղաքակրթուած ժողովուրդ էին ներկայանում։

Նրանց մի մասը պարապում էր խաշնարածութեամբ. տարուայ լաւ եղանակներին նրանք անցնում էին հովիտներից անտառները,

կամ բարձրանում էին լեռները՝ խոտ ճարելու համար. ապա ձմեռը՝ ցրտից ստիպուած վերադառնում և ապրում էին իրանց կէս-ստորերկրեայ բնակարաններում. այդպիսի բնակարաններ՝ հիւղեր այժմ էլ հայ գիւղերում, մանաւանդ խաշնարած հայերի մէջ, գոյութիւն ունին։ Երբ հողը յարմար էր լինում երկրագործութեան համար, նրանք հազուագիւտ ճարպիկութեամբ մշակում էին և առատ հունձ ստանում։ Նրանք ջրանցքներ էին փորում և հեռաւոր տեղերից առուներ անցկացնելով ոռոգում էին իրանց արտերն ու այգիները. Եթէ արտերը գտնւում էին լեռների լանջերին և գաւիվայրերի վրայ, հեղեղներից պաշտպանուելու համար նրանք միաբանում և պատ էին քաշում։ Այդպիսի միաբան գործակցութիւն այժմ էլ հայ գիւղերում գոյութիւն ունի։

Նշանակում է՝ նրանց ծանօթ էր երկրագործութիւնը, խաշնարածութիւնը, պարտիզպանութիւնը և որմնադրութեան արհեստը։

Նրանք ապրում էին փոքրիկ գիւղաքաղաքներում՝ աւաններում, որոնց մեծ մասը ամրացրուած էին, կամ շինուած էին հեշտութեամբ պաշտպանուող բարձրութիւնների վրայ։ Քաղաքները փոքր էին և քառակուսի գծուածի նման. պարիսպները շինում էին մեծամեծ քարերից՝ քառակուսի կտրուած և առանց շաղա-

խի իրար վրայ դարսած. պարիսպների գլուխը ժանիքաւոր էր։ Քաղաքների շրջապատի պարիսպների անկիւններում կառուցանում էին քառակուսի աշտարակներ. դէպի քաղաքի մուտքը տանող ճանապարհը նեղ և վտանգաւոր էր լինում։

Մանաւոր տները բաւականին պարզ շինութիւններ էին՝ ուղղանկիւնի տուփերի ձևով, արտաքուստ մերկ էին զարդարանքներից, դռները ցածր էին, իսկ առջևից ունենում էին երեսն սրահներ։ Տան կտուրը երկու թեքուածքից էր բաղկացած, որպէսզի անձրևի և ձիւնի ջրերը հեշտութեամբ հոսէին ցած։ Իշխանական տներն աւելի ընդարձակ էին և պատերն աւելի խնամքով էին շարուում. նրանք ունենում էին երբեմն սիւնազարդ ճակատ, որի վրայ քանդակում էին վահաններ կամ այլ խորհրդանշաններ. սրահների ներսի պատերը զարդարում էին քարէ սալերով, որոնց վրայ քանդակում էին արձանագրութիւններ։

Տաճարների աւերակներից հանուած են անագապղնձէ (բրոնզէ) գինու ամաններ, արձաններ, սեղաններ, ընծայաբերութեան և զոհի քարեր, կենդանական և մարդկային կուռքեր և կրակարաններ։

Այդ բոլորից երևում է, որ արհեստների մի քանի ճիւղերը զարգացած են եղել խալդերի մէջ։

Ինչպէս այդ ժամանակուայ բոլոր ազգերը՝ խալդերն ևս բազմաստուածեան էին՝ ընութապաշտ։ Գլխաւոր աստուածը համարւում էր Խալդի կամ Հալդի, որի անունով էլ ամբողջ ազգն էր կոչւում. նա ազգի պաշտպանն էր։ «Այս աշխարհի տէր՝ Խալդի աստծուն . . .» (նուիրաբերում կամ դիմումն), այսպէս են սկսւում համարեա բոլոր արձանագրութիւնները։ Թագաւորներն այդ արձանագրութիւնների մէջ իրանց ազգն անուանում են «ազնիւ խաղ'դիացիք»։ Օդի և կայծակի աստուածն էր Տէյբասը և արեգակինը՝ Արգինիսը։ Այդ երրորդութիւնը կառավարում էր ամբողջ տիեզերքը։

1920 7
1286
1369
ՀՍՍՀ Գ. Մատենադարան
БИБЛИОТЕКА
Вл-Т Волгоградск. АН Арм. ССР

II.

Ասորեստանցիների արշաւանքներն ստիպում են միանալ խալդերի մանր թագաւորութիւններին. Արամէ միապետ Ուրարդուի. նրա արշաւանքները. Սարդուրի Բ. (Սէդուրի). Ասորեստանի գերիշխանութիւնը։

Քրիստոսից առաջ՝ ԺԵ-րդ դարուց սկսած՝ մի մրցումն է սկսւում Բաբելոնի և նոր կազմակերպուող Ասորեստանի մէջ՝ առաջնութեան համար։ ԺԲ-րդ դարում ասորեստանցիներին յաջողւում է գերիշխանութիւն ձեռք բերել ինչպէս Բաբելոնի, այնպէս և հարեան երկրների վրայ։ Ծանր էր այդ գերիշխանութիւնը հպատակների համար։ Ասորեստանի աշխարհակալները, ինչպէս իրանք պատմում են իրանց տարեգրութիւնների մէջ, ամենաանխիղճ կերպով էին վարւում յաղթուածների հետ. ամբողջ ցեղերով գաղթեցնում էին հայրենիքից և բնակեցնում Նինուէի շրջակայքում ու Միջագետքի այլ և այլ կողմերում, որոնք բանում էին իրրև ստրուկներ. նրանք իրանց աշխատանքով ճոխացնում ու պայծառացնում էին Նինուէն և նրա արքաների ապարանքները։ Նինուէացիների բազդաւորութիւնն ու բարօրութիւնը հիմնուած էր ուրիշների դժբաղդութեան վրայ։ Յաճախ էլ ամբողջ ցեղերով ջնջւում էին։

«Ես,-ասում է Ասուրնազիրհարալ Ասորեստանի թագաւորը,-քաղաքի (իր դէմ ապստամբած) գլխաւոր դռների առաջ պատ կանգնեցրի։ Ես հրամայեցի մորթազերծանել ապստամբների պարագլուխներին և նրանց մորթով պատել ամբողջ պատը. նրանցից մի քանիսը կենդանի կերպով թաղուեցին պատի մէջ, իսկ միւսները կամ խաչուեցին և կամ ցցի հանուեցին պարբսպի երկարութեամբ։ Շատերին մորթազերծ արին իմ ներկայութեամբ։ Ես հրամայեցի նրանց գլուխներից պսակներ դարսել և դիակներից շղթաներ հիւսել. . . Ես երկու հոգուց մէկին սպանում էի . . . Աւերակների տեսքը միայն կարողանում է պայծառացնել ճակատս. պայրոյթս յագեցնելուց յետոյ եմ միայն բաւականութիւն զգում»։

Ասորեստանի մի ուրիշ թագաւորի՝ Ասուրբանիպալի պալատում հետևեալն է նկարուած. խնջոյք է. թագաւորը սեղան է նստած շքեղ գահաւորակի վրայ. նրա մօտն են իր հարեմի կանայք. ծառի ճիւղից կախուած է նրա թշնամու գլուխը։

Աշխարհակալական ձգտումներն ստիպեցին Ասորեստանի միապետներին մտնել իրանց հիւսիսային հարևան՝ Նայիրի երկիրը։ Այդ ժամանակ Ուրարտուն մի ամբողջական պետութիւն չէր կազմում, այլ մանր իշխանութիւններից բաղկացած երբեմն թշնամի բանակներ էին. սակայն նրանք բաւականին ուժեղ էին. այնպէս որ երկար ժամանակ Ասորեստանի թագաւորները չէին կարողանում երկրի ներսը մտնել։

Առաջինը Ասուրնազիրհաբալն էր, որ օգտուելով հարևանների բաժան-բաժան գրութիւնից Քր. առ. 879-870 թ. արշաւեց Նայիրի վրայ։ Նա գրաւեց երկրի արևմտեան մի մասը, որտեղից ստանում էր տուրք՝ գինի, կենդանիներ և պղինձ։

Ասորեստանի թագաւորները մի անգամ ծանօթանալով այդ հարուստ երկրի հետ, չցանկացան ձեռք վերցնել և դրա համար ամեն զոհողութիւն յանձն էին առնում, միայն թէ նուաճած երկիրը հպատակութեան մէջ պահեն։ Սակայն նրանց ընչաքաղցութիւնը և բարբարոսութիւնը միայն ատելութիւն կարող էին ստեղծել հպատակների մէջ։ Այդ է պատճառը, որ նուաճած երկրները շարունակ ապստամբութեան դրօշակ էին պարզում այդ բռնակալների դէմ։

Ասորեստանի արշաւանքները եւ նրա քաղաքական ձգտումները ստիպեցին Ուրարտուի բազմաթիւ ու անչաս թագաւորութիւններին միանալ մի միասնեայ իշխանութեան տակ։

Քաղաքական այդ յեղաշրջումը կատարուեց Քր. առ. Թ. դարում։ Շարժման գլուխ անցաւ բուն Ուրարտուի (Արարատեան երկրի) թագաւոր քաջ Արամէն։ Նա միացրեց հարաւային և արևմտեան երկրները, Բիայինայի նահանգը և Արանիասի ամբողջ աւազանը։ Նա կրում էր «ամբողջ Նայիրի երկրի թագաւոր» տիտղոսը։

Նինուէի Ասսուրբանիպալ թագաւորն այնքան էր վախենում Ուրարտուի թագաւորութիւնից, որքան և Դամասկոսից։ Դա նշան է, որ երկրի ոյժերը կենդրոնացել են։

Հիւսիսային հարևանների այդպիսի քաղաքական միութիւնը մեծ անհանգստութիւն է պատճառում Ասորեստանի թագաւորներին, և Ասսուրբանիպալն ու նրա յաջորդ Սարգոնասար Բ. մի քանի անգամ արշաւում են Ուրարտուի վրայ։ Արամէն ոչ միայն այդ արշաւանքների առաջն է յաջողութեամբ առնում, այլ և Ասորեստանի հպատակ կորդիներին (քրդերը) և Եփրատի արամէներին (ասորիները) ապստամբեցնում է, որոնք դուրս են գալիս հպատակութիւնից՝ նրա շնորհիւ։

Այս յաջողութիւններից խրախուսուած ուրարտցիները պաշտպանողական դրութիւնից անցնում են յարձակողականի, և Արամէի յաջորդներին է մնում իրանց տիրապետութիւնը տարածել դէպի հարաւ՝ մինչև Նինուէն, դէպի արևմուտք, արևելք և հիւսիս։ Դրա համար նրանք ունէին բաւականաչափ ոյժ և շրջակայ մանր ցեղերի համակրութիւնը։

Վերջին ժամանակներս գտնուած արձանագրութիւնները հաստատում են, որ Ուրարտուի թագաւորները Ասորեստանի թագաւորների մրցակիցներն էին հանդիսանում՝ ամբողջ աշխար-

հին (Ասիական) տիրող իրանց ազդումով, սակայն նրանք մեզանից չեին բարբարոսական մեջ:

Արամէն՝ շնորհիւ իր քաջութիւնների ազգային հերոսների շարքն անցաւ. երգիչները իրանց երգերում նրա հերոսութիւնները գովաբանեցին: Յետակայում, երբ հայերը բնակուեցին այդ երկրում, իւրացրին նրա մասին եղած աւանդութիւնները:

Մ. Խորենացին բերում է այդ աւանդութիւնը.

—Արամի քաջութիւնների և յաղթական պատերազմների մասին շատ բաներ են պատմուում. նա ընդարձակեց հայերի սահմանները դէպի ամենայն կողմ. նրա անունով էլ բոլոր ազգերը մեր աշխարհն անուանեցին, ինչպէս օր. յոյները՝ Արմին, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիք:

Սա աշխատասէր ու հայրենասէր մարդ լինելով՝ աւելի լաւ էր համարում մեռնել հայրենիքի համար, քան թէ տեսնել թէ ինչպէս օտարների որդիքը հայրենի սահմաններն են կոխում. նա լաւ էր համարում իր հարազատների արիւնով օտարածիններին տիրել:

Այս Արամը նեղուելով իր շրջակայ ազգերից՝ ժողովեց իր քաջ մարդկանց, ազնուականների բազմութիւնը, այլև նրանց, որոնք կարող էին լաւ տէր բանեցնել, ժողովեց երիտասարդներին ու կռուի մէջ յաջողակներին և սրատեսներին՝ մօտ յիսուն հազար մարդ: Նա պատահեց մեղացի երիտասարդներին, որոնց առջևորդում էր Նիւքար անունով մէկը՝ Մադէս կոչուածը, որը մի

հզաբա ու պատերազմասէր մարդ էր. նրանք հանդիպեցին Հայոց սահմանների վրայ: Նա (Նիւքարը) Հայոց սահմանների վրայ յարձակուելով երկու տարի ծառայեցրել էր: Արամը արևածագից առաջ յանկարծակի յարձակուելով նրա վրայ՝ կոտորեց նրա ամբոխի բազմութիւնը և իրեն Նիւքար Մադէսին գերելով՝ բերաւ Արմաւիր և աշտարակի ծայրին երկաթէ մեխ խփեց ճակատին ու հրամայեց պարսպից կախել՝ 'ի տես անցորդների և եկողների. իսկ նրա երկիրը՝ մինչև Զարասպ լեռը իրեն հպատակեցրեց:

Այս նոյն Արամը արևելքում ճակատելուց յետոյ արշաւեց դէպի Ասորեստանի կողմերը նոյն զօրքով. այնտեղ էլ գտաւ իր երկիրն անհանգստացնող մի անձն՝ քառասուն հազար զինուած հետեակներով ու հինգ հազար հեծեալներով, որի անունն էր Բարշամ. նա հսկաների ցեղից էր: Նա մեծամեծ հարկերով սատակեցուց էր ամբողջ շրջակայքը: Արամ սրա հետ ճակատելով՝ յաղթեց, հալածեց կորդուների միջով մինչև Ասորեստանի դաշտը՝ նրանցից շատերին կոտորելով. իսկ Բարշամը պատահելով իրանից առաջ անցած զինակիրներին՝ սպանուեց: Ասորեստանի դաշտերի մեծ մասը Արամը նուաճեց և երկար ժամանակ հարկի տակ դրաւ:

Այդտեղից շարժուելով դէպի արևմուտք՝ քառասուն հազար հետեակներով և երկու հազար հեծեալներով հասաւ մինչև Կապադովկիայի կողմերը՝ այն տեղը, որ այժմ կոչուում է Կեսարիա: Նա պատահեց Պայապէս Բաղիա ափանին և պատերազմեց. նա բռնապետ էր երկու ծովերի՝ Պոնտոսի և Ովկիանոսի (Միջերկրականի)միջև գտնուած երկրների վրայ: Արամ զարկեց նրան և փախցրեց Ասիական ծովի կղզիներից մէկը: Նա շատ անբնակ երկրներ՝ մինչև իր երկրի սահմանները

ընակիչներով լցրեց։

Արդ՝ այսպէս հզօր և անուանի էր նա, որի անունով և մինչև այսօր, ինչպէս ամենքին յայտնի է, մեր շրջակայ ազգերը մեզ անուանում են։ Շատ ուրիշ քաջութեան գործեր էլ է կատարել նա, սակայն բաւական է և այսքանը։

Այս պատմութիւնը ոչ թէ բուն մատեանում է գտնուել, այլ, ինչպէս Մար Աբաս Կատինան է պատմում, գուսանական երգերից է ժողովուել և արքունի դիւանում պահուել։

Արամէին յաջորդում է Սարդուրի Բ. (Վանի արձանագրութիւնների համաձայն Սէդուրի), որը շարունակում է հօր նուաճողական արշաւանքները։ Ասորեստանի միապետները սաստիկ անհանգստանում էին ուրարտցիների հզօրանալովը. դրա համար էլ անընդհատ մէկը միւսի յետևից արշաւանքներ են կազմակերպում՝ սկսած 845—807 թ. Ք. առ.։ Այդ արշաւանքների ժամանակ մեծ մասամբ ջնաջուում են Ուրարտուին հարևան երկրները և մասամբ Նայիրի երկիրը։ Սակայն ասորեստանցիների այդ արշաւանքները, ոչ էլ նրանց գործած անգթութիւնները ընկճած ժողովուրդների վերաբերմամբ, չեն կարողանում երկիւղ ներշնչել Ուրարտուին. նա աւելի կորովով է շարունակում իր դիմադրութիւնը

և առաջխաղացութիւնը արժանաւոր թագաւոր Սարդուրիի առաջնորդութեամբ։ Այդ յամառութիւնը ցնցում է ամբողջ Ասորեստանը։ Սարդուրին յետ մղելով ասորեստանցիներին՝ ապըստամբեցրեց բոլոր արամէական ժողովուրդներին, որոնք կրկին նուաճուել էին, այլ և միւս հպատակներին։ Երկաթ արշաւանքներից յետոյ միայն Ասորեստանը կարողացաւ իր տէրութեան մէջ գտնուած ժողովուրդների ապստամբութիւնները ճնշել և պաշտպանուել Արամէական ժողովուրդների դէմ։ Այնուհետև Ասորեստանը նորանոր արշաւանքներ կազմակերպելով կարողացաւ երկաթ արշաւանքներից տկարացած Նայիրի երկիրը մտնել և 300 քաղաք կործանել, որից յետոյ Ուրարտուի այդ մասը ստիպուած է լինում ճանաչել նրա գերիշխանութիւնը։

Սակայն այդ գերիշխանութիւնը լոկ զինադադար էր, որովհետև Ուրարտուն պատրաստւում էր նորանոր ոյժերով խորտակելու բնաջնջել Ասորեստանի լուծը։ Մի կողմից շրջապատուած բարքերի տէր, հպատակների արիւնով յղփացող ասորեստանցիները, միւս կողմից պարզ, հզօր, ազատասէր, թէ իրանց և թէ հարևանների անկախութեանը ձգտող ուրարտցիները։

Ասորեստանը սարսափի ճնշման տակ ձգտում էր ձուլել իր մէջ ընկճուած հպատակներին։ Այդ

հանգամանքը մանաւանդ շատ մանր ցեղերի միացումը էր Ուրարտուի թագաւորների դրօշակի տակ:

III.

Ուրարտուի կրկին հզօրանալը. Իսպուինիս և Մենուաս. սրա յաղթական պատերազմները և երկիրը բարեկարգելը. Արգիշտիս. նրա յաղթութիւնները և Ուրարտուի գերիշխանութիւնը:

Շնորհիւ անընդհատ արշաւանքների՝ պատերազմական ոգին, քանի գնաց, զարգացաւ ուրարտցիների մէջ. նրանք պաշտպանողական դրութիւնից անցան յարձակողականի, և նրանց թագաւորները իրանց հերոսութիւններով հռչակուեցին հարևան ազգերի մէջ: Երբ մանր և ընկճուած ազգութիւնների համար պարզուեց Ասորեստանի քաղաքականութիւնը, միւս կողմից Ուրարտուի թագաւորների ապատասէր ոգին և դաշնակիցներին ու հպատակներին ցոյց տուած հովանաւորութիւնը, այն ժամանակ հրապարակի վրայ դրուեց հետևեալ հարցը. Ասիայի պետութիւնների մէջ ում տալ առաջնութիւնը. Ասորեստանին՝ թէ՞ Ուրարտուին: Ասորեստանն աւելի քաղաքակրթուած էր և հզօր, սակայն նրա

բարեկեցութիւնը ստեղծում էին հազարաւոր իրանց հայրենիքը բռնի կերպով թողած և գաղթած սարուկ ժողովուրդներ։ Ուրարդցիները որոշ չափով իւրացրել էին իրանց հակառակորդների քաղաքակրթութիւնը. աշխատասէր և ընդունակ ժողովուրդ էին. նրանց մէջ բացակայում էր մարդկային արժանապատուութիւնը նուազեցնող սրկոտութիւնը։ Պարզ է՝ մանր ազգութիւններին ձեռնտու էր վերջիններիս դրօշակի տակ մրցանել։ Մի բան միայն խանգարում էր. երկրի դիրքի շնորհիւ բազմաթիւ մանր և անջատ թագաւորութիւն կոչուող իշխանութիւններն էին, որոնք յաճախ դէպքերում իրար թշնամի էին, հարկաւոր էր մի հզօր և կարող բազուկ և արտաքին հարկադրող պատճառ, որպէսզի միութիւն առաջ գար նրանց մէջ։

Ը.-րդ դարու սկզբներին արտաքին հանգամանքներն ստիպեցին անջատ իշխանութիւններին միանալ։

Ասորեստանի միապետներն ամեն զոհողութիւն յանձն էին առնում այդ միութիւնը տապալելու և նրանց վտանգութիւն ներշնչող Ուրարդցիների ոյժը ոչնչացնելու։ Այդ միութեան գլուխն անցաւ Սարգուրի Բ-ի յաջորդ Իսպուինիս։ Նա տեսնելով երկրի հարաւից սպառնացող վտանգը, իր աթոռը փոխադրեց հարաւային Դուսպանա քաղաքը. ըստ երևութին նա վստահ էր

հիւսիսային իշխանութիւնների հաւատարմութեան վրայ։ Այդ օրուանից միացեալ իշխանութիւնները կոչուեցին մի ընդհանուր անունով Ուրարդու։

Իսպուինիսի որդի Մենուասը, որ գահակից էր հօրը՝ օգտուելով այդ միութիւնից Ուրարդուի զօրութիւնը իր գագաթնակէտին հասցրեց, որով մեծ հոգս պատճառեց Ասորեստանին։ Մենուասը 'ի նշան իր տարած յաղթութիւնների երկրի զանազան կողմերում կոթողներ կանգնեցրեց, որոնց վրայ փորագրուած սեպաձև արձանագրութիւնները պատմում են նրա տարած յաղթութիւնների մասին։ Այդպիսի յաղթական կոթող գտնուած է հիւսիսային Պարսկաստանում, Նինուէի հիւսիսային-արևելեան կողմում, Վանայ ժայռի վրայ, Երզրումի մօտերքում, ուր շինել է և պալատ, Արմաւիրում՝ Արարատի հիւսիս-արևմուտքում։ Այդ բոլորից երևում է, որ նրան հպատակւում էին Ուրմիոյ լճի, Կորդիքի, Վերին Զաւի գաւառները, Ստորին Զաւը, Խուբաշխան՝ Զագրոշի լեռներում (Ուրմիոյ և Նինուէի միջև), Մելիտինը, Կարիէնների երկիրը, Մաննան, Էտիաուսը՝ Արարատի հիւսիսային կողմում։ Այդ տեղերում շինել է քաղաքներ, դղեակներ և գաղթականութիւններ է հաստատել։ Նրա երկիրը իր տարածութեամբ հաւասար էր Ասորեստանին, իսկ ազգաբնակութեամբ՝ աւե-

լի էր։

Ասորեստանի դէմ մրցումը և հպատակների ու հարևանների աչքում առաջնակարգ դիրք գրաւելը սիպեցին Մինուասին չբաւականանալ արտաքին յաղթութիւններով և երկրի ընդարձակութեամբ, այլ ներքին կարգ ու կանոնով և քաղաքակրթութեամբ ևս աշխատեց վայելել և առաջնակարգ դիրք գրաւել. դրա համար նա մացրեց իր երկրի մէջ այն բոլորը, ինչ որ լաւ էր՝ ի հարկէ փոխ առնելով իր հակառակորդից։ Զարդացրեց արհեստները, բարեփոխեց կառավարութեան ձևը, շնորհիւ իր գրաւած դիրքի՝ բազմաթիւ արհեստաւորներ բերել տուաւ Ասորեստանից և իր մայրաքաղաք Դուսպանան թէ ամրացրեց և թէ զարդարեց զանազան շինութիւններով։ Երկրի հարաւային կողմով՝ Նայիրի սահմանագծով մի շարք բերդեր ու ամրոցներ կանգնեցրեց, որով միանգամայն խափանեց Ասորեստանի մուտքը։

Այդպիսի հզօրութեան էր հասել Ուրարդուն, երբ 784 թ. Քս. առ. մեռաւ Մինուասը՝ գահը թողնելով իր արժանաւոր և անվեհեր որդի Արգիստիսին (Արգիշտիշ)։ Սա իւր քաջութիւններով այնպիսի հռչակ ստացաւ, որ յետագայ թագաւորները նրա անունով Արգիշտիշեան կոչուեցին։ Արգիստիս իր փառաւոր յաղթութիւնների և գործերի պատմութիւնը փորագրել

տուաւ Դուսպանայի (Վանայ) ժայռի վրայ։ Այդ արձանագրութիւնների մէջ պատմուած է, որ նա իր թագաւորութեան առաջին տարիներում 14 պատերազմ է մղել. ամենից առաջ նա յաղթեց Արաքսի հիւսիսում ապրող լեռնական ժողովուրդներին, ապա Ուրմիոյ լճի արևմտեան և հիւսիս-արևելեան ժողովուրդներին։ Ասորեստանցիք փորձեցին նրա վրայ յարձակուել, սակայն Արգիստիս մի կատաղի ճակատամարտով յետ մղեց նրանց և վերջիններս չկարողացան նրա առաջխաղացութեան առաջն առնել։ Այդ պատերազմները տեղի ունեցան 784-782 թ. թ.։

Սաղմանասար Դ. 782 թ. Բաբելոնի արամէներին ընկճելուց յետոյ դէնքերն ուղղեց Ուրարդուի դէմ. պատերազմը երկար տևեց. կեանքի և մահուան խնդիր էր վճռում։ Ասորեստանի համար պարտութիւնը մահ էր. այդ բանից կըխրախուսուէին իր հպատակները և ապստամբութեան դրօշակ կըպարզէին, իսկ իր գոյութիւնն ամբողջապէս կախուած էր նրանց հպատակութիւնից։

«Արգիստիսին իսկապէս յաջողուեց և իր առաջադիմութիւնը, թէև միշտ դանդաղ էր, երբէք կանգ չէր առնում»։ Այդ յաղթութիւններից յետոյ Արգիստիս Ասորեստանի վերիշխանութեան տակ գտնուած հետատական իշխանութիւնները հանեց մինչև Միլեային, յետոյ

780 թ. Բիթլիս գեսի աւազանում կատաղի պատերազմ մղեց, այնպէս որ 779-ին նա շնորհակալութիւն յայտնեց իր ատաուածներին, որոնք Ասսուրի քաղաքները և բնակիչներին իր ձեռքն էին մատնել։

Առաջաւոր Ասիայում խոշոր յեղաշրջում կատարուեց. գերիշխանութիւնը Ասորեստանից անցաւ Ուրարտուին։

Ասորեստանցիք մի քանի անգամ փորձեցին յետ խլել Ուրարտցիներից առաջնութիւնը, սակայն Արգիստիս 776-ին ապա 774-ին յետ մղեց այդ վերջին յարձակումներն էլ և նրանց քշեց դէպի Ամանուսը (հիւսիսային Ասորիքում), որպէսզի նրանց բացակայութիւնից օգտուելով Ուրմիոյ լճի հարաւային և արևելեան կողմերի բոլոր երկրներն իրան ենթարկի։

Այդպիսի հզօրութեան էր հասել Ուրարտուն Արգիստիսի ժամանակ. դրա համար էր, որ յետագայ թագաւորներն իրանց Արգիստիսեան կամ Արգիշտիշեան են անուանում 'ի նշան պարծանքի. օր. վերջին թագաւորներից մէկը՝ Ռուսաս Բ։ այսպէս է սկսում իր մի արձանագրութիւնը. «Այս աշխարհի տէր Խալդի Աստծուն. այս կոթողը Արգիշտիշեան Ռուսան շինել տուաւ ազնիւ խաղդիացիների համար։ Ռուսա Արգիշտիշեան ասում է . . . »։

Այդպիսի մի հերոսի մասին անպոյման

ժողովրդական զուսանները զովասանական երգեր պէտք է հիւսէին և ժողովրդի մէջ աւանդաբար պէտք է պահպանուէին նրա քաջութիւնների մասին տեղեկութիւններ։ Եւ, յիրաւի, Մովսէս Խորենացին բերում է Արտաշէս աշխարհակալ անունով մի թագաւորի մասին տեղեկութիւններ, որոնք շատ կէսերով նման են Արգիստիսի գործերին։

Ուրարտուի մանր իշխանութիւնները միայն հարկադրական արտաքին հանգամանքներից ստիպուած միացել էին մի զրօշակի տակ. քանի իրանց գլխին կախուած էր Ասորեստանի վտանգը, նրանք հեշտութեամբ միաբանեցին Ուրարտուի հետ և մինչև իսկ մտան նրա գերիշխանութեան տակ. սակայն երբ Ասորեստանի վտանգն անցաւ և առաջնութիւնն անցաւ Ուրարտուին, այն ժամանակ նրանք այլևս կարիք չզգացին միաբան գործելու, սկսեցին գլուխ բարձրացնել։ Նրանք միաբանելու համար ներքին կապ չունէին. նրանց միտքը թոկ ձեւական էր, արտաքին։ Այդ բանին նպաստում էր երկրի դիրքը եւ կառավարութեան եղանակը։

Ուրարտուն քանի հզօր էր, չէր կարող իր իրաւունքներից հրաժարուել, դրա համար էլ Արգիստիս, Ասորեստանին վերջնականապէս ընկճելուց յետոյ՝ ստիպուած եղաւ իր երկրի ներքին ապստամբութիւնները զսպել։ Այսպէս՝

771-ին Մաննայի ոյժը կոտրեց, Եդիաուսին ճանաչել տուաւ իր պարտականութիւնները. սա ապստամբների գլուխն էր անցել. Իշքիկուլուսը (Ալէքսանդրապոլի գաւառը) և դրացի նահանգներն աւարի ենթարկեց։ Այսպիսով Արդիստիսին քիչ աշխատանք չէր հարկաւոր իր թագաւորութեան ժողովուրդներին ընկճելու։

Այսպիսի վառաւոր թագաւորութիւնից յետոյ Արդիստիս մեռաւ 760 թ. Ք. առ.։

VI.

Սարդուրի Գ. Ասորեստանի կրկին հզօրանալը և նրա գերիշխանութիւնը. Ռուսաս Բ. և Ուրարդուի տկարանալը. խալդերի իշխանութեան անկման նպաստող հանգամանքները. խալդերի քաղաքակրթութեան մնացորդները։

Արդիստիսին յաջորդեց որդին Սարդուրի Գ., որը հօր կենդանութեան ժամանակ դեռևս մասնակցում էր նրա արշաւանքներին և նուաճումներին։ Ուրարդուն Սարդուրի Գ-ի ժամանակ ևս շարունակում էր գերիշխողի դերի մէջ մնալ։

Տեսանք՝ թէ ինչպէս արտաքին հարկադրիչ հանգամանքների պատճառով Ուրարդուի մանր թագաւորութիւնները միաբանեցին. Ուրարդուի հզօրութիւնն ու յաջողութիւնը այդ միութիւնից էր կախուած. սակայն Սարդուրի Գ. բոլորովին հոգ չտարաւ մի հաստատուն կապ ստեղծելու նրանց մէջ. մինչդեռ Ասորեստանը 774-ից սկսած՝ շնորհիւ երկար զինադադարի կարողացել էր կազդուրուել, կարգաւորել իր ոյժերը և Ասորիքին ու Պաղեստինին տիրել։ Խրախուսուած այդ յաջողութիւնից՝ Ասորեստանի Ասսուրնիրարի թագաւորը կամեցաւ

կամաց-կամաց կորցրած երկրների մի մասը յետ խլել. այդ նպատակով նա արշաւեց Ասորիքի հարեան Միլետէնի իշխանութեան վրայ՝ ցանկանալով այդ երկրի մի մասին տիրել։ Սակայն ՝ի զուր. Սարդուրի Գ. արդէն տիրել էր այդ կողմերին, այնպէս որ կարճ ժամանակից յետոյ Եփրատի և Միջերկրականի միջև տարածուած բոլոր արամէներն ու հետտիները հնազանդուեցին Սարդուրի Բ-ին։

Ասորեստանը տեսաւ, որ Ուրարդուի դէմ կռուել միանգամայն անհնարին է. նախ նա դուրս է գալիս իր դաշնակիցներով և երկրորդ՝ այդ երկրի լեռնոտ դիրքը և անմատչելի բերդերը միանգամայն խանգարում են պատերազմի յաջող ընթացքին։ Դրա համար Տիկլատպալասար թագաւորը մտածեց նախ յարձակուել Ասորիքի վրայ՝ տիրել, ապա թէ Սարդուրի Գ-ին դուրս բերել բուն երկրից և ճակատամարտ տալ. այդպէս էլ արաւ. երբ Սարդուրի յանկարծակիի եկած գնաց իր երկրի արևմուտքը պաշտպանելու, Տիկլատպալասար անսպասելի կերպով ընկաւ նրա վրայ և մեծ ջարդ տուաւ։ Ինչպէս այդ թագաւորն է իր տարեգրութիւնների մէջ պարծենում, Սարդուրին թողեց պատերազմի դաշտում թէ իր բանակի կարգ ու սարքը և թէ 73000 մարդ՝ մի մասը գերի բռնուած, միւս մասը՝ սպանուած։ Տիկլատպալասար տեղն ու

տեղն այրեց յաղթուած թագաւորի կահ-կարասիքը՝ բացի անկողնուց, որ նուիրեց իր Իշթար աստուածուհուն։

Սարդուրիսի այս պարտութիւնը և նրա անգործութիւնը՝ դաշնակիցներին միացնելու գործում, կրկնակի վնասաբեր եղան Ուրարդուի համար։ Նրա հմայքն ու փառքը մեծ մասամբ ստեղծուել էին նրա թագաւորների տարած յաղթութիւններով ու իր հզօրութեամբ. սակայն այս պարտութիւնը հիասթափեցրեց դաշնակիցներին ու հպատակներին, որոնք իրանց հաւատը կորցրին դէպի խալդերի զօրութիւնը։ Իսկ ասորեստանցիք, ընդհակառակն, նրան ընկճելու միջոցը միանգամ գտնելով՝ այլևս կանգ չառան, որպէսզի թշնամին կազդուրուի, այլ մէկը միւսի յետևից հարուածներ իջեցրին թէ դաշնակիցների և թէ նրա գլխին. մինչև բոլորովին ջախջախեցին, թէև ջախջախուեցին և իրանք՝ ասորեստանցիք։

Տիկլատպալասար 739-ին գրաւեց Նայիրի մի մասը և այնտեղ բերդ շինեց. յետոյ աւելի հիւսիս դիմեց՝ դէպի Ուրարդուի հարաւային մայրաքաղաք Տուսպանան։ Սակայն նա չկարողացաւ այդ անմատչելի բերդը գրաւել։

Այնուհետև ոչ Սարդուրիս Գ. և ոչ նրա յաջորդները չփորձեցին Ասորեստանին անհանգիստ անել իրանց յարձակումներով, այլ միացին

լոկ պաշտպանողական դրութեան մէջ. դերիշխանութեան մասին մտածելն անգամ աւելորդ էր։ Երկարատեւ պատերազմները երկիրը խայտաղէտ եւ ժողովրդին ուժասպառ եին արել. նա ծարաւի էր խաղաղութեան։

Այդ արշաւանքների շնորհիւ ժողովուրդը երկար ժամանակ կորուած լինելով խաղաղ աշխատանքից և զինուորական բանակի վերածուելով՝ թէ մեծամեծ կորուստներ էր ունեցել, մանաւանդ վերջին ճակատամարտերում, թէ տընտեսապէս ուժասպառ էր եղել և թէ կողոպտել ու վայրենացել։ Նրա ճեացորդները միայն յիշում էին վաղեմի փառքը, որն այնպէս արագ անցաւ, իսկ մտածել երկրի մէջ մեռնող քաղաքակրթութիւնը վերակենդանացնելու՝ նրանք անկարող էին։

Այդպիսի պայմանների մէջ Ասորեստանի գահը բարձրացաւ Սարկոն Բ.։ Սա տեսնում էր՝ քանի Ուրարտուն կենդանի է, իր հպատակները միշտ էլ անհանգիստ են. նրանք ոտիթը բաց չեն թողնում ապստամբութեան դրօշակ բարձրացնելու։ Իսկ Ուրարտուն իր անյաջողութիւններից խրատուած սկսեց նոր դաշնակցութիւն կազմելու վրայ մտածել։ Ժողովրդի յիշողութեան մէջ դեռ վառ էին Մենուասի և Արգիստիսի յաղթական արշաւանքները. Ուրարտուն անցեալի փառքով ոգեորում էր ընկճուածներին,

իսկ վերջիններս տեսնում էին՝ թէ որպիսի սխալ գործեցին ուրարտցիներին մենակ թողնելով։ Ասորեստանը վճռել էր՝ կամ ձուլել այդ ցեղերին, կամ մինչև վերջին մարդը կոտորել.

Եւ Ուրարտուն մտածեց իր հարևանների հետ ծածուկ զինուորական դաշն կապել՝ ընդդէմ Ասորեստանի։ Այդ դաշնակցութեան հեղինակ և պարագլուխ հանդիսացաւ Ուրարտուի Ռուսաս Ա. թագաւորը (730 –714)։ Սարկոն քնած չէր. նա տեսնում էր այն տենդային շարժումը, որ տեղի էր ունենում մաննայեցիների (Զիկարտուի լեռներում), հատախների (Ասորիքում) և Ուրարտուի միջև։ Սկզբում Ռուսասին յաջողուեց Ասորեստանի սահմանի վրայ գտնուած շատ բերդեր հանել նրա հպատակութիւնից. միւս կողմից գրգռեց սկիւթացիներին և կիմմերներին՝ արշաւել Ասորեստանի վրայ։ Սարկոն վերջիններիս արշաւանքի առաջն առաւ։ Մինչ Ռուսաս ապատում էր աւելի բարեյաջող հանգամանքների, որպէսզի իր ծրագիրն իրագործէ, Սարկոն իր նախորդի քաղաքականութեանը հետևելով նախ յարձակուեց Մաննայի վրայ, որ արդէն յարել էր Ռուսասի կազմած դաշնակցութեանը, և աւերեց, ապա ճեացած դաշնակիցներին մէկը միւսի յետևից ընկճելով՝ նրանց բերդերը գրաւեց և յետոյ ընկաւ Ռուսասի յետևից։ 714 թուին մի կատաղի պատերազմում Սարկոն յաղ-

թեց Ռուսային և նրա երկրի մի մասն աւերելով՝ Խալդի աստծուն սրբազան անօթներով գերեց։ Ռուսաս լսելով Խալդի աստծու գերութիւնը՝ լքուած բոլոր դաշնակիցներից, պատուասիրութիւնից դաշունահար եղաւ և շունչը փչեց իր մեծամեծների ձեռքերի վրայ։

Չնայելով Ռուսասի ազետալի վախճանին և դաշնակիցների ընկճուելուն, այնուամենայնիւ Սարկոն չհամարձակուեց երկրի ներսը մտնելու և Ուրարդուն չհպատակուեց նրան։ Ռուսասի եղբայր Արդիստիս Բ. յաջորդելով եղբօրը՝ ասորեստանցիներին քշեց, սակայն զգալով երկարատև պատերազմների հասցրած վնասները և իր ուժերի չլսաուելը, հանդիստ թողեց նրանց, որը նոյնպէս ծարաւի էր խաղաղութեան։

Յետակայ տարիներում Ասորեստանը, տեսնելով որ ուրարտցիներին և նրա հարևաններին անկարելի է ձուլել, կրկին արշաւանքներ կազմակերպեց, որպէսզի միանգամայն աւերէ այդ երկրները։ Ուրարդուն այլ ևս չկարողացաւ առաջուայ թափով դիմադրել, որովհետև բոլորովին ուժասպառ էր եղել։

Ուրարդուն մի փոքրիկ անզօր թագաւորութիւն էր դարձել, որի թագաւորները՝ 'ի նշան հպատակութեան՝ դահ բարձրանալիս տեղեկացնում էին քայքայուող Ասորեստանի միապետներին։ Ուրարդուի ազգաբնակութիւնը բաւա-

կանաչափ նուազել էր. այնպէս որ նորանոր ազգեր մտնելով այդ երկիրը՝ առանց զէնքի դիմելու ազատ տեղ էին գտնում բնակուելու։ 714-685 թ. սկիւթացիները օգտուելով Ուրարդուի այդ դրութիւնից՝ հիւսիսային կողմից եկան և բռնեցին Արաքսի արևելեան աւազանը։

Ուրարդուի վերջին թագաւորները ոչ միայն արգելել չէին փորձում այդպիսի ներխուժումները, այլ, կարծես զգալով իրանց ժողովուրդների նուազելը՝ սիրով էին հիւրընկալում նրանց։ Վերջին թագաւորն Իրկուան էր 620-600 թ., որի ժամանակ հայերն էլ արևմուտքից մօտենալով ներս մտան Ուրարդուն և սկսեցին հետզհետէ զբաւել խալդերի բնակած վայրերը։

Մի ազգ, որ այդպիսի հզօրութեան էր հասել մի ժամանակ, անկասկած պէտք է ունենար և իր ուրոյն քաղաքակրթութիւնը, թէև շնորհիւ յաճախակի կրկնուող պատերազմների նա շատ քիչ ժամանակ կ'ունենար այդ ուղղութեամբ գործելու։ Եւ յիրաւի, երբ ճանապարհորդում ենք այդ երկրում, ուր երբեմն Ուրարդցիներն են ապրել, ամեն քայլափոխում պատահում ենք աւերակ քաղաքների ու բերդերի, որոնցից շատերը պատկանում են նրանց և աչքի են ընկնում իրանց ընորոշ ձևով և հմուտ վարպետութեամբ. որմնադրութիւնը յետ չէր

մնում իրանց հարևան և ախոյեան Ասորեստանից։ Բաւականին զարգացած էր բնեռագրութիւնը. մինչև այսօր մնացել են այնպիսի հսկայական կոթողներ՝ իրանց նուրբ արձանագրութիւններով, որոնք զարմանք են պատճառում. շնորհիւ այդ արձանագրութիւնների է, որ խալդերի մասին ճշգրիտ տեղեկութիւններ ենք ստանում։ Համաձայն դրանց՝ ներկայումս գործ ածուող շատ տեղերի անուններ խալդական են, օր. Մուշ, Արածանի, Արճէշ, Երևան, Գեղարքունի, Արամ, Վան են". դեռ, ով գիտէ, մեր ներկայ լեզուի մէջ որքան բառեր կըլինին։ Սրանից եզրակացընում ենք, որ այն ցեղերը, որոնք բռնեցին խալդերի տեղը, անկասկած իւրացրին և նրանց ստեղծած քաղաքակրթութեան մնացորդները և սովորութիւնները, այլև լեզուից բաւականաչափ պէտք է որ օգտուած լինին։ Նրանց քաղաքակրթութեան ամենափայլուն ապացոյցը Վան քաղաքն էր, որը շնորհիւ իր դիրքի կանգուն էր մնացել, երբ հայերը բնակուեցին նրա շրջակայքում, մինչդեռ միւս մայրաքաղաքները կամ բոլորովին կործանուած էին, կամ կիսակործան վիճակի մէջ էին։ Նրա շինութեան մասին այսպէս է պատմուում. Դուսպանան (Վանը) երկու մասից է բաղկացած. մէկը տարածուում է դաշտի մէջ՝ Ալաիսի ափին և լճի ուղղութեամբ։ Նա շրջապատուած է պարտէզներով և ծառուղիներով

(այժմ էլ Վանայ մի թաղը կոչւում է Այգեստան)։ Ամառը ժողովուրդը գնում է այդտեղ ուրախ կեանք անցկացնելու։ Այդ քաղաքը իր թիկունքով յենուում է մի կրային զանգուածի, որի պատերը ճեղքուածքներ և փորուած ծակեր ունին. կան նոյնպէս մինչև բարձրութիւնը հասնող այրեր։ Այդ բարձրաւանդակը իր ամենաբարձր մասում երեք յարկ ունի, որոնցից իւրաքանչիւրը միանգամայն կղզիացած է միւս երկուսից և կարիքի դէպքում կարող է ծառայել իբրև բերդ։ Սերնդից սերունդ Իսպուինիսը, Մենուասը և ինքը՝ Սարդուրիս Բ. աշխատել են անառիկ դարձնել այս բարձրաւանդակը։ Սա մատչելի է միայն արևմտեան կողմից, որտեղ մի տեսակ նեղ արահետ անդունդի վրայով աստիճանաբար ստորոտից բարձրանում է մինչև գագաթ։ Բարձրաւանդակը շրջապատուած է պարիսպներով և աշտարակներով, որոնք իշխում են ամբողջ երկարութեան վրայ. ապա յարկերից իւրաքանչիւրի վրայ բարձրանում են մի-մի միջնաբերդ, մի պալատ, տաճարներ, վանքատնոյներ, ուր հաւաքում էին այնքան զէնք ու պաշար, որ բաւական էին մի թշնամու համբերութիւնը հատեցնելու։

Մինչև այսօր Վան քաղաքում պարզ նկատելի են այդ շինութիւնների մնացորդները։

Խալդերը այդ բոլորի հետ հայերին յանձնեցին և իրանց կառավարութեան եղանակը։։

Ուրարտուի թագաւորները.

Արամէ	860—843 Բ. առ.
Լուտիպրիս . . .	843—835
Սարդուրիս Ա. . .	835—820
Իսպուինիս . . .	820—800
Մենուաս . . .	805—780
Արգիստիս Ա. . .	780—755
Սարդուրիս Բ. . .	755—730
Ռուսաս Ա. . . .	730—714
Արգիստիս Բ. . .	714—685
Ռուսաս Բ. . . .	685—675
Երիմենա . . .	675—670
Ռուսաս Գ. . . .	670—645
Սարդուրիս Գ. . .	645—620
Իրկուաս	620—600

Գ.

Հայեր

Մինչեւ Արտաշիսեան հարստութիւնը.

I.

Արիական ցեղերի ծագումը և տարածուելը. հայերի սկզբնական հայրենիքը. նրանց մուտքը Փոքր Ասիա. հայերը Փոքր Հայքում. կիմմերների և սկիւթացիների արշաւանքները. ազգային աւանդութիւն հայերի ծագման մասին։

Ամենահին ժամանակներում Հիմալայեան լեռների հիւսիս-արևմտեան կողմում՝ Պամիրի բարձրաւանդակի մօտ, ապրում էր մի խաշնարած ժողովուրդ, որ կոչւում էր Արիական ցեղ (հրամայող, արժանաւոր. արի՝ հայերէն նշանակում է քաջ)։ Նրանց պարապմունքը՝ խաշնարածութիւնը շատ վաղ ժամանակներից ստիպեց թողնել իրանց հայրենիքը և խմբերի բաժանուած թափառել զանազան ուղղութեամբ։ Այդ շրջանում նրանք իրանց գործիքները շինում էին քարից և փայտից. մետաղներից նրանց ծանօթ

էր միայն պղինձը, որից շինում էին զարդարանքներ։ Նրանք գիտէին կաւէ ամաններ շինել։ Իրանց հագուստը պատրաստում էին գազանների մորթուց, որ մաքրում էին քարէ քերիչներով և կարում ջիղերով։ Նրանց սայլերը ծառայում էին իբրև բնակարաններ, երբեմն էլ կաւից և փայտից էին կլոր խրճիթներ շինում. նրանց մէջ տեղը օճախն էր լինում, որից բարձրացող ծուխը դուրս էր գալիս դռնով. սակաւ դէպքերում էին գեղանափոր հիւղեր շինում։ Նրանք պաշտում էին բնութեան ահեղ երևոյթները։

Այդ ցեղի թափառաշրջիկ խմբերից մէկը ուղղուեց դէպի հարաւ և բռնեց Ինդոս գետի հովիտը. երկրորդ խումբն անցաւ դէպի հարաւ-արևմուտք և բռնեց Իրանի բարձրաւանդակը, իսկ մի աւելի ստուար մասը երկար ժամանակ թափառում էր Ռուսաստանի հարաւային տափաստաններում մինչև Կարպատեան լեռները։ Ինչպէս բոլոր թափառական և խաշնարած ժողովուրդները, սրանք էլ բաժանուում էին մանր ցեղերի։ Այդ ցեղերից յետակայում կազմուեցին յոյները, իտալացիները, կելտերը, գերմանացիները, փռիւգիացիները, արմինները (հայերը), թրակիացիներն ու իլլիրիացիները, որոնք ընդհանուր անունով կոչւում են *Հնդկա-Եւրոպական ցեղեր*։ Դրանց մէջ են մտնում և հնդիկներն ու պարսիկները։

Այդ ցեղերի լեզուների (աղգակցութիւն ցոյց տուող, կենդանիների և բոյսերի անուններ), հաւատալիքների և նախնական կեանքի պայմանների մէջ եղած նմանութիւնը այդ են ապացուցանում. այսինքն՝ որ նրանց սկզբնական հայրենիքը մէկ է եղել։

Մի քանի գիտնականներ կարծում են, որ Արիական ցեղերը ոչ թէ Ասիայից են եկել դէպի Եւրոպա, այլ, ընդհակառակն, Եւրոպայից են գնացել դէպի Ասիա։

Քրիստոսից քսան դար և դեռ էլ աւելի առաջ այդ ցեղերից մի քանիսը, որոնց մէջ և հայերն ու փռիւգիացիները անցան Կարպատեան լեռնաշղթան և բռնեցին Թեսաղիան և Մակեդոնիան։ Այնուհետև նոյն ճանապարհով մուտք գործող ուրիշ ցեղերի անընդհատ յարձակումներից աւելի և աւելի նեղուելով՝ հայերն ու փռիւգիացիները թողեցին Թեսաղիան, կտրեցին Եգէյեան ծովից մինչև Մարմարա հասնող ամբողջ ծովեզերեայ գաւառը, ապա այդտեղից էլ աւելի ու աւելի յառաջանալով դէպի արևելք հասան և բնակութիւն հաստատեցին այն բարձրաւանդակի վրայ, որի սահմաններն են հարաւային կողմից Տիգրիսի, հիւսիս-արևելքից Կուրի, իսկ արևմուտքից Ալիս գետի հովիտները։ Այստեղ հայերը բաժանուեցին փռիւգիացիներից և բնակութիւն հաստատեցին Ալիս գետի արևելեան հովտում՝

իրանց անունով այդ տարածութիւնն էլ կոչելով Հայաստան։ Այս վերջին տեղափոխութիւնը տեղի ունեցաւ Քրիստոսից տասն և մէկ դար առաջ։

Մի քանի դար շարունակ հայերը թափառում էին այդ կողմերում՝ թէ իբրև խաշնարած, ինչպէս իրանց հարևան հետտիտները (հիւքսոսներ) և թէ իբրև երկրագործ, ինչպէս իրանց միւս հարևան փռիւգիացիները։

Այդ դրութեան մէջ էին նրանք, երբ յանկարծ մի սոսկալի արշաւանք տեղի ունեցաւ Գիմմերական կամ Կիմմերցիներ կոչուող ցեղի կողմից։

Կովկասեան լեռների հիւսիսային կողմում վաղուց հետէ ապրում էին վայրենաբարոյ ցեղեր, որոնք ընդհանուր անունով կոչւում էին գիմմերցիներ։

Մօտաւորապէս Ը. դարու կէսերին Եւրոպայում երևան եկան նոր ցեղեր, որոնք գիմմերցիներին ստիպեցին նոր հայրենիք որոնել։ Նրանք անցան Դանուբ գետը, Բալկանները, ապա իրանց հետ միացնելով մի քանի այլ վայրենի ցեղեր ևս՝ անցան Փոքր Ասիա։ Նրանք կատաղի և պատերազմասէր մարդիկ էին։ Ամբողջ Փոքր Ասիային տէր դառնալուց յետոյ՝ նրանք մօտեցան հայերի բնակած երկրին։ Փռիւգիան դարձաւ նրանց առաջին զոհը. նրա վերջին թագաւորը (Մեղասը) թունաւորեց իրան

եղան արիւնով, որպէսզի կենդանի չընկնի նրանց ձեռքը։

Հայերը նեղուելով դրանցից՝ թողեցին իրանց երկիրը և կամաց-կամաց մօտեցան Եփրատին։ Մալաթիայում գտնուած Ուրարտուի Մինուաս թագաւորի մի արձանագրութեան մէջ առաջին անգամ յիշատակուած է «հայ» անունը։ Այդ հանգամանքն ապացուցանումէ, որ Ը. դարում հայերն արդէն խալդերի ազդեցութեան շրջանում էին։ Այդ տեղից էլ աւելի յառաջանալով՝ նրանք բռնեցին Արսիսա և Մուսասիր գաւառները՝ Արսանիասի հովտում։

Ե. դարում տեղի ունեցաւ մի նոր արշաւանք՝ սկիւթական ցեղերի կողմից, որոնց նախնական հայրենիքն Օքսոս գետի հովիտն էր։ Այս վայրենիների արշաւանքն էլ պակաս սոսկալի չէր։ Նրանք հեղեղեցին ամբողջ բուն Ուրարտուն՝ վերին Արաքսի հովիտը։

Ուրարտուի և Ասորեստանի թագաւորութիւնները, որոնք երկարատև պատերազմներից արդէն ուժասպառ էին, համարեա ջնջուեցին երկրի երեսից. քաղաքներն ու գիւղերը կրակի մատնուեցան, արտերը ոտնակոխ եղան, կենդանիներին ու մարդկանց կամ անխնայ կոտորում էին, կամ գերի վարում և այդ բոլոր աւերածութիւնները գործում էին միմիայն սարսափ տարածելու համար։ Որովհետև պատերազ-

մական գործին հմուտ չէին, ուստի խուսափում էին բերդեր պաշարելուց. իսկ եթէ տեղեկանում էին, որ քաղաքում մեծ դանձ կամ հարստութիւն կայ պահուած, խիտ շարքերով պաշարում էին, մինչև որ բնակիչները սովից ստիպուած անձնատուր էին լինում։

Սակայն կարճ ժամանակից յետոյ սկիւթացիների ոյժն սկսեց դէպի անկումն դիմել. անընդհատ արշաւանքները նրանց զօրքի թիւը նուազեցնում էին, և նրանց պետութիւնը նոյնպէս արագ անյայտացաւ, ինչպէս և արագ բարձրացել էր։ Մարաց Կիաքսար թագաւորը վերջին հարուածը հասցրեց նրանց։ Սկիւթացիների աւելի պատերազմասէր մասն անցաւ Կովկասեան լեռները՝ դէպի իր նախկին հայրենիքը, իսկ միւս աւելի խաղաղ մասը բնակութիւն հաստատեց Ուրարտուի արևելեան կողմում. դրանք յետակայում յայտնի դարձան «սակ» անունով, որի համար և նրանց բնակած գաւառը կոչուեց Սակաշէն կամ Շակաշէն (Ուտի գաւառի մի մասը՝ Շաքի և Զաքաթալա)։ Այդտեղից նրանք ցրուեցին և դէպի Սիւնիք և Արցախ. այդտեղերի ժողովուրդները յայտնի էին՝ որպէս «վայրենաբարոյ, գազանամիտ և ճիւաղաբարոյ» մարդիկ։

Իսկ կիմմերցիները յառաջանալով արևմտեան կողմից՝ բռնեցին Արարատեան պտղաբեր դաշտը, աւերեցին բոլոր քաղաքներն ու գիւղերը,

բնակիչներին կոտորեցին, որոնց խղճուկ մնացորդները քաշուեցին Պոնտոսի հարաւային լեռները. այդ լեռները նրանց անունով էլ կոչուեցին Խաղդեաց կամ Խալդերի լեռներ։

Ուրարտգիների ստեղծած քաղաքակրթութեան աղիւսներն զոհ գնացին այդ վարեցիների աւերածութիւններին։ Երկիրն ու մնացորդ ժողովուրդը միանգամայն վարեցուցան՝ շնորհիւ այդ քաոսային դրութեան։

Գիմմերները բնակութիւն հաստատեցին այժմուայ Ալեքսանդրապոլի գաւառում, որը, ըստ երևութին, նրանց անունով մինչև այժմ էլ Գիւմրի անունն է կրում։ Սրանք էլ նոյն վիճակին ենթարկուեցին, ինչ որ սկիւթացիք։ Մի քանի յաջող արշաւանքներից յետոյ նրանք պարտուեցին մարացիներից և միանալով սկիւթական ցեղերի հետ՝ երբեմն աւազակային յարձակումներ էին գործում այս ու այն կողմ։

Այս վիճակի մէջ էր նախնի Ուրարտուի թագաւորութիւնը, երբ հայերը խաղաղ կերպով, առանց մի կաթիլ արիւն թափելու արևմտեան կողմից շարունակ յառաջանալով մտան Բիայինայի երկիրը։ Նոր եկուորներն աւելի ուժեղ, ընդունակ և կենսունակ էին, քան երկարատև արշաւանքներից հիւծուած և զանազան կողմերում ցրուած խալդերի խղճուկ մնացորդները և սկիւթական ու գիմմերական հրոսակախմբերը։

Այդ պատճառով նորեկները շատ շուտով կարողացան ենթարկել նրանց իրանց ազդեցութեանը և ժամանակի ընթացքում ձուլել իրանց հետ։

Զ. դարում Մարաստանը հզօրանալով՝ մտաւ Փոքր Ասիա։ Մարացիք առաջին անգամ հանդիպեցին հայերին, որոնք արդէն հաստատուելով իրանց նոր հայրենիքում՝ ունէին առանձին անկախ իշխանութիւն։ Երկար ջանքերից և սաստիկ պաշարումներից յետոյ միայն հայերն ընդունեցին նրանց գերիշխանութիւնը։ Հայերն ապաւինած իրանց անմատչելի լեռները՝ քաջութեամբ պաշտպանւում էին. միայն սոքա ստիպեց անձնատուր լինել որոշ պայմաններով։ Մարացիք պէտք է անպայման նուաճէին հայերին, որովհետև վերջիններս ունէին զօրուած հեծելազօրք, որ պէտք է գործ ածէին Մարաց միապետները իրանց ապագայ նուաճումների համար։

Ահա այսքանն է յայտնի հայերի ծագման մասին՝ իբրև ճշգրիտ պատմութիւն։

Սակայն Մովսէս Խորենացին աշուղների երգերից առնելով՝ հայերի ծագման աւանդութիւնը բերում է հետևեալ կերպով.

— Ահարկու և երևելի էին առաջին աստուածները. նրանք էին աշխարհի բարիքների՝ այսինքն նրա սկզբնաւորութեան և բազմամարդութեան պատճառը։ Եւ սրանցից սերուեց հսկաների սերունդը, որի անդամները անհեղեղ, մարմնով յաղթանդամ և վիթխարի էին։ Նրանք լցուած ամբարտաւանութեամբ՝ աշտարակաշի-

նութեան յանցաւոր խորհուրդը յղացին և արդէն ձեռնարկել էին գործին, երբ աստուածների բարկութիւնից մի ահագին աստուածային քամի բարձրացաւ։ Իւրաքանչիւր մարդ անհասկանալի լեզու (բարբառ) ստանալով՝ մեծ շփոթ և աղմուկ բարձրացաւ։ Նրանցից մէկն էր և Յարէթեան Հայկը՝ անուանի և քաջ իշխանը, մի կորովաձիգ և հաստաղեղ մարդ։

Այս Հայկը գեղեցիկ, յաղթանդամ, քաջագանգուր, ուրախ հայեացքով և հաստաբազուկ մարդ էր։ Սա հրամանների մէջ լինելով քաջ և անուանի՝ ընդդիմանում էր այն ամենքին, որոնք ձեռք էին բարձրացնում միւս բոլոր հսկաների և դիւցազունների վրայ, որպէսզի նրանց վրայ միապետ լինեն։ Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բէլի բռնակալութեան դէմ այն միջոցին, երբ մարդկային ցեղերը տարածւում էին երկրի լայնութեամբ և երկայնութեամբ՝ — բազմաթիւ հսկաների, անթիւ գիւերի և հզօրների մէջ։ Որովհետև այդ միջոցին ամեն մէկն էլ ցանկանալով ընկերոջ վրայ իշխել՝ սուրը նրա կողն էր մխում, ուստի բաղդը Բէլին յաջողեց. նա ցանկացաւ ամբողջ երկրին տիրել։ Հայկը չցանկանալով Բէլին հնազանդուել, իր Արմենակ որդու ծննդից յետոյ Բաբելոնից գաղթեց-գնաց Արարատեան երկիրը, որը տարածուած է հիւսիսային կողմում,— իւր որդկերանցով, աղջկերանցով, թոռներով, ուժեղ մարդկանցով, որոնց թիւը մօտ երեք հարիւրի էր հասնում, նոյնպէս բոլոր ծառաներով։ Նա գնաց բնակուեց մի լեռան ստորոտում տարածուած դաշտավայրում, որտեղ բնակւում էին առաջներում ցրուած մարդկանցից՝ սակաւ թուով։ Հայկ նրանց հնազանդեցրեց իրեն, բնակութեան տեղ պատրաստեց այդ կալուածքի համար և իբրև ժառանգութիւն տուաւ Արմենակի որդուն՝ Կադմոսին։ Այդ բանը հաստատում է ժողովրդական

աւանդութիւնը։

Իսկ ինքը մնացած ծառաներով շարժուեց-գնաց դէպի հիւսիս-արևմուտք և բնակուեց մի բարձրաւանդակի վրայ տարածուած դաշտում. այդ լեռնադաշտի անունը դրեց Հարբ,—այսինքն այստեղ բնակուածները Թորգոմի ազգի տանիցն են։ Շինեց մի գիւղ և իր անունով կոչեց Հայկաշէն։ Դաշտի հարաւային կողմում մի երկայնանիստ լեռան վրայ առաջուց բնակած սակաւաթիւ մարդիկ ինքնակամ հնազանդուեցին դիւցազնին։ Այս բանն էլ հաստատում են անգիր զրոյցները։

Տիտանեան Բէլն իր իշխանութիւնը ամենքի վրայ հաստատելուց յետոյ իր որդկերանցից մէկին ուղարկեց հաւատարիմ մարդկանց հետ դէպի հիւսիսային կողմը՝ Հայկի մօտ, որպէսզի նա (Հայկը) հնազանդէ իրան և խաղաղ ապրի։ «Բնակուել ես, ասում է, այդ ցուրտ սառնամանիքի մէջ. քո հպարտ հոգու սառնութիւնը ջերմացնելով մեղմացրու և ինձ հնազանդուելով՝ հանդարտութեամբ ապրիր իմ երկրի մէջ, որտեղ ցանկանում ես»։ Հայկ Բէլի պատգամաւորներին յետ դարձնելով խստութեամբ պատասխանեց. «Թող պատգամաւորը կրկին վերադառնայ Բաբելոն»։

Այն ժամանակ Տիտանեան Բէլը զօրք ժողովեց, հետևակ գնդեր կազմեց, արշաւեց նրա վրայ, եկաւ դէպի հիւսիս, հասաւ Արարատեան երկրին՝ Կադմոսի բնակած տեղը։ Կադմոս փախաւ Հայկի մօտ. արագընթաց մարդիկ ուղարկեց առաջուց ասելու. «Իմացիր, ով դիւցազուններից մեծդ, ասում է, որ Բէլն արշաւում է քեզ վրայ անմահ քաջերով, բարձրահասակ մրցող հրաններով։ Եւ ես լսելով, որ իմ բնակութիւնից մօտ է գտնուում, փախայ և ահաւասիկ շտապով գալիս եմ։ Արդ՝ շտապիր մտածել, ինչ որ անելիքդ է»։

Իսկ Բէլը իր յանդուգն ու անճոռնի ամբոխի բազմութեամբ, ինչպէս զառիվայրից հոսող սաստիկ յորձանք, շտապում էր Հայկի բնակութեան սահմաններին հասնել, վստահացած իր քաջ մարդկանց սրտի և մարմնոյ վրայ։ Այստեղ ուշիմ և խոհեմ, քաջազանգուր և խայտակ հսկան, շտապով հաւաքեց իր որդիներին և թոռներին, քաջ և աղեղնաւոր մարդկանց, որոնք թուով շատ քիչ էին, այլ և որոնք իրեն հպատակուել էին,—հասաւ մի ծովակի ափ, որի ջուրը աղի է և մէջը փոքրիկ ձկներ ունի։ Դիմելով իր զօրքին ասաց. «Երբ կըհասնենք Բէլի բազմութեանը, կ'աշխատէք մօտենալ այն տեղին, որտեղ Բէլը կանգնած կլինի իր քաջերի հետ խառն։ Որպէսզի կամ մեռնենք և այնուհետև միայն մեր կանայք Բէլին ծառային, կամ մեր մատների յաջողութիւնը նրան ցոյց տալով ցրուենք նրա բազմութիւնը և մենք յաղթողներ լինենք»։

Մի ասպարէզ առաջ գնալով՝ հասան բարձր լեռներով շրջապատուած մի դաշտի. աջ կողմից ջրերը հոսում էին և բարձրաւանդակի մէջ շրջան կազմում։ Վերև նայելով՝ նրանց երևացին Բէլի անկարգ բազմութեան հրոսակները՝ խառնիխուռն, որոնք համարձակ կերպով առաջ էին արշաւում։ Իսկ Բէլը յենած ջրի ձախ կողմին մի ոստի՝ մեծ բազմութեամբ շրջապատուած դիտում էր, իբրև դիտանոցից։ Հայկ ճանաչեց զինուած գունդը, որի առջևից Բէլը եկել հասել էր զինուած ընտիր մարդկանցով։ Նրա և բազմութեան մէջ մեծ տարածութիւն էր ընկած։ Նա գլխին ծածկել էր երկաթէ սաղաւարտ երկար վերջաւորութիւններով, կրծքին և թիկունքին երկաթէ տախտակներ էր կապել, ոտներին և թևերին էլ պահպանակներ. մէջքին գօտի էր կապել, ձախ կողմից երկայրի սուր և աջ ձեռքին բռնած ունէր նիզակ, իսկ ձախին՝ վահան։ Նրա աջ և

ձախ կողմերին կանգնած էին ընտիր կռուողներ։ Հայկը Տիտանեանին սպառազինուած տեսնելով և նրա աջ և ձախ կողմերին էլ ընտիր մարդիկ կանգնած՝ Արմենակին երկու եղբայրների հետ նշանակեց աջ կողմում, Կաղմոսին միւս երկու որդոց հետ՝ ձախ կողմում, որովհետև նրանք ազեղով և սուսերով քաջ կռուել գիտէին. ինքն առաջ անցաւ և ուրիշ կռուողների էլ իր յետևին կարգեց. նա զօրքը կանգնեցրեց եռանկիւնի ձևով և կամաց առաջ տարաւ։

Երբ երկու կողմի հսկանները միմեանց հասան, իրար վրայ յարձակուելով երկրի վրայ ահագին դղրդիւն էին բարձրացնում. զանազան ձևի յարձակումներով սարսափ էին ձգում իրար վրայ. այդտեղ երկու կողմից ոչ սակաւ յաղթանդամ մարդիկ սրի բերանի հանդիպելով՝ երկիր էին տապալւում. երկու կողմն էլ անպարտելի էր մնում։ Տիտանեան Բէլն այսպիսի անակնկալ դէպքի հանդիպելով՝ սարսափեց և երես դարձնելով ցանկանում էր բարձրանալ այն բլրի վրայ, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր բազմութեան մէջ ամրանալ, մինչև ամբողջ զօրքը հասնէր՝ միւս անգամ ճակատելու համար։ Ազեղնավարժ Հայկը այս բանն իմանալով՝ առաջ անցաւ, մօտեցաւ թագաւորին, ամուր կերպով քաշեց լայնալիճ ազեղը ամբողջութեամբ, երեքթեւեան նետը դիպցրեց կրծքի տախտակին, որը շեշտակի անցնելով թիկունքից՝ սլաքը երկրի վրայ ընկաւ և այսպիսով հպարտացած Տիտանեանը ընկնելով՝ դեռնին զարկուեց և հոգին՝ աւանդեց։ Իսկ նրա բազմութիւնը այսպիսի ահագին քաջութեան գործը տեսնելով՝ ամենքն էլ փախան զանազան կողմեր։

Ճակատամարտի տեղում նա (Հայկ) մի դաստակերտ շինեց, որի անունը դրեց Հայք՝ 'ի նշան իր յաղթութեան. այդ ձևով էլ գաւառի անունը կոչւում է Հայոց

ձոր։ Իսկ այն բլուրը, որտեղ Բէլն իր քաջերի հետ ընկաւ, Հայկ անուանեց Գերեզման, որ այժմ էլ կոչւում է Գերեզմանք։ Իսկ Բէլի դիակը մի տեսակ դեղով պատելով (զմռսելով) Հայկ հրամայեց տանել Հարք (գաւառ) և բարձր տեղ թաղել՝ 'ի տես իր կանանց և որդոց. և մեր աշխարհը Հայկի անուանով կոչուեց Հայք։

Այս աւանդութեան համաձայն այնուհետև հայերը ցրուեցին դէպի հիւսիս—արևելք, իրանց երթարկեցին երկրում ցրուած բնիկներին և կազմեցին Հայ ազգը։ Նրանց բնակած ամբողջ տարածութիւնն էլ կոչուեց Հայաստան։

II

Հայերը Մարաց գերիշխանութեան տակ. նրանց արշաւանքն 'ի Նինուէ. Երուանդ և Տիգրան. Ասորա-Բաբելական քաղաքակրթութեան ազդեցութիւնը. վաճառականութիւնը հայերի մէջ. Մովսէս Խորենացու աւանդութիւնը և Քսենոֆոնի տեղեկութիւնները Տիգրանի մասին։

Մարաց Կիաքսարի թագաւորութեան ժամանակ՝ Զ. դարում, հայերը դեռ ևս Վանայ լճի արևմտեան կողմումն էին։ Այդ ժամանակ նրանց թագաւորն էր Երուանդ, որ ունէր մի որդի՝ Տիգրան անունով։ Վերջինս Կիաքսարի զօրապետ Կիւրոսի մտերիմ բարեկամն էր։ Շնորհիւ խաղաղ աշխատանքին հայերը ներկայանում էին անտեսապէս բաւականաչափ ապահով և քիչ ու շատ քաղաքակրթուած մի ժողովուրդ։

Փոքր Ասիային տիրելուց յետոյ մարերն արշաւեցին Նինուէի վրայ։ Այդ արշաւանքին մասնակցում էին և հայերը, որպէս նրանց վասալները։ Հայոց հեծելազօրքի սպարապետն էր Տիգրան արքայորդին, իսկ հեռաւոր զօրքի հրամանատարն էր Եամբաս զօրապետը։

Շնորհիւ այդ արշաւանքի էր թերևս, որ հայերն սկսեցին առևտրական յարաբերութիւն ունենալ Նինուէի և Բաբելոնի հետ։ Դա մի քայլ էր դէպի քաղաքակրթութիւն։ Տիգրանի օրով այդ յարաբերութիւնն աւելի զարգացաւ. խաղ-

նարած և երկրագործ հայերն սկսեցին վաճառականութեամբ պարապել, որի շնորհիւ երկիրը հարստացաւ։ Այդ յարաբերութիւնը միանգամայն փոխեց հայերի կեանքի թէ ներքին և թէ արտաքին պայմանները։ Նրանք շնորհիւ իրանց գրաւած դիրքի միջնորդի դեր էին կատարում արևելեան և արևմտեան ազգերի միջև։ Այդ բանի համար նրանց արդէն ծանօթ էին Եւրոպական մի քանի ազգեր և դէպի այդ ազգերը տանող ճանապարհները։ Այժմ էլ աւելի մօտիկ ծանօթանալով արևելեան քաղաքակիրթ ազգերի և նրանց վաճառականական կենտրոնների հետ, սկսեցին դէպի Փիւնիկիա (Սիդոն, Տիւրոս և Տարսոն), միւս կողմից դէպի Պաղեստին, Բաբելոն և նոյն իսկ մինչև Հնդկաստան արշաւել։ Նրանք արտահանում էին իրանց երկրի ձիերն ու ջորիները, պղինձն ու աղը, իսկ այն տեղերից բերում էին ոսկի, արծաթ, գոհարեղէն, ազնիւ կտաւեղէններ, ներկեր, գոյներ, անուշահոտ իւղեր և մեղր։ Այս բանը հաստատում է և ազգային աւանդութիւնը։

Յոյն պատմիչ Հերոդոտ նկարագրում է հայերի նաւերը. Հայաստանում նաւերի կողերը ուռենու ճիւղերից էին շինում և յետոյ դրսից մորթով պատում։ Նաւի ոչ առաջին կողմն էր յայտնի, ոչ յետևինը. նա վահանի նման բոլորակ ձև ունէր։ Այսպիսի նաւերի մէջ ապրանք բարձելով՝ մանաւորապէս գինի, երկու մարդ թիա-

վարելով տանում էին գետի վրայով (Եփրատ)։ Այս նաւերի մէջ մեծերն էլ կային, փոքրերն էլ. ամենամեծ նաւերը մինչև 1000 տաղանդ բեռ էին տանում։ Իւրաքանչիւր նաւ իւր մէջ ունենում էր մի էշ. մեծերը՝ շատ աւելի։ Երբ նաւավարները Բաբելոն էին հասնում, բեռը թափում էին, փայտն ու յարդը ծախում, իսկ մորթը էշերի վրայ բարձելով՝ Հայաստան էին քշում, որովհետև անկարելի էր գետի ընթացքի հակառակ գնալ, այնքան սրընթաց է։ Հենց այս պատճառով նաւերը փայտից չէին շինում, այլ մորթուց։

Բնական է, որ այսպիսի յարաբերութեան արդիւնքը պէտք է լինէր Ասորա-Բաբելական քաղաքակրթութեան մուտքը հայերի մէջ։ Հայերի նիստ ու կացը, հագուստը, զրահաւորութիւնը և ընդհանրապէս այդ շրջանի քաղաքակրթութիւնը պէտք է ընթանար համաձայն Ասորա-Բաբելականի։ Այդ բանը հաստատում են և ազգային աւանդութիւնները։ Այսպիսով Տիգրանի թագաւորութիւնը հանդիսանում է հայերի կեանքում որպէս զարգացման ու քաղաքակրթութեան շրջան։

Կիւրոս Տիգրանի աջակցութեամբ կործանեց Մարաց թագաւորութիւնը և հիմնեց նոր՝ Պարսկական միապետութիւնը։ Նրանց բարեկամութիւնը հաստատուն մնաց մինչև առաջնի մահը։

Որպէսզի պարզ լինի Տիգրանի կատարած դերը նոր կազմակերպուող հայերի կեանքում, առաջ ենք բերում այն բոլոր ազգային աւանդութիւնները և օտար պատմիչների տեղեկութիւնները, որոնք առընչութիւն ունին նրա անձնաւորութեան հետ և որոնք ընորոշում են այդ ժամանակուայ հայերի կեանքը.

Մովսէս Խորենացին այսպէս է պատմում.

— Սա մեր բոլոր թագաւորներից հարուստն ու խելօքն էր և բոլոր քաջ մարդկանցից աւելի քաջ։ Կիւրոսին աջակցեց և Մարաց իշխանութեանը վերջ տուաւ, իսկ յոյներին բաւականին ժամանակ իր իշխանութեան տակ պահեց։ Մեր երկրի սահմաններն ընդարձակելով՝ մինչև մեր նախկին ընակութեան ծայրերը հասցրեց։ Նա իր ժամանակակից բոլոր մարդկանցը նախանձելի էր, իսկ մեզ համար ցանկանալի՝ թէ ինքը և թէ իր ժամանակը, Որովհետև թէ ճշմարիտ մարդկանցից ամեն մէկը և թէ նրանք, ովքեր քաջութիւն և խելացի գործեր են սիրում, սրա յիշատակով կ'ուրախանան և կ'աշխատեն այսպիսի մարդ լինել։ Բաջերի գլուխն անցնելով և քաջութիւն ցոյց տալով՝ մեր ազգը բարձրացրեց և մեզ՝ ուրիշի լծի տակ եղողներիս, շատերի վրայ լծադիր և հարկապահանջ դարձրեց։ Նա շատացրեց ոսկին եւ արծաթը, պատուական քարերը, հատակաւոր մարդկանց եւ կանանց հագցրեց զանազանագոյն եւ զարդարանքներով (հարուս) զգեստներ, որի պատճառով տգեղները գեղեցիկ էին երևում, իսկ գեղեցիկները՝ անբանչելի և դիւցազունների նման։ Հեծեալներին նա հեծելազօրք դարձրեց, պարասիկաւորներին՝ աղեղնաւորներ, շերտաւորներին սուսերներ եւ նիզակներ տուեց, մերկերին զրահաւորեց եւ վահաններ տուեց, և նրանց մի տեղ խմբուելը բաւական էր, որպէսզի թշնամիներին փախցնէր զէնքերի փայլից և շողշողալուց։ Նա խաղա-

դուրիւն բերաւ եւ շինարար եր. նա իւղով ու մեղրով եր ամենիին կերակրում:

Այսքան և այսպիսի շատ գործեր կատարեց մեր աշխարհի համար այս խարտեաշ, գանգուր մազերով Երուանդեան Տիգրանը, որը փայլուն երեսով, գրաւիչ աչքերով, բարձրահասակ և թիկնաւէտ, գեղեցիկ ոտքերով և քայլուածքով մարդ էր. նա կերակրի մէջ պարկեշտ էր, խմիչքներ գործածելում և քէֆերում՝ օրինաւոր, որի մասին հին մարդիկ, որոնք բամբիռներով երգում էին, պատմում էին: Նա իր մարմնական ցանկութիւնների մէջ ես չափաւոր էր, շատ խելացի և պերճախօս էր:

Ոչ լաւագոյններին նախանձում էր և ոչ նուաստներին արհամարհում, այլ ամենքի վրայ էլ հաւասարապէս էր խնամք տարածում:

Մարաց Աժդահակ թագաւորը նախանձում և կասկածում էր Կիւրոսի եւ Տիգրանի բարեկամութեան վրայ եւ միջոց եր որոնում նրանց բարեկամութիւնը խախտելու:

Այսպիսի մտածմունքների մէջ նա մի անգամ երազ տեսաւ: Քնից վեր թռչելով, թէև խորհրդի ժամ չէր, գիշերուայ կիսին կանչեց խորհրդականներին և տխուր դէմքով ու հառաչելով նայում էր դեռնին: Վերջապէս նա պատմեց իր կասկածների և սարսափելի երազի մասին:

— Ո՛վ սիրելիներ, ես այսօր մի անծանօթ երկրում էի՝ մի բարձր լեռան մօտ, որի գագաթը սառնամանիքով էր պատած: Ասում էին, որ ես Հայկազանց երկրում եմ: Մինչ ես երկար նայում էի սարին, նրա գագաթին նստած երեւաց մի ծիրանազգեստ կին, որ երկար երկնագոյն քող ունէր ծածկած երեսին: Նա բարձրահասակ էր, գեղեցիկ աչքերով և կարմիր թշերով: Նա երկունքի ցաւով էր բռնուած: Մինչ ես զարմացած երկար նայում էի, այդ կինը յանկարծ ծնաւ երեք՝ հասակով և բնութեամբ դիւցազնանման, հասակաւոր մարդիկ: Առաջինը մի տուիծ սանձահարելով դէպի արեւմուտք էր սլանում. երկրորդը ընծուի վրայ նստած նայում էր դէպի հիւսիս, իսկ երրորդը մի վիշապ սանձելով քաջութեամբ յարձակում էր գործում մեր տէրութեան վրայ: Այսպիսի խառն երազների մէջ ինձ թւում էր, թէ ես իմ ապարանքի տանիքի վրայ եմ. մինչև անգամ ապարանքիս վերին յարկը զարդարուած էի տեսնում գեղեցիկ և բազմագոյն շտարուններով, իսկ մեր պահապան ասուածներին՝ հրաշալի տեսքով այդտեղ կանգնած: Եւ ձեզ հետ միասին ես նրանց երկրպագում էի, զոհ էի մատուցանում և խունկ ծխում: Բայց յանկարծ վերև նայեցի: Նա, որ վիշապի վրայ էր նստած, տեսայ՝ արծուի պէս սլացաւ և հասնելով կործանել էր կամենում մեր ասուածները: Ես մէջ ընկայ և սկսեցի մարտնչել այն սքանչելի դիւցազնի հետ: Նախ նիզակների ծայրերով միմեանց մարմին խոցոտեցինք, որից արիւնը վտակի պէս էր հոսում: Ապարանքիս արևելեան ճակատը արեան ծով էր դարձել: Այդ ձեռ բաւական ժամանակ կռուեցինք և ուրիշ զէնքերով: Վերջապէս հասաւ իմ կործանման ժամը, և ես քրտնաթոր ու սարսափած արթնացայ. դրանից յետոյ կարծես այլևս կենդանի չեմ: Այս երազը ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ՝ Տիգրան Երուանդեանի կողմից լինելիք յարձակումը: Արդ՝ ասուածներից յետոյ ձեզնից ով գործով և խորհուրդներով օգնել կարողանայ ինձ, ես նրան իմ թագաւորակիցը կ՚անեմ:

Այնուհետև խորհրդականներից շատ օգտակար բաներ լսելով արձակեց:

Աժդահակ դիմեց խորամանկութեան. նա առ երես

բարեկամ ձեւանալով Տիգրանին, ցանկացաւ ամուսնանալ նրա քրոջ՝ Տիգրանուհու հետ եւ նրա միջոցով կործանել եղբօրը: Այդ նպատակով նա այսպիսի նամակ գրեց.

— Եղբայրութեանդ յայտնի է, որ աստուածները աշխարհային կեանքում շատ բարեկամներ ունենալուց աւելի լաւ բան մեզ չեն պարգեւել, որպէսզի արտաքուստ չհամարձակուին խռովութիւն բարձրացնել և յարձակում գործողները հալածուին, իսկ ներքուստ այդպիսի չարամիտները ոչ մէկից օգնութիւն չստանալով՝ հալածուին: Արդ՝ որովհետև տեսայ, որ բարեկամութիւնից այսպիսի լաւ բան է ծագում, մտածեցի մեր միջի սէրն աւելի հաստատուն դարձնել, որպէսզի երկուսս էլ ամեն կողմից ամրացած՝ մեր տէրութիւնները ամրողջ և անշարժ պահենք: Այս այսպէս կըլինի, եթէ Մեծ Հայքի օրիորդ քո քոյր Տիգրանուհուն կնութեան տաս ինձ. և եթէ կըհամաձայնես այդ բանին, նա տիկնանց տիկին կըլինի:

Դեսպանը գալիս և կատարում է, ինչ որ պատուիրուած էր գեղեցիկ օրիորդի վերաբերմամբ: Տիգրան համաձայնելով՝ իւր քոյր Տիգրանուհուն Աժդահակին կնութեան տուաւ: Տեղեակ չլինելով նրա դաւաճան մտադրութեանը, իւր քրոջն ուղարկեց, ինչպէս որ թագաւորների կարգն էր: Աժդահակն ստանալով նրան՝ ոչ թէ յատկապէս իր նենգութիւնը ծածկելու, այլ նրա գեղեցկութեան համար իր կանանց առաջինը դարձրեց, իսկ ներքուստ չարութեան ոստայն էր հիւսում:

Այս բանից յետոյ՝ Աժդահակ Տիգրանուհուն թագուհի կարգելով՝ առանց նրա կամքը հարցնելու ոչ մի բան չէր գործում իր թագաւորութեան մէջ. ամեն բան նրա խօսքի համաձայն էր կարգադրում և ամենքին պատուիրել էր նրան հնազանդուել: Այս բոլորն այսպէս կարգադրելուց յետոյ՝ սկսեց մեղմութեամբ պատմել իր

խաբէութիւնները:—Դու չգիտես, ասում է, որ քո եղբայր Տիգրանը նախանձեց Արեաց թագուհի լինելուդ վրայ, որովհետև գրգռուել է իր կին Զարուհուց: Եւ դրա հետևանքը ինչ կարող է լինել, եթէ ոչ այն, որ ես կըմեռնեմ (կըսպանեն), ապա Զարուհին Արեաց թագուհի կըլինի ու աստուածների շարքում տեղ կըբռնէ: Դու պէտք է այս երկու բանից որևէ մէկն ընտրես. կամ եղբայրասէր լինես և Արեաց ազգի առաջ խայտառակութեամբ կործանուես, կամ անձնական շահդ՝ի նկատի առնելով՝ օգտակար խորհրդի դիմես և առաջիկայում պատահելիքի մասին մտածես:

Բայց այս խորամանկութեան տակ թագնուած էր և Տիգրանուհու սպանութիւնը, եթէ նա մարապարսկի խորհրդով չշարժուէր: Իսկ խորագէտ գեղեցկուհին իմանալով այդ դաւաճանութեան մասին՝ սիրալիր խօսքերով Աժդահակին պատասխան տուաւ և շտապով իր մտերիմների միջոցով եղբօրը յայտնեց այդ նենգութեան մասին:

Այնուհետև գործին ձեռնարկեց (Աժդահակ) պատգամաւորների միջոցով, որպէսզի միասին տեսութեան գան երկու թագաւորութեան սահմանների վրայ, իբր թէ այնպիսի հարկաւոր բան կայ, որ դեսպանութեան միջոցով անկարելի է կատարել, այլ միայն իրանք դէմ առ դէմ պէտք է լինին: Իսկ Տիգրանն իմանալով որ այդ դեսպանութիւնը նրա մտածած չարագործութեան՝ի կատար ածելն է, անգիտակից ձեւացաւ Աժդահակի խորհուրդներին: Միայն գրի միջոցով յայտնեց, ինչ որ սրտի խորքումը կար: Այս չարութիւնը յայտնուելուց յետոյ՝ այլևս ոչ մի խօսք և խորամանկութիւն չմնաց, որ իր չարութիւնը ծածկէր, այլ յայտնապէս թշնամութիւնը գրգռուեց:

Հայոց արքան զօրք ժողովելով Կապադովկիացոց

սահմաններից և վրաց ու ազուանից քաջերին, Մեծ ու Փոքր Հայքի ընտիրներին, ամբողջ զօրութեամբ արշաւեց Մեղացոց երկրի վրայ։ Այնուհետև Աժդահակ Հայկազեանի հետ պատերազմի բռնուելով վանդի մէջ ընկաւ, որովհետև նա (Տիգրան) քիչ զօրութիւն չունէր։ Պատերազմը հինգ ամիս տևեց, որովհետև գործը դանդաղում էր, երբ Տիգրան մտածում էր սիրելի քրոջ մասին։ Եւ այսպիսով ելք էր որոնում, որպէսզի Տիգրանուհին ազատուելու հնար գտնէ։ Այս բանը պատահելուց յետոյ ճակատամարտի ժամն էլ հասաւ։

Բայց գովում եմ իմ բարձրահասակ, նիզակաւոր, բոլոր անդամներով համաչափ և միանգամայն գեղեցկին (Տիգրանին), որովհետև ամեն կողմով իրեն համաձայն առոյգութիւն ունէր և ոչ մէկը նրա չափ ոյժ չունէր։ Եւ ինչու խօսքս երկարացնեմ. պատերազմի միջոցին, ինչպէս ջուրը կըպատռեն, նիզակով ճեղքեց երկաթէ զրահը և Աժդահակին շամփրելով նիզակի մեծ ծայրով, միւս անգամ բռնելով դուրս քաշեց նիզակը և թոքի կէս մասը զէնքի հետ դուրս հանեց։ Բայց սքանչելին ճակատամարտն էր, որովհետև քաջերը քաջերին հանդիպելով՝ շուտով թիկունք չէին դարձնում, որի պատճառով և ճակատամարտը երկար էր տևում։ Իսկ Աժդահակի մահը գործի վախճանը եղաւ։ Եւ Տիգրանի բախտից՝ ինքն այսպիսի յաջողութեան հանդիպելով՝ իր փառքը մեծանում էր։

Այս էլ է պատմում, որ այս գործի վախճանից յետոյ իւր քոյր Տիգրանուհուն թագաւորավայել պատուով ուղարկեց Հայաստան մեծ բազմութեամբ և բնակեցրեց այն աւանում, որ Տիգրան իր անունով շինեց, այսինքն՝ Տիգրանակերտում, և այդ գաւառը նրան ընծայեց, նրա սերնդին ազատութիւն շնորհեց (ազատների շարքում դասեց), որպէս թէ թագաւորական

սերնդից են։

Իսկ Աժդահակի կին Անուշին և նրա սերնդից շատ աղջիկներ պատանիների հետ, այլև շատ գերիներով՝ տասն հազարից աւելի, ընակեցրեց մեծ լեռան արևելեան լանջին՝ մինչև Գողթան գաւառը։

Այս բանի մասին պատմում են ճշտութեամբ և Թուելեաց երգերը, որ պահպանել են, ինչպէս լսում եմ, Գողթան գեղաւէտ գաւառի կողմի մարդիկ, որովհետև շատ են սիրում։

Իսկ յոյն պատմիչ Քսենոֆոն հետևեալ տեղեկութիւններն է բերում Տիգրանի մասին։

Կիւրոս, որին Կիաքսար սպարապետ էր կարգել Բաբելոնի դէմ մղուելիք պատերազմին, մարերի զօրութեան մասին տեղեկանալուց յետոյ հարցրեց նրան։

— Դու ասում էիր՝ որ Հայոց թագաւորը արհամարհեց քեզ, և այժմ լսելով թշնամիների մեր վերայ գալը՝ ոչ զօրք է տալիս, ոչ գրամ։

— Այդպէս է, պատասխանեց Կիաքսար, ուստի վրանում եմ. չգիտեմ՝ հայերի վրայ կռուի գնամ, թէ՞ առ այժմ թողնեմ. մի՞ պուցէ ուրիշ թշնամիների վրայ հայերն էլ աւելանան։

— Հայերի քաղաքները ամուր տեղեր են, թէ՞ դիւրին, հարցրեց Կիւրոս։

— Ամուր տեղեր չեն, պատասխանեց Կիաքսար. սակայն լեռներ ունին, որոնց վրայ կարող են շատով ամրանալ, և հեշտ չի լինիլ նրանց վերցնելը. միայն երկար պաշարմամբ կարելի է, ինչպէս իմ հայրն արաւ։

— Եթէ ինձ բաւականին հեծելազօրք տաս, ասում է Կիւրոս,— ստուածների օգնութեամբ կարող եմ այնպէս անել, որ հայերը թէ զօրք կըտան, թէ փող, և յոյս ունեմ, որ առաջուանից էլ աւելի բարեկամ

կըլինին։

Կիաքսար ուրախացաւ և յուսաց, որ Կիւրոս կարող կըլինի առանց պատերազմի գործը վերջացնել, մանաւանդ գիտէր, որ Կիւրոս Հայոց արքայորդու հետ պատանեկութիւնից որսակից ընկերներ են եղած։

Կիւրոս գործի յաջողութեան համար Արամազդին զոհ մատուցանելուց յետոյ՝ իր սովորութեան համաձայն հեծեալներ և հետեւակներ հետը՝ ճանապարհ ընկաւ որսի պարագաներով։

Մինչ նրանք գնում էին, յանկարծ մի նապաստակ երևաց, որի վրայ յարձակուեց մի արծիւ և յափշտակելով տարաւ մօտակայ բլուրը։ Այդ դէպքը Կիւրոսին բարեյաջող նշան երևաց, որպէս թէ իր որսորդութեան նպատակն էլ պիտի յաջողուի։

Կիւրոսի զօրքը մօտեցաւ Հայոց սահմաններին։ Հայոց թագաւորին յայտնեցին, որ պարսիկ Կիւրոսը որսի է դուրս եկել, և, յիրաւի, Կիւրոս և նրա հետ եղածները որսում էին կինճ, եղջերու, այծեամ, ցիռ, որոնցից շատ կային այդ կողմերում։ Այդ միջոցին թագաւորի անդրանիկ որդին բացակայ էր, իսկ թագաւորը լսելով Կիւրոսի գալստեան մասին՝ շփոթուեց, որովհետև դաշինքի հակառակ իր սահմաններում ամրութիւններ էր շինում։ Իսկոյն թագաւորի մօտ պատգամաւորներ եկան և յայտնեցին, որ Կիւրոս զօրքով գալիս է և քեզնից ուրիշ բան չէ խնդրում՝ բացի՝ նախկին դաշինքի համաձայն՝ զօրք եւ դրամ։ Թագաւորը հասկացաւ նրա գալստեան նպատակը և իր կրտսեր որդու՝ Շաւասպի ձեռքով թէ կանանց, թէ մանուկներին և թէ գանձերը փոխադրեց դեպի լեռները, իսկ ինքն շատ ոչ զօրք ժողովել։ Այդ միջոցին գուժկան հասաւ՝ թէ կանայք և գանձերն ընկել են թշնամու ձեռքը, որովհետև Պարսից Քրիւսանտաս զօրապետը լեռներում կտրել էր

գաղտնի ճանապարհները։ Թագաւորը շփոթուեց և հազիւ խոյս տալով կարողացաւ մի բլրի վրայ ամրանալ, որին Կիւրոս հասաւ և պաշարեց։ Նա պատգամաւոր ուղարկեց թագաւորին ասելու՝ «Ի՞նչ է միտդ. ուզում ես այդտեղ մնալ և սովամահ լինել, թէ՞ իջնել և մեր դէմ կռուել։

— Իմ միտքը կռուել չէ, պատասխանեց թագաւորը։

Նորից պատգամաւորը գնաց և ասաց.

— Ապա ինչո՞ւ չես իջնում։

— Կ՚իջնեմ, պատասխանեց թագաւորը, — բայց ո՞վ կըլինի մեր մէջ դատաւորը։

— Ում որ աստուածները կ՚ուղարկեն, պատասխանեց Կիւրոս։

Մինչ Կիւրոս զօրքով շրջապատուած կանգնած էր, թագաւորն իջաւ։ Այդ ժամանակ ճանապարհորդութիւնից վերադարձաւ թագաւորի անդրանիկ որդին, որը, ինչպէս ասացինք, մի ժամանակ Կիւրոսին որսակից ընկերն էր եղած։ Երբ տեսաւ իր հօրը, մօրը և իր կնոջը բռնուած, լաց եղաւ։

— Յարմար ժամանակի հասար, ասաց Կիւրոս,-լսիր ուրեմն հօրդ դատը։

Կիւրոս կանչեց Մարաց և Պարսից զօրավարներին, որոնք իր հետ էին, Հայոց մեծամեծներից, որոնք մօտ էին, կանանց նոյնպէս թոյլ տուաւ լսելու։

Կիւրոս նախ հարցրեց թագաւորին՝ թէ ինչո՞ւ Մարաց հետ կապած ուխտին դրժեց ու պատերազմի պատրաստութիւն է տեսնում։ «Դու խոստացար, ասաց, իմ պապ Աժդահակին, որ նրան օգնես թէ գանձով և թէ զօրքով և ամրոցներ չկառուցանես, բայց դու հակառակն ես գործում»։

— Այո, ասում է թագաւորը, որովհետև ազատութիւն ցանկացայ եւ լաւ եմ համարում որդոցս ազատութիւն

բաղնել:

— Լաւ բան է, ասում է Կիւրոս,—ազատութեան համար կռուել, բայց այժմ ասա, եթէ քո դաշնակիցներից մէկը զրժէր իր խոստմանը և ձեռքդ ընկնէր, ինչ կ՚անէիր նրան:

— Ճիշտն ասած՝ իշխանութիւնից կըզրկէի, ունեցածը կ՚առնէի և, եթէ ընդդիմանար, կըսպանէի:

Երբ այս բանը լսեց Տիգրան, գլխի խոյրը հանեց և, ծածանուող վերջաւորութիւնները պոկելով, գետին նետեց: Կանայք լայ էին լինում և ազաղակում՝ կարծելով թէ Թագաւորը կորաւ, նրա հետ և իրանք: Կիւրոս հրամայեց լռել և դառնալով Թագաւորին ասաց.

— Որովհետև այդ է քո վճիռը, հարցնում եմ՝ ինչպէս է արժանի, որ ես վարուեմ քեզ հետ:

Թագաւորը լռեց և Տիգրան շտապելով երկար խօսաց.

— Որովհետև արժանին ես հարցնում, ո՛վ Կիւրոս, ես խորհուրդ եմ տալիս ներել հօրս, որը պաշտպանելի է, որովհետև նա այդպէս վարուեց ազատութեան համար: Բայց փոխանակ ազատութեան՝ նա գտաւ այն, ինչի որ չէր սպասում: Անաւասիկ քո ձեռքին է. ուրեմն, եթէ կրկին ազատութիւն տաս, կրկնակի բարեկամ արած չե՞ս լինել արդեօք նրան:

Կիւրոս, որ մաքուին ուրախանում էր, որովհետև կատարուեց այն, ինչ որ խոստացել էր Կիաքսարին՝ —առաջուանից էլ աւելի բարեկամ անել հայերին,— ասաց.

— Շատ բարի, երկրորդ անգամ հաստատենք մեր բարեկամութիւնը. բայց ինչ օգնութիւն պէտք է տաք մեզ՝ թէ զօրքով և թէ դրամով:

— Քեզ ցոյց կըտամ ամբողջ գանձերս և զօրքս. վերցրու, որքան ցանկանում ես:

Կիւրոս հարցրեց.

— Ո՞րքան զօրք և գանձ ունիք:

— Ուր հազար հեծեալ եւ քառասուն հազար հետեւակ, պատասխանեց Թագաւորը. իսկ դրամը՝ հօրս Թողածից երեք հազար տաղանդ էլ աւելի է:

Առաջիկայ պատերազմի համար Կիւրոս բաւականացաւ զօրքի կէսը վերցնելով: «որովհետեւ միւս կէսը, ասաց, քեզ հարկաւոր է կորդուաց դեմ կռուելու համար, որոնց հետ միշտ կռուի մէջ է»: Իսկ դրամից հարիւր տաղանդ միայն խնդրեց. հարիւր տաղանդ էլ իր համար պարտք վերցրեց վերադարձնելու պայմանով:

— Այդպէս մի խօսիր, ո՛վ Կիւրոս, ասաց Թագաւորը, Թէ չէ՝ ինձ համարձակութիւն չես տալ. իմացած եղիր, որ ամենը քոնն են:

— Իսկ, որպէսզի կինդ յետ վերցնես, ինչ կըտաս, հարցրեց Կիւրոս:

— Որչափ կարող եմ, պատասխանեց Թագաւորը:

— Իսկ երեխայի՞դ համար, շարունակեց Կիւրոս:

— Դարձեալ որչափ կարող եմ:

— Ուրեմն ամբողջ ունեցածիդ կրկնապատիկը պէտք է տաս, ասաց Կիւրոս:

Յետոյ դառնալով Տիգրանին՝ ասաց.

— Եւ դու, ո՛վ Տիգրան, ինչ փրկանք պէտք է տաս կնոջդ համար:

Տիգրան, որ նոր էր ամուսնացել և շատ էր սիրում կնոջը, ասաց.

— Իմ անձը միանգամայն կըտամ, եթէ հարկ լինի, որպէսզի կնոջս ազատութիւնից ազատեմ:

— Դու, Տիգրան, դարձաւ Կիւրոս, առ կինդ, որովհետև ես նրան գերի չեմ համարում. դու մեզնից ես: Դու, Թագաւոր, նոյնպէս առ կինդ և երեխաներդ. նրանց համար փրկանք չեմ պահանջում:

Կիւրոս ամենքին ընթրելի հրաւիրեց և ընթրիքից յետոյ ասաց.

— Ամենքդ գնացէք ձեր տեղերը։

Եւ թագաւորն ու իր ընտանիքը ճանապարհ ընկան գեսպակներով (պատգարակներով)։

Մինչ գնում էին, մէկը Կիւրոսի խելքն էր գովում, միւսը՝ ժուժկալութիւնը, ոմանք էլ գեղեցկութիւնն ու վայելուչ հասակը։

Տիգրան հարցրեց կնոջը.

— Քեզ էլ գեղեցիկ թուաց Կիւրոս։

— Ես նրան չնայեցի, պատասխանեց կինը։

— Ապա ո՞ւմ էիր նայում, հարցրեց Տիգրան։

— Ես նրան էի նայում, պատասխանեց կինը, ով ասաց՝ թէ իր անձը միանգամայն կըտայ, միայն թէ իր կինն ազատին չլինի։

Այնուհետև Տիգրան, որ չէր ցանկանում Կիւրոսից բաժանուել, նշանակուեց Հայոց հեծելազօրքի հրամանատար։ Նրանք ուղևորուեցին երկրի ուրիշ կողմը, որպէսզի մի յարմար տեղ գտնեն՝ բերդ շինելու, որտեղ պէտք է պարսիկ պահակ մնար։ Ճանապարհին Տիգրան Կորդուաց լեռները ցոյց տալով ասաց.

— Տեսնո՞ւմ ես այս լեռները,—Կորդուացիք են ապրում. երբեմն—երբեմն իջնում են լեռներից եւ կողոպտում մեր բնուռ գիւղացիներին. դրա համար էլ այդ կողմերը ամայի են մնացել։

Կիւրոս մտածեց բերդն այդ կողմերում շինել՝ Հայոց և Կորդուաց մէջ տեղը, թէ իրրև հայերի կողմից երաշխաւորութեան նշան և թէ Կորդուաց աւազակութիւնների առաջն առնելու համար։ Հետևեալ օրը, երբ Տիգրան եկաւ 4000 հեծեալներով և 10000 ազեղնաւորներով, նոյնչափ էլ շերտաւորներով, յայտնեց նրան իր մտադրութիւնը, որին հայերը հաւանութիւն տուին։

Կիւրոսի և Տիգրանի առաջին գործն եղաւ սաստիկ յարձակում գործել Կորդուաց վրայ, որին վերջիններս չկարողացան երկար դիմանալ։ Կիւրոս նրանց գլխաւորներին բռնելով համոզեց, որ նրանց համար օգտակար կըլինի, եթէ այդ կողմերում Մարաց և Պարսից պահակ լինի։

— Դուք, ասաց Կիւրոս, աղքատ եք եւ աւազակութեամբ եք ապրում, որովհետև ոչ մշակելի հող եւ ոչ երկրագործութիւն ունիք։ Ահա Հայոց դաշտերը ձեր առաջ բաց են. գնացէք, մշակութեամբ պարապեցէք. և դուք, հայեր, դրա փոխարէն ձեր հօտերն արածացրէք Կորդուաց արօտներում։

Այս լսելով՝ երկու կողմն էլ հաւանութիւն տուին։

— Այսպէս միայն կարող է խաղաղութիւնը յարատև մնալ, ասացին նրանք։

Իրար պատանդ տուին՝ ազատութեան, ամուսնութեան, մշակութեան և արածացնելու, վտանգ եղած դէպքում փոխադարձ օգնութեան դաշինք կռեցին։ Մինչև այժմ էլ այդ դաշինքը մնում է, ասում է Քսենոֆոն։

Այն ժամանակ Տիգրան վարպետներ խնդրեց հօրից և բերել տուաւ իր երկրից։

III

Հայերը Պարսից իշխանութեան տակ. Պարսկական քաղաքակրթութիւնը. հայերի կեանքի պայմանները. խալդերի մնացորդները և նրանց կեանքի պայմանները. հայերը տիրում են Ուրարդուին։

Հայերը կիսանկախ դրութեան մէջ մնացին մինչև Պարսից արքայից արքայ Կիւրոսի մահը. միաժամանակ, օգտուելով այդ դրութիւնից, թէ իրանց երկիրն ընդարձակելու յեսեիցն էին ընկած և թէ յարմար բոպէի էին սպասում՝ իրանց միանգամայն անկախ հրատարակելու։

Երբ Կամբիւսի մահուանից յետոյ Պարսկաստանում գահի շուրջը խռովութիւն բարձրացաւ, հայերն օգտուելով առիթից միւս հպատակ ազգերի հետ իրանց անկախ հրատարակեցին։

Դարեհ, որ բոլոր ապստամբներին նուաճել և Պարսից գահը բարձրանալով արշաւել էր Բաբելոնի վրայ, լսելով հայերի ապստամբութեան մասին, մեծ զօրք ուղարկեց նրանց վրայ հայ Դադարշիս զօրապետի առաջնորդութեամբ։ Ո՞վքեր էին այդ ժամանակուայ հայոց թագաւորները,— յայտնի չէ. միայն թէ հայերն ապաւինած իրանց ամուր տեղերը՝ քաջութեամբ էին պաշտպանւում, և Դարեհին երկու տարի հարկաւորուեց, որպէսզի երկարատև արշաւանքներից յետոյ կարողանայ նուաճել նրանց։ Դա տեղի ունեցաւ 520 թ. Ք. ա.։

Այնուամենայնիւ հայերի վրայ նշանակուած

սատրապը բազատոր տիզդոսն էր կրում և իրաւունք ունէր արքայից արքայի մի նստելու ժամանակ նրան օգնել։

Դարեհ այդ պատերազմների նկարագրութիւնը փորագրել տուաւ Բեհիստունի ժայռի վրայ, որտեղ հայերին անուանում է «արմինիա»-ներ։ Ժայռի վրայ փորագրուած է և Դարեհի պատկերը, որի առաջն են բերուած շղթայակապ ինն ապստամբ իշխաններ. նրանցից երրորդը հայ է։ Դա Արախա հայ իշխանն է, որ ապստամբեցրել էր և խալդերին և ինքն էլ ապստամբութեան գլուխն էր անցել։

Այնուհետև հայերը Պարսից մի անբաժան մասն էին կազմում և արքայից արքաները նրանց զինուորական ոյժը գործադրում էին իրանց, դէպի Յունաստան կատարած, արշաւանքների համար։ Նրանք պատերազմի ժամանակ միշտ էլ կանգնում էին իրանց ցեղակից փռիւգիացիների կողքին։ Գլխներին կրում էին պղնձէ հիւսուած սաղաւարտ, մի նեղ վահան, մի կարճ նիզակ, մի տէգ և մի երկայն ու բարակ դաշոյն նրանց զէնքերն էին. նրանց ոտները պաշտպանուած էին երկարավիզ կօշիկներով։

Դարեհի թագաւորութիւնը մի նոր դարագլուխ եղաւ Պարսկաստանի համար։ Իր հակառակորդներին և երկրի զանազան կողմերում բարձրացած ապստամբութիւնները զսպելուց յետոյ՝

նա ձեռք գարկեց մի շարք բարենորոգումների, որոնց արդիւնքը եղաւ պարսկական քաղաքակրթութեան զարգացումը։ Այդ բարենորոգութիւններն անպայման խաղաղութիւն էին պահանջում. դրա համար նա լաւ ըմբռնելով հպատակների դրութիւնն ու նրանց ձգտումները, մտածեց՝ մի կողմից հպատակութեան մէջ պահել, միւս կողմից նրանց կապել Պարսկաստանի հետ՝ ենթարկելով պարսկական քաղաքակրթութեանը։ Այդ նպատակին հասնելու համար Դարեհ իր իսկ նուաճած ազգերին ամենալայն ինքնավարութիւն շնորհեց, միայն թէ նրանք ճանաչէին իր գերիշխանութիւնը՝ վճարելով նշանակած տարեկան տուրքը։ Ներքին գործերի մէջ միանգամայն ազատութիւն շնորհեց նրանց։ Այդ ազատութիւնից միայն իշխանները չէին օգտւում, ինչպէս այդ ժամանակուայ շատ բռնակալների սատրապներ, այլ և հպատակ ժողովուրդը, և Դարեհի ամենագլխաւոր նպատակն էր օտար ցեղերին գրաւել։ Այդ պատճառով էլ, մինչ իւրաքանչիւր ժողովուրդ ստրկացած էր բռնապետների լծի տակ և արդարութիւնը միշտ էլ ոտնահարւում էր, Դարեհ ցանկացաւ արդարութիւն սփռել այն բոլոր երկրներում, որոնք արքայից արքայի գերիշխանութիւնն էին ճանաչում։ Ժողովուրդը սիրեց նրան, ուրախութեամբ իւրացրեց պարսկական քաղաքակրթութիւնը մինչ այն աստիճան, որ պարսկական լեզուն ամենայատնեալ գիւղերն անգամ մուտք գործեց և անխտիր գործածական դարձաւ ամենքի բերանում։

Դարեհ իր լայնածաւալ պետութիւնը բաժանեց մասերի, որոնք կոչւում էին սատրապութիւններ (փոխարքայութիւններ)։ Սատրապն ընտրւում էր ամեն մի հպատակ ազգի նախկին իշխանական տոհմից՝ ժառանգաբար, եթէ միայն սատրապը որևէ կերպ արքայից արքայի դէպի ինքն ունեցած հաւատն ու իշխանութիւնն 'ի չարը չէր գործադրում։ Դարեհ այդ բանը, այլ և նրանց վերաբերմունքը դէպի ժողովուրդը և արդարադատութիւնը ստուգելու համար երբեմն-երբեմն պաշտօնեաներ էր ուղարկում, որոնք կամ անձամբ էին դատում սատրապներին՝ ապօրինի վարմունքի համար, կամ զեկուցանում էին արքայից արքային։ Այդ պաշտօնեաները կոչւում էին արքայից արքայի աչքերն ու ականջները։ Յաճախ սատրապներն իրանց անիրաւացի վարմունքի համար մահուան պատիժ էին ստանում. նոյն պատժին էին ենթարկւում և նրանց մերձաւորներն ու պաշտօնեաները։ Դարեհ անձամբ ինքն էր ընտրում իր սատրապներին յաճախ ազգի բոլոր դասակարգերից անխտիր՝ հարստից ու աղքատից, օտարներից ու պարսիկներից։

Սակայն կարևոր սատրապութիւնները յանձնում էր Ահեմենեանների ընտանիքի հետ ամուս-

նուրեանք կամ արևելակցական կապերով միացած անձնաւորութիւններին:

Սատրապներն ունէին քաղաքական կատարեալ իշխանութիւն, մի արքունիք, թիկնապահներ, զօրք, պալատներ, պարտէզներ, ահագին տարածութեամբ որսատեղեր: Նրանք էին բաժանում տուրքը հպատակների վրայ իրանց ցանկութեան համաձայն. նրանք էին հակում արդարադատութեան վրայ և կեանքի ու մահուան իրաւունք ունէին:

Հպատակները հարկ էին վճարում մթերքներով. ցորեն, գինի, ձի, ոչխար և այլն, որոնք ժողովում էին յատկապէս այդ նպատակով շինուած փոքրիկ դղեակների մէջ՝ առանձին հարկահանների ձեռքով, ապա ուղարկում էին Պարսից արքունիքը:

Նոյն ձևով էին կառավարւում և հայերը: Զնայելով որ նրանք Պարսից գերիշխանութեան տակ էին, այնուամենայնիւ իրանց երկրի կատարեալ տերերն էին: Հայաստանը, որի սահմաններն այդ ժամանակ հասնում էին մինչև Արտանիասի աւազանը, կազմում էր ԺԳ.-րդ սատրապութիւնը և տուրք էր տալիս, ոչ թէ հարկ, որ անպատուաբեր էր համարում, 30000 մարուկ: Իսկ բուն Ուրարդուն իր հիւսիսային հարևանների հետ միասին կազմում էին ԺԸ.-րդ սատրապութիւնը: Բայց Դարեհի յաջորդների ժամանակ

հայերի այդ արտօնեալ դրութիւնը վերացաւ, մինչև Սև ծովի ափերը եղած, իրանց հարևանների հետ հարկ էին վճարում դրամով՝ 400 տաղանդ:

Այդ ինքնավար դրութիւնը հնարաւորութիւն տուաւ հայերին իրանց ազգային ձգտումներով ու ոգով ապրելու: Նրանք հետզհետէ բազմանում էին՝ ի վնաս իրանց դրացիների և իրանց ենթարկում արևմտեան Ասիայի մի մեծ մասը: Ինչպէս երկրագործ և խաշնարած ժողովուրդ՝ նրանք հետզհետէ խաղաղ կերպով քաղաքականապէս բռնեցին խալդերի բնակավայրը՝ արևելքում և նրանց մնացորդներին ձուլեցին իրանց մէջ:

Հայերի այդ առաջխաղացութեան համար անկարելի է մի թուական որոշել, որովհետև դա զէնքով՝ յանկարծակի չէ կատարուել, այլ դանդաղ ու առանց մի կաթիլ արիւն թափելու: Այդ առաջխաղացութիւնը տեղի է ունեցել Պարսից տիրապետութեան ժամանակ: Երկարատև պատերազմներից հիւծուած խալդերը ստիպուած էին Վանայ լճի հարաւային կողմից բարձրանալ դէպի հիւսիս՝ Արարատի կողմերը. նրանց յետևից գնացին հայերը և բռնելով Վանայ լճի, Արաքսի և Եփրատի միջև եղած տարածութիւնը՝ կազմեցին Մեծ Հայքը:

Նշանակում է՝ հայերի ցեղական կազմութեան մէջ տեղ են բռնել բուն հայկական ցեղը՝

իր Թրակիայից բերած սովորութիւններով. այդ ցեղը ճանապարհին իրացրել է այն բոլոր ցեղերի սովորութիւնները եւ բնաւորութեան գծերը, որոնց հետ նա շփուել է (հետեւիներ, փոխիգիացիներ), ձուլել է կիմմերցիներին, սկիթացիներին եւ խարդերի մնացորդներին, որոնց հանդիպեց նա իր նոր հայրենիքում:

Հայերը երբէք յետ չմղուեցին ոչ սկիթացիներից և ոչ կորդուներից (քրդերից). ընդհակառակն՝ շնորհիւ Կիւրոսի բարեկամութեան և Դարեհի ու նրա յաջորդների ժամանակ վայելած ազատութեան՝ նրանք տարածուեցին աւելի և աւելի դէպի արեւելք և հիւսիս:

Նրանք ունէին իրանց սեպհական իշխանական տոհմը, գրութիւնը, կրօնը, մասնաւոր օրէնսդրութիւնը և առաջնորդների անունով փող կտրելու իրաւունքը: Դարեհ նրանց ինքնասիրութիւնը շոյելու համար իսկական հարկ չէր վերցնում, այլ՝ մթերքներից տուրք: Այսպիսով նրանց ազգային փառասիրութեանը բաւարարութիւն տալով՝ նա պահանջեց խաղաղութիւն, կարգ ու կանոն, իրանց երկրի միջով անցնող սուրհանդակների և կարաւանների համար յարգանք ու ապահովութիւն: Այստեղից երեւում է, որ հայերը ակնածելի ոյժ էին կազմում, և նրանք անբաւական մնալով նոյն իսկ այդպիսի լայն ինքնավարութիւնից 519-515 թուերին մի քանի անգամ

ապստամբուեցին: Դարեհ մեծ դժուարութեամբ կարողացաւ կրկին նուաճել նրանց և ապահովութեան համար ստորագրել էր ընտրում ոչ թէ հայ իշխաններից, այլ թագաւորին անձնուէր պարսիկներից: Ինչպէս ուրիշ երկրներում՝ այստեղ էլ ստորագրի կողքին կային երկու ուրիշ պաշտօնեաներ՝ քարտուղար և հրամանատար:

Քանի որ հայերն այժմ ներկայանում են իբրև մի կազմակերպուած, որոշ ձգտումներով ազգութիւն, ապա անհրաժեշտ է ծանօթանալ և նրանց կեանքի պայմաններին, որ տալիս է յոյն պատմիչ Քսենոֆոն:

Ե-րդ դարու վերջերին Պարսկաստանում գահի շուրջը խռովութիւն բարձրացաւ: Արտաքսերքսէս Բ-ի (404-358) կրտսեր եղբայրը՝ փոքր Կիւրոս, որ փոքր Ասիայի սատրապն էր, դաւադրութիւն կազմեց իր եղբօր դէմ և վարձկան յոյն զօրքի օգնութեամբ ցանկացաւ նրա գահը յափշտակել: Վերջնական ճակատամարտը տեղի ունեցաւ Բաբելոնի մօտերքում, ուր Կիւրոս սպանուեց և նրա զօրքը ցրուեց: Յոյն զօրքի հրամանատար Քսենոֆոն ստիպուած էր նահանջել դէպի հայրենիք: Նա մանրամասն նկարագրել է իր 10000 զինուորների նահանջի պատմութիւնը՝ կցած այն երկրների և ազգերի նկարագրութեանցը, որոնց միջով նրանք անցել են:

Նրանք Միջագետքից դուրս գալով՝ հասան արեւելեան Տաւրոսի ստորոտներում տարածուած Վերին Տիգրիսի հովտին: Գետի ձախ ափին էին, երբ իմացան, որ լեռների վրայ (Կորդուաց) ապրում են քրդեր, իսկ միւս

կոչում հայերն էին։ Վերջիններս Պարսից հպատակ էին. նրանց սարապն էր Օրօնտաս և զօրքի հրամանատարը՝ Արտուկաս։ Օրօնտաս և Արտուկաս հայերի, ժարտերի և խալդերի գլուխն անցած անդադար յարձակումներ էին գործում յոյների վրա։ Երբ Քսենոֆոն զէնքով ճանապարհ բանալով հասաւ Տիգրիսին, այնտեղ գիւղեր և բնակչութիւն չգտաւ, որովհետև հայերը քըրդերի դէմ պատերազմում էին։ Յոյները հասան մի աւան։ Այդ աւանը մի կարևոր կենտրոն էր սարապների բնակութեան համար. այնտեղ կար մի ղղեակ, իսկ գլխաւոր տները զարդարուած էին աշտարակներով։ Այնուհետև նրանք իրանց ճանապարհը շարունակեցին դէպի հիւսիս-արևմուտք և հասան մի գետի, որի ափերը ծածկուած էին գիւղերով (Մշոյ գաւառը)։ Այն տարածութիւնը, որի միջով գետը հոսում էր, կազմում էր «Արեւելեան Հայաստան»-ը եւ կոչւում էր Տարօնի նահանգ։ Այդ դեղի սատրապը Պարսից թագաւորի բարեկամ Տերիբազն էր։ Թագաւորը միայն այդ սատրապին էր թոյլ տալիս, որ իրան ձի հեծնելիս օգնի։

Տերիբազը, որ բացի իր սեպհական զօրքից ունէր նաև վարձկան խուլուրներ (խալդեր) և տայքեցիներ, հեծելազօրքով եկաւ յոյների առաջ և մի թարգման ուղարկեց նրանց գլխաւորի մօտ յայտնելու, թէ ինքը ցանկանում է նրանց հետ խօսալ։ Յոյները վճռում են բանակցել և դուրս եկան նրանց դէմ, մօտեցան ձայն լսելի լինելու չափ և հարցրին՝ թէ ինչ է ցանկանում Տերիբազը։

Տերիբազն առաջարկեց դաշն կապել այն պայմանով, որ ինքը նրանց առաջ ոչ մի արգելք չյարուցանի, իսկ յոյները չայրեն բնակութեան տեղերը և բացի պաշարից՝ ուրիշ բան չվերցնեն։ Յոյներն ընդունեցին այդ առաջարկութիւնը և դաշն կապեցին։ Այնուհետև Տերի-

բազի ուղեկցութեամբ, որ իր զօրքով տասն տասարէզ հեռաւորութեան վրայ հետևում էր նրանց, երեք օր ճանապարհ կտրելով յոյները դաշտի միջով հասան թագաւորական ղղեակներին, որոնց շուրջը կուտակուած էին պաշարեղէնով լիքը բնակարաններ։ Գիշերը, երբ քնած էին, սաստիկ ձիւն եկաւ. առաւօտեան վճռեցին, որպէսզի զինուորներին իրանց առաջնորդների հետ ցրուեն գիւղերը, որովհետև նրանք հայերին այլևս թշնամիներ չէին համարում։

Այդտեղ յոյները գտան ուտելուի առատ պաշարմոբթելու համար կենդանիներ, հացահատիկներ, հին անուշահոտ գինի, չամիչ, բանջարի ամեն տեսակ բոնուածքներ։ Զանազան կասկածելի նշանների պատճառով յոյներն սոխպուած էին զօրքը կենտրոնացնել։ Սակայն այդ գիշեր անագին քանակութեամբ ձիւն եկաւ, այնպէս որ քնած մարդիկն ու զէնքերը ձիւնի տակ թաղուեցին. լծկան կենդանիներն անգամ այնպէս էին խրուել, կաշկանդուել, որ շատ մեծ դժուարութեամբ էին կարողանում ձիւնի միջից դուրս գալ։

Յոյները շարունակեցին իրանց ճանապարհը դէպի վեր։ Նրանք ամբողջ բանակը տաքացնելու համար հարիւ էին կարողանում փայտ ճարել. նրանք ցրտից մեծ կորուստներ ունեցան. հետևեալ օրերում շատ զինուորներ քաղցից ընկան, կամ ճանապարհին կորան, որովհետև ձիւնը նրանց կուրացրել կամ բթամատները ցրտահար էր արել։ Յետ մնացած զինուորները, եթէ մինչև գիշերը վրայ հասնելը չէին կարողանում գիւղը հասնել, քնում էին ձիւնի տակ. դրանցից շատերը այնտեղ էլ մնում էին թաղուած՝ զրկուելով պաշարից, որովհետև թշնամին յարձակումներ էր գործում և յետ մնացած կենդանիներին խլելով՝ յետ դարձնում։

Նրանք հասան Բասենի գաւառը, որի բնակիչները

Տարօնի դաշտեցոց նման վախկոտ չէին. նրանք միանալով խալուբների (խալդերի) և տայքեցիների հետ՝ անդադար յարձակումներ էին գործում տասը հազարի վրայ.

Յոյներն անցնելով Արտանիսի ակունքի մօտով՝ հասան Խնուսի դաշտը։ Այստեղ Քսենոֆոն տեղեկացաւ, որ դեռ Հայաստանումն են, իսկ հիւսիսում կը գտնեն խալդերին։

Նշանակում է այդ ժամանակ Հայաստանը տարածւում էր մինչեւ Դումլի դաղ եւ Դեաւուր դաղ լեռները՝ Սեւ ծովի հարաւային ափերում։

Երբ Տերիբազ՝ հակառակ իր կապած դաշինքի սկըսեց յարձակումներ գործել յոյների վրայ, վերջիններս փախցրին նրան և մի քանի մարդ սպանելով՝ խլեցին մօտ քսան ձի և մի վրան։ Վրանը Տերիբազինն էր. նրա մէջ կային արծաթեայ բաժակներ, արծաթեայ ոտներով մահճակալներ և մի քանի մարդիկ, որոնք իրանց անուանում էին մատռուակներ և հացթուխներ։ Այդ բանն ապացուցանում է սատրապների շռայլ կեանքը։

Այն գիւղում որտեղ Քսենոֆոն բանակ դրաւ, տեսաւ բոլոր գիւղացիներին՝ իրանց գիղապետի՝ առաջնորդի ճեռ։ «Գիւղից պակասում էր միայն տասնեօթ մրտրուկ, որոնց մի կողմ էին ժողովել թագաւորին տուրք տալու համար։ Բացակայ էր առաջնորդի աղջիկը, որ ինն օր առաջ էր ամուսնացել. նրա ամուսինը գնացել էր նապաստակ որսալու։ Այդ կինը մօտակայ ոչ մի տեղում չգտնուեցաւ»։

«Հողի տակ թաղուած ընակարանները երկու մուտք ունէին. մէկը մարդկանց համար էր, որը նման էր ջրհորի բերանին. նրա գետնին հաւասար մասը շատ նեղ էր, իսկ ցածը՝ շատ լայն, ուր իջնում էին աստիճաններով։ Երկրորդ մուտքը կենդանիների համար էր և շինուած էր զառիվայր։ Սակայն այդ միւնոյն տան մէջ էին

գտնւում այծերը, ոչխարները, կովերը, թռչունները՝ իրանց ձագերով և փոքրիկներով։ Բոլորը կերակրւում էին ներքեւի ախոռից, ուր պահւում էր անունդը։ Այդտեղ նոյնպէս կարելի էր գտնել և գարեջուր՝ լցրած՝ հողէ ամանների մէջ, ցորեն, գարի և չամիչ։ Այս անկերպարան ամանների մէջ գարին հաւասարւում էր բերանին. նրանց մէջ ընկղմուած էին եղեգնեայ ծակ խողովակներ. խմելու համար բերանները գնում էին խողովակի ծայրին և վեր քաշելով ծծում։ Այդ խմիչքն առանց ջուր խառնելու շատ թունդ էր, բայց վարժուածների համար՝ խիստ հաճելի»։

Քսենոֆոն գիւղի գլխաւորին իր մօտ ճաշի հրաւիրեց և նրան սիրելի դարձաւ, որովհետև ապահովացրեց, որ նրա որդուն չի վերցնիլ ծառայեցնելու համար։ Այդ երախտագէտ մարդը ցոյց տուաւ, թէ որտեղ էր թաղուած գինին։

Հայերը պարսկերէն գիտէին, մինչև անգամ գեղջկուհիները, որը սակայն նրանց լեզուն չէր։ Եւ, իրօք, Քսենոֆոն պարսկերէն թարգմանող մի մարդու միջոցով հարցնում է գիւղապետին՝ «Ինչ է այս երկրի անունը»։ —«Հայաստան», պատասխանում է նա. «Ինչու համար են վերցրել այս ձիերը», շարունակում է Քսենոֆոն։ —«Դա տուրք է թագաւորի համար»։

Դրանից յետոյ Քսենոֆոն տեղեկացաւ, որ մօտակայ գաւառը խալուբներինն է։

Յոյներն աւելի հիւսիս գնալով պատահեցին խալդերի հնացորդներին, «որոնք աւելի պատերազմասէր էին, քան այն ազգերը, որոնց մենք հանդիպեցինք։ Ստիպուած էինք նրանց դէմ պատերազմել։ Նրանց զրահը (զգեստը) կտաւից էր, որ հասնում էր մինչև ազդրերը։ Գղանցքները փոխարէն ոլորած չուաններ էին կախած՝ ծոցերի պէս։ Ունէին նաև սուսապաններ, սաղաւարտ, իսկ ոտքերի պէս։

մէջքներին կապած ունէին սպարտական գաշունի նման թրեր, որոնցով յօշոտում էին գերիներին. ապա նրանց գլուխները կտրելով՝ կառավարները ձեռքներին բռնած գնում էին։ Երբ բնակիչներն տեսնում էին, երգում եւ պարում էին։ Նրանք կրում էին նաև երկայն միածայր նիզակ, որը մօտաւորապէս երեք կանգուն երկայնութիւն ունէր»։

Խալդերը դեռ եւս չէին կորցրել իրանց պատերազմական կոչումը։ Երկարատեւ պատերազմները նրանց մէջ զարգացրել էին վայրենի հակումներ։

Նրանք երբ տեսան, որ յոյները անցնում են, թագնուեցին իրանց ամրութիւններում և հետապնդում ու անդադար կռւում էին։ Յետոյ մտան յարմար տեղեր, որտեղ, ըստ իրանց նախնի սովորութեան, փոխադրել էին եւ իրանց ամբողջ պաշարը, մինչև որ յոյները ոչ մի պաշար չգտնելով՝ Տայոց երկրից բերած անասունները կերան։

Խալդերի մասին եղած տեղեկութիւնները լրացնում է և միւս յոյն պատմիչ Ստրաբոն, որը Քսենոֆոնից երկու հարիւր տարի ուշ է ապրել։

«Սրանց երկրովն է անցնում Պարխարեան լեռնաշղթան։ Այն ցեղերը, որոնք լեռների վրայ են ապրում, վայրենի են։ Ցեղեր էլ կան, որոնց բնակութեան տեղերը ծառերի կատարներն են, կամ փայտաշէն աշտարակների տանիքները։ Դրանք Մոսինք են կոչւում։ Այդ բոլոր բարբարոսներն ուտում են ոչ այլ ինչ, եթէ ոչ՝ որսի միս և վայրի կաղին, որ ծառերից են թօթափում։ Նրանք մի տեսակ հնարք էլ ունին ուղևորների վրայ յարձակուելու համար. այդ այն է, որ իրանց բարձր աշտարակների բարձրութիւններից նետւում էին (խոյանում էին) թշնամիների վերայ»։

Մօտաւորապէս երեք հարիւր տարի այս դէպքերից յետոյ, երբ հռովմայեցոց լեգիոններն անցնում էին այդ լեռներից, խալդերը դրել էին անցնելիք ճանապարհի անցքերում անօթներ՝ մի տեսակ խմիչքով լցուած, որի հետ խառնել էին արբեցնող մեղր. այդ մեղրը ծառերի ճիւղերից է ծորում։ Ապա նրանք սպասում էին՝ թէ ինչ կըլինի վախճանը։ Եւ երբ հռովմայեցոց զօրքը խմել ու արբեցութեան մէջ էր ընկել, հանելով կոտորում էին իրանց տեսակի։ «Այդպէս են և այժմուայ այն խալդերը, որոնք աւելի մօտ են փառնակեցիներին, քան մնացած ցեղերը։ Դրանք հնում կոչւում էին Քալիբներ (խալուբներ—խալդեր)»։

IV

Աղեքսանդր Մեծ. հայերը Մակեդոնական—Սելևկեան իշխանութեան ներքոյ. Սելևկեան իշխանութեան անկումը. հայերի փորձերը՝ անկախ իշխանութիւն ստեղծելու. Յունա-Պարսկական քաղաքակրթութիւն. Առաջաւոր Ասիայի քաղաքական փոփոխութիւնները։

Հայերն ապրեցին Պարսկական իշխանութեան տակ՝ Դարեհ Մեծի մշակած օրէնքներով՝ երկու հարիւր երկար ու ձիգ տարիներ։ Այդքան ժամանակուայ ընթացքում հայերն իրանց ձգտումների համաձայն զարգանալով, բազմանալով և, 'ի հաշիւ նախկին ընիկների ու հարևանների, իրանց երկրի սահմաններն ընդարձակելով՝ միաժամանակ իւրացրին պարսկական քաղաքակրթութիւնը և դարձան Պարսկաստանի մի անբաժան մասը։ Նրանց սատրապները, նախկին ապստամբական փորձերից յետոյ, միշտ էլ Աքեմենեան տոհմիցն էին և ժառանգաբար յաջորդում էին իրար։ Այս հանգամանքը մանաւանդ իրաւունք էր տալիս Պարսից թագաւորներին՝ նայել նոր կազմակերպուող Հայաստան երկրի վրայ, իբրև իրանց ժառանգութեան վրայ։ Այդ է պատճառը, որ պարսից թագաւորները ոչ միայն չկանգնեցրին հայերի առաջխաղացութիւնը, այլ նոյն իսկ նպաստեցին ու աջակցեցին, որպէսզի նրանք թէ տարածուեն և թէ տիրեն առաջաւոր Ասիայի մի խոշոր մասին՝ միաժամանակ իրանց ենթարկելով

ու ձուլելով նախկին ընիկներին։

Պարսիկները նայում էին հայերի վրայ, որպես իրանց հաւատարիմ ցեղակիցների վրայ, որոնք Պարսկաստանի հիւսիս-արևմտեան մասը կարող էին պահպանել նոր աշխարհ ցեղերից՝ միաժամանակ պարսկական ազդեցութիւնն ու կոյստուան կրտարածելի իրանց հարևանների մէջ։

Այդ երկու հարիւր տարուայ ընթացքում է, որ հայերի մէջ մուտք է գործում պարսկական կրօնը, բարքերն ու սովորութիւնները և նրանցից տարածուում Ալիսի և Իրիսի աւազաններում ապրող ցեղերի մէջ, Կապադովկիայում, Տաւրոսում և ընդհանրապէս այն բոլոր վայրերում, որտեղ հայեր կային։ Այդ տեղերում գործածութեան մէջ մտան Պարսկական պաշտօնական գրութիւնները, Արամէական սեպագրերը, որ գործ էին ածում հասարակական վճիռների, արձանագրութիւնների և դրամների համար։

Այս բոլորից յետոյ պարզ է, որ պարսից թագաւորներն իրաւունք ունեին Հայաստանն իրանց երկրի անբաժան մասը համարելու։

Վանայ լճի արևմտեան ափում՝ Ներբովթ լերան մէջ երևան է հանուած մի դամբարան, որի պատերը ծածկուած են յիշատակարաններով։ Նրանց մէջ յիշատակուում են մի շարք թագաւորների և թագուհիների անուններ, որոնց ազգականութիւնը ցոյց է տալիս, որ նրանք Պարսից թագաւորական տոհմիցն էին և իշխում

էին հարաւային Հայաստանի կամ Ծոփաց աշխարհի վրայ։ Իսկ թէ ովքեր էին հիւսիսային Հայաստանի իշխողները՝ յայտնի չէ։

Հայերը պարսկական իշխանութեան վերջերին արդէն մոտ էին զարձել բուն Ուրարտուն եւ կազմել Մեծ Հայքը։

Իրերն այդ դրութեան մէջ էին, երբ 330 թուին արեւմուտքից տեղի ունեցաւ մի մեծ արշաւանք։ Այդ արշաւանքը կազմակերպողն էր Աղէքսանդր Մակեդոնացին։

Դ.-րդ դարում հիւսիսային Յունաստանում բարձրացաւ փոքրիկ, բայց ուժեղ Մակեդոնիան՝ շնորհիւ իր քաջ և խելացի թագաւորների՝ Փիլիպպոսի և նրա որդի Աղէքսանդրի։

Աղէքսանդր յղացաւ մի հսկայական ծրագիր. տիրել ամբողջ Ասիային, կազմակերպել մի հզօր Յունա-Ասիական պետութիւն և ենթարկել նրան մի ընդհանուր՝ յունական կուլ՛տուրայի, որ ստեղծել էին Յունաստանի Աթէնք, Սպարտա և Թէբէ քաղաքները։ Այդպիսի հսկայական ծրագիրն իրագործելու համար Աղէքսանդր ունէր անսերկիւղ սիրտ, համարձակ բնաւորութիւն, փառասիրական տենչանք, պատերազմական հմտութիւն և յունական ռազմական արհեստով վարժեցրած ուժեղ զօրաբանակ։

Պարսկաստանի համար արդէն անցել էր Դարեհ Մեծի փառաւոր շրջանը։ Պարսկաստանն իր

ծանրաշարժ զօրքով և ապիկար թագաւորներով, որոնք իրանց փառասիրութեան համար էին յաճախ Դարեհ Մեծի անունը կրում, առանց նրա յատկութիւններն ունենալու, — այլոց չէր կարողանում երկիւղ ներշնչել հպատակ ազգերին, որոնք յաճախակի ապստամբում էին, միանգամայն անկախութիւն ձեռք բերում, կամ թէ սիպում էին արքայից արքաներին անընդհատ պատերազմներ վարել և ուժասպառ լինել։ Այն սատրապները, որոնք բուն տեղական ժողովրդի իշխանական տոհմից էին լինում, յարմար առիթը ձեռքից բաց չէին թողնում իրանց անկախ հրատարակելու, իսկ հայերը՝ շնորհիւ Արամեանական տոհմի ազգակից սատրապների՝ միշտ էլ ենազանդ մնացին Պարսկաստանին, և երբ Աղէքսանդր մոտեցաւ Պարսկական տէրութեան սահմաններին, իր առաջ խմբուած տեսաւ մի մեծ զօրաբանակ՝ կազմուած Դարեհ Գ. Կոդոմանի ամենաընտիր զօրքերից և նրանց կողքին կանգնած հայկական զնդից. հայերն ունէին 4000 հեռաձակ և 700 հեծեալ։ Ըստ երևութին դրանք միայն հարաւային Հայաստանից էին։

Մովսէս Խորենացին գուսանական երգերից առնելով տալիս է հայերի այդ ժամանակուայ թագաւորի անունը. նա Վահէն էր, որը «յարձակուելով Աղէքսանդրը Մակեդոնացու վրայ՝ մեռաւ (սպանուեց)»։

Աղէքսանդրը յաղթեց նրանց. Դարեհ պատե-

բազմի դաշտից փախաւ և Պարսկական ամբողջ կայսրութիւնն ընկաւ նրա ձեռքը։

Այս բոլորից երևում է, որ հայերը պարսիկներին բաղդակից մնացին մինչև Մակեդոնական իշխանութեան տակ ընկնելը։

Այնուհետև ազգային աւանդութիւնը նոյնպէս լռում է։ Մովսէս Խորենացին շարունակում է. «Դրանից յետոյ (Վահէի մահուանից յետոյ) ոչ մի ճշմարիտ բան չունիմ պատմելու, որովհետև ժողովրդական խառնակութիւն ընկնելով՝ մէկը միւսի գլուխն էր թռչում՝ մեր աշխարհին տիրելու համար»։

Աղէքսանդր տիրելով Աքեմենեանների լայնածաւալ երկրին, ցանկացաւ շատ սովորութիւններով և արտաքին ձևերով նմանուիլ այդ ցեղի թագաւորներին, որով գրաւեց պարսիկ ժողովրդի սիրտը։ Միւս կողմից՝ Պարսկական պետութեան մէջ յունական կարգերը, սովորութիւններն ու ոգին մացնելը նրա մշտական հոգսերն էին կազմում։ Ինքն Աղէքսանդր պսակուեց նախ Բակտրիայի իշխանի դստեր հետ, ապա, քստ պարսկական սովորութեան, կնութեան առաւ Դարեհի աղջկանը։ Նա գլխին ծածկում էր արքայից արքայի խոյրը, հագնում պարսկական զգեստ. իրան շրջապատել էր դրանիկների խմբով և արևելեան սովորութեան համաձայն՝ որոշ յարգանքի ձև էր պահանջում ստորադրեալներից։ Այնուհետև իր 10000 զինուորներին ամուսնացրեց պարսիկ աղ-

ջիկների հետ, վերակազմեց ամբողջ պարսկական բանակը ըստ յունականի. ուշք դարձրեց գետերի և նաւագնացութեան վրայ, հոգ տարաւ ճանապարհներ շինելու վրայ, աւազակային ցեղերը ոչնչացրեց, գլխաւոր ճանապարհների վրայ մի ամբողջ շարք քաղաքներ հիմնեց, բերդապահ գընդեր նշանակեց, որոնք հովանաւորում էին վաճառականութիւնն ու ազատ յարաբերութիւնը։ Շնորհիւ այդ քաղաքների և նրանց մէջ հաստատուած յունական գաղութների, յունական լեզուն, արհեստները, հաստատութիւնները, կրօնական գաղափարները և սովորութիւնները տարածւում էին Արևելքում։

Այսպիսով հիմք դրուեց մի նոր՝ յունա-պարսկական քաղաքակրթութեան։

Աղէքսանդր դեռ իր կենդանութեան ժամանակ Փոքր Հայքի վրայ սատրապ նշանակեց Միհրանին՝ իր մատուցած ծառայութեան փոխարէն. Միհրանի յաջորդները որդոց որդի իշխում էին Հայաստանի այդ մասի վրայ մինչև Աղէքսանդրի մահը, որ տեղի ունեցաւ 323 թուին։

Աղէքսանդրի մահուանից յետոյ նրա լայնածաւալ տէրութիւնը բաժանուեց երեք մասի։ Ասոր Ասիական մասը՝ Պարսկաստան, Հայաստան, Ասորեստան, Փոքր-Ասիա ընկաւ Սելևկոս զօրավարին, որն սկսեց Աղէքսանդրի ձեռնարկած գործը՝ Արևելքի հելլենացումը շարունակել։ Սելևկոս ըս-

կրզբում վերացրեց Հայաստանի ժառանգական սատրապութիւնը, որը բարձր գիրք էր գրաւել ժողովրդի աչքում. իսկ այդ հանգամանքը ձեռնտու չէր Մակեդոնական իշխանութեանը։

Սակայն Մակեդոնական—Սելեւկեան իշխանութիւնը երբեմ մուտ չդուրեց նոր կազմակերպուած Հայաստանի նիւսիսային շրջանս մասերը. այնտեղի ժողովուրդը շարունակեց ապրել պարսկական բարբարարքութեամբ՝ նոցն իսկ Պարսկաստանի անկումից յետոյ։

Հայաստանի այդ մասը բոլորովին ազատ էր. նա պարտաւոր էր միայն հնազանդուել գերիշխանին, տարեկան տուրք վճարել և զինուորական ծառայութիւն կատարել։ Հայերն այդ պարտականութիւնից ազատ էին Պարսկական իշխանութեան ժամանակ. դրա համար էլ այս կարգերից պէտք է գժգոհ մնային։ Այդ է պատճառը, որ նրանք անդադար աշխատում էին իրանց ազգային հայ սատրապներին նորից իշխանութեան մէջ հաստատել։ Այդ բանը նրանց յաջողուեց 317 թուին։ Սելեւկոսն ուղարկած եղաւ նիւն հայ իշխաններից մէկին՝ Հրանատին նշանակել սատրապ։

Հայ իշխանները բաւականաչափ ազատութիւն էին վայելում. նրանք իրաւունք ունէին սեպհական զօրք ունենալ, հարևանների հետ իրանց ունեցած վէճերը պատերազմով վերջացնել, նոյն իսկ ընդարձակել իրանց երկիրը զէնքի ուժով։ Հայերն

այդ ազատութիւնից օգտուելով սկսեցին մտածել միանգամայն անկախութիւն ձեռք բերելու մասին։ Սակայն նրանց սկզբնական ապստամբական փորձերն անյաջող վերջացան։ Սելեւկոս կարողացաւ ճնշել նրանց ապստամբական փորձերը։

Երկար չտեւեց Սելեւկեան իշխանութիւնը. ընկճուած ազգերը հետզհետէ գլուխ բարձրացրին և Գ. դարու վերջերին կամաց—կամաց կազմուեցին հետևեալ անկախ պետութիւնները. ա. Պարթեւական՝ Եփրատից մինչև Հնդկաստան, բ. Հայկական՝ Վերին Եփրատի և Արաքսի հովիտներում, գ. Պոնտոսի թագաւորութիւնը՝ Փոքր Ասիայում, Սև ծովի հարաւ-արևելեան ափերում, դ. Պերգամի և ե. Բիւթանիայի պետութիւնները՝ արևմուտքում։

Հայերի այդ ժամանակաշրջանի իշխողների անունները յայտնի չեն։ Միմիայն յայտնի է, որ իսկական Հայաստանի վրայ Գ. դարում իշխում էր Արտաւազդ անունով մէկը։ Իսկ Բ. դարում Հայաստանը բաժանուում էր երեք մասի՝ Մեծ Հայք, Փոքր Հայք և Ծոփաց աշխարհ.

դ.
Ազգային
Արտաշիսեան հարստութիւն.

I

Արտաշէս հիմնադիր Արտաշիսեան հարստութեան. Մեծ Հայքի և Ծոփաց աշխարհի միացումը. Պարթևները Պարսկաստանում. Պոնտոսի թագաւորութիւնը. Յունաստանի անկումը և Հռովմի բարձրանալը,

Բ. դարում Արտաւազդին յաջորդեց Մեծ Հայքում իր որդի Արտաշէս 190—159։ Օտար պատմիչները նրան Արտաքսիաս անունն են տալիս։ Ծոփաց աշխարհում թագաւորում էր Զարեհ (Զարիադրէս), որը հին Աքեմենեան տան ցեղակից սատրապների շառաւիղն էր։ Արտաշէսն ու Զարեհ միաբանելով՝ իրանց երկիրը վերջնականապէս ազատեցին Մակեդոնական—Սելևկեան իշխանութիւնից։ Սակայն այդ երկու թագաւորները երբէք չմտածեցին միանալ եւ մի ուժեղ թագաւորութիւն ստեղծել:

Արտաշէս հիմնելով Մեծ Հայքի թագաւորութիւնը՝ աթոռը հաստատեց իր անունով շինած Արտաշատ մայրաքաղաքում։ Նրա անունով յաջորդ թագաւորները կոչուեցին Արտաշիսեան: Նրա թագաւորութիւնը տարածւում էր Արաքսի հովտում՝ Արարատի շուրջը, որի հետ միացրեց Սանդիասի (Արածանիի) և Սևանայ լճի հովիտները և Կովկասի մի մասը։ Նրա երկրի արևմտեան կողմում տարածւում էր Փոքր Հայքը, որը նոյնպէս անկախ թագաւորութիւն էր։

Հէնց որ Արտաշէս և Զարեհ ազատուեցին Մակեդոնական իշխանութիւնից, նրանց մէջ սկսուեց մի ներքին կռիւ, որը շարունակուեց և նրանց յաջորդների ժամանակ։ Այդ թագաւորութիւններից ամենից զօրեղն ու գերիշխողը Մեծ Հայքն էր։ Արտաշէս կարողացաւ կազմակերպել մի ուժեղ պետութիւն, որը թողեց իր որդի Արտաւազդին (159—149)։

Այնուհետև Արտաւազդի յաջորդների մասին տեղեկութիւններ պակասում են մինչև 95 թ. Ք. առ., երբ գահ բարձրացաւ Տիգրան Մեծ։

Դարեհ Գ. Կոդոմանոս 331 թուին պատերազմի դաշտից փախչելով՝ ապաւինել էր Բակտրիայի սատրապ Բասոսի մօտ՝ մտածելով նոր զօրք ժողովել և դալ իր երկիրը խլել Աղէքսանդրից։ Սակայն Բասոս, ըստ երևութին Աղէքսանդրին հաճոյանալու նպատակով, սպանեց նրան։ Աղէքսանդը խստութեամբ վարուեց տիրանենդ սատրապի հետ. նրան սպանել տուաւ։

Դարեհի ընտանիքն ու ցեղակիցները մնացին Բակտրիայում՝ իբրև թագաւորական (պահլաւ) գարմ։ Աղէքսանդը նրանց առանձին բնակութեան տեղ տուաւ, որ կոչուեց Բահլ. գաւառի ամբողջ

եկամուտը Աղէքսանդրի հրամանով Դարեհի ցեղակիցներին ու ժառանգներին էր հասնում։

Այդ երկրում Աղէքսանդր հիմնել էր ծայրագոյն Աղէքսանդրիան և կազմել յունական թագաւորութիւն՝ միանգամայն յունական սովորութիւններով և նիստ ու կացով։ Պարսից արքայորդիները իրանց բուն հայրենիքից հեռու գտնուելով՝ յունական ազդեցութեան տակ շատ բան իւրացրին. թէ յունական քաղաքակրթութիւնը, թէ սովորութիւնները, թէ նիստ ու կացը, որոնք մտցրին և իրանց պալատում։

Դարեհի սերնդի միւս մասը մնացել էր Պարսկաստանում և իբրև թագաւորական սերունդ՝ դարձեալ պահլաւիկ էր կոչւում։ Այս վերջին ճիւղին պատկանող անձինք մնացել էին հին՝ պարսկական հոգով, և պարսիկ ժողովուրդը սրանց աւելի էր սիրում։

Բակտրիայում Մակեդոնական—յունական թագաւորութեան անկումից յետոյ՝ Դարեհ կամ Զարեհ թագաւորեց այդ երկրի վրայ իբրև առաջին արշակ (թագաւոր) 126 թուին Ք. առ.։

Դարեհի (Զարեհի) յաջորդներն իրենց հետ միացնելով պարթև կոչուած ցեղը, արշաւեցին Պարսկաստանի վրայ այն միջոցին, երբ Սելևկեան իշխանութիւնն իր անկմանն էր մօտեցել։ Նրանք տիրեցին Պարսկաստանին՝ իբրև իրանց նախահայրերի ժառանգութեանը։ Սակայն պարսիկ ժողովուրդը նրանց չէր սիրում՝ իբրև յունական խաղաքաղաքական հետեւողների։

Այնուհետև նորեկ պահլաւները, իբրև Աքեմենեան տոհմի սերունդ, մտածեցին տիրանալ և Հայաստանին։ Սակայն Հայաստանում, ինչպէս տեսանք, արդէն կազմուել էր մի անկախ և զօրեղ ազգային թագաւորութիւն, և պարթևներին մնում էր՝ կամ ուժով տիրել Հայաստանին, կամ թէ հաշտուել իրականութեան հետ։ Սկզբում տեղի ունեցան մի շարք պատերազմներ պարթևաց և Արտաշիսեան թագաւորների մէջ, սակայն հայերն արդէն ամրապնդուել էին իրանց երկրում և պարթևների ջանքերը՝ նրանց երկրին տիրելու, —'ի դուր անցան։

Պարթևները հաստատուեցին միջին Ասիայի և Եփրատի միջև ընկած տարածութեան վրայ։ Իրանց դրութիւնն ամրապնդելու նպատակով զօրքի սպարապետութիւնը յանձնեցին Պարսկաստանի պահլաւներին, իսկ Բակտրիայի կուսակալներ մնացին դարձեալ նրանց ցեղակիցները, որոնք յետակայում միանգամայն անկախ էին և կոչւում էին Քուշանք կամ Քուշանաց ցեղ։ Տիգրանի հօր ժամանակ պարթևները հարկադրել էին հայերին ճանաչել իրանց գերիշխանութիւնը և տիրել էին Մեծ Հայքի ու Ծոփաց աշխարհի եօթանասուն «հովիտներին» (գաւառներին)։ Թագաժառանգ Տիգրանը պատանդ էր պարթևաց արքու-

նիքում։

Հայաստանի հիւսիս-արևմտեան կողմում՝ Պոնտոսի ափին արդէն կազմակերպուել էր Պոնտական թագաւորութիւնը, որի գերիշխանութիւնը տարածւում էր և Փոքր Հայքի վրայ։ Հայերը մատակարարում էին Պոնտոսի թագաւորութեանն ահագին թուով ձիեր՝ պատերազմական կարիքների համար, որովհետև նրանք յայտնի էին որպէս ձիաբուծներ, այլ և ուժեղ հեծելազօրք։ Ա. դարում Պոնտոսի թագաւորն էր քաջ և անուանի Միհրդատը։

Արևմուտքում Յունաստանի անկումից յետոյ, բարձրացել և համաշխարհային հռչակ էր ստացել Հռովմայեցոց պետութիւնը։ Վերջինս Եւրոպայում և Աֆրիկայում շատ տեղեր իրեն ենթարկելուց յետոյ՝ ընդհարուեց մակեդոնական իշխանութեան հետ, սկզբում Աֆրիկայում, ապա և Ասիայում։ Այդպիսով սկիզբ դրուեց մի շարք արշաւանքների, որոնց նպատակն էր տիրել Առաջաւոր Ասիային։ Առաջին պետութիւնը, որ մակեդոնական իշխանութեան անկումից յետոյ ընդհարուեց Փոքր Ասիայում Հռովմի հետ, Պոնտոսի թագաւորութիւնն էր քաջ և արկածախնդիր Միհրդատի առաջնորդութեամբ։ Վերջինս մի շարք պատերազմներով՝ Հռովմի և Տաւրիկեան Խերսոնեսի դէմ՝ արդէն յայտնի էր դարձել։ Նա ցանկանում էր Փոքր Ասիան և Սև ծովի հիւսիսային երկրներն իրեն ենթարկել, բայց զգում էր,

որ մենակ անկարող է այդ ծրագիրն իրագործել, դրա համար էլ որոնում էր մի ուժեղ դաշնակից։ Այդ դաշնակիցը կարող էր լինել իր հարևան Մեծ Հայքի թագաւոր երիտասարդ Տիգրանը, որ նոր էր պարթևաց արքունիքից վերադարձել և բարձրացել հօր գահը։ Նրա հեծելազօրքը և աղեղնաւորները գովուած էին։

II

Տիգրան Մեծ (95—56). Միհրդատի և Տիգրանի դաշնադրութիւնը. առաջին ընդհարում հռովմայեցիների հետ. Կապադովկիայի խնդիրը. հռովմայեցիների պարտութիւնը. Տիգրան Պարթևաստանում. Տիգրան արքայից արքայ. յունական քաղաքակրթութեան մուտքը։

Միհրդատ իր պալատականի (Կորդիոս) միջոցով առաջարկեց Տիգրանին յարձակողական և բարեկամական դաշն կապել։ Տիգրան տատանւում էր, որովհետև նա հռովմայեցիների հետ ոչ մի հաշիւ չուներ, այլև հարկ չէր զտնում ընդհարուելու այնպիսի հզօր պետութեան հետ։

Միհրդատի պալատականը հրապուրեց Տիգրանին՝ յայտնելով, որ Միհրդատ իր աղջկանը՝ Կլէոպատրային կնութեան է տալիս Տիգրանին։ Երիտասարդ թագաւորն ընդունեց, մանաւանդ, որ նրանց առաջին յարձակումը Կապադովկիայի վրայ պէտք է լինէր, որի սատրապը յայտնի էր իր թուլութեամբ։

Այսպիսով արտաքին դեպքերն անակնկալ կերպով ապարեզ նետեցին Տիգրանին՝ նրա հետ եւ հայերին։ Տիգրանի թագաւորութիւնը եղաւ հայերի պատմութեան ամենափառաւոր շրջաններից մէկը։

Հայերը մի անգամ ապարէզ նետուելով՝ այլևս չկարողացան յետ կանգնել և զսպել իրանց պատերազմական կրքերը։

Տիգրանի և Միհրդատի դաշնադրութիւնը

կայանում էր հետևեալում. զերիներն ու աւարը պէտք է Տիգրանը վերցներ, իսկ նուաճած երկրները պէտք է միանային Պոնտոսի թագաւորութեանը։

Իսկապէս Միհրդատին հարկաւոր էին հայոց զօրքերը, որովհետև նրանք թէ ծովի և թէ ցամաքի վրայ աչքի էին ընկնում իրանց ճարպիկութեամբ և քաջութեամբ։ Նրանց աղեղները դեռ էին շինուած, այնպէս որ 69 սաժենից աւելի տարածութիւն էին կտրում։ Յետագայ պատերազմներում, ինչպէս կըտեսնենք, այդ նետաձիգներն ուղղակի հերոսներ էին։

Միհրդատ և Տիգրան ամենից առաջ յարձակուեցին Կապադովկիայի սատրապ Արիոբարզանի վրայ, որ հպատակւում էր Հռովմին։ Նա իր գանձերով փախաւ Հռովմի պետութեան սահմանները, իսկ Կապադովկիայում Միհրդատ սատրապ նշանակեց Կորդիոսին։

Միհրդատ դրանով չբաւականացաւ. նա անցնելով հայկական և պոնտական բանակների գլուխը և օգտուելով Հռովմի դժուար կացութիւնից (նա դաշնակիցների դէմ պատերազմ էր մղում), խլեց Ասիական գաւառները և կոտորեց ձեռքն ընկած հռովմայեցիներին, որոնց թիւը հասնում էր 80000-ի՝ թէ քաղաքացիներ և թէ զօրք։ Այնուհետև նա ուղղակի արշաւեց Յունաստանի վրայ, որը հպատակուեց նրան համարեա առանց դիմադրութեան։ Այդտեղից նա պատրաստւում էր

արշաւելու Հռովմի վրայ։

Այս յաջողութիւնը մի կողմից վստահութիւն ներշնչեց Տիգրանի դէպի Միհրդատի անձնուրութիւնը եւ իրանց ձեռնարկած ծրագրի իրականացումը, միւս կողմից ստիպեցին Հռովմի ծերակոյտին բուրջ ուշադրութիւն դարձնել Ասիայում պատրաստուող այդ վտանգի վրայ։

Հռովմի ծերակոյտը վեց լեգիոնից բաղկացած մի բանակ յանձնեց նշանաւոր պատերազմող Կորնելիոս Սիլլային։ Հռովմէական բանակը նոր էր հասել Յունաստան, երբ ծերակոյտը դրդուած Սիլլայի հակառակորդներից՝ նրան յետ կանչեց։ Այս հանգամանքն աւելի խրախուսեց Միհրդատին, և նա սկսեց մեծ պատրաստութիւն տեսնել Իտալիա արշաւելու համար։ Սիլլային կրկին յաջողուեց բանակի գլուխն անցնել և գալ Յունաստան։ Նա մեծ դժուարութիւններով կարողացաւ Աթէնքում Միհրդատի նորանոր նուաճումների առաջն առնել։ Վերջապէս Բէովտիայում երկու անգամ ջարդեց Միհրդատին և հարկադրեց նրան թողնել Յունաստանը։ Պայմաններից մէկն էր՝ Միհրդատի դաւանած պատերազմական նաւերը իրանց հայ նեստաձիգներով միասին պէտք է լինեին։

Սակայն Սիլլան վերջնականապէս չկարողացաւ ոչնչացնել Միհրդատի զօրութիւնը, և որովհետև ինքն ստիպուած էր կրկին վերադառնալ

Իտալիա, ուստի շուտով նրա հետ խաղաղութեան դաշն կապեց։

Միհրդատն ու Տիգրան Փոքր Ասիայի տէրերը միացին և նուաճած երկրները բաժանեցին իրանց ցանկութեան համաձայն։ Մանր իշխանութիւններից նրանք, որոնք հակուած էին դէպի Հռովմը, անխնայ ոչնչացուում էին դաշնակից թագաւորների ձեռքով։ Թէև Տիգրան հասկացաւ իր աներջոջ արկածախնդիր բնաւորութիւնը և նրա վտանգաւոր ծրագրի հետ ծանօթացաւ, իսկ այս վերջին հանգամանքն ստիպում էր նրան շատ անգամ անվճռական լինել ու տատանման դրութեան մէջ ընկնել, սակայն մի անգամ նեռուելով ասպարէզ և նրա պատերազմական հակումները դրդուելով, աշխարհակալական փառասիրութիւնը թոյլ չտուեց ասպարէզը թողնել։ Միւս կողմից էլ Տիգրան ցանկացաւ օգտուել իր հզօր դաշնակցի աջակցութիւնից և խորտակել այն մի շարք հարևաններին, որոնք բարեկամ էին պարթևաց իշխանութեանը և հարաւից շրջապատում էին իր երկիրը։ Միհրդատ աւելի և աւելի ուրախանում էր՝ տեսնելով իր փեսայի՝ Տիգրանի հզօրանալը՝ Ծովից աշխարհի միացումով ու իր հեռաւոր նպատակների համար ամեն կերպ օգնում էր նրան։

Ահա այսպիսի շահերով էին կապուած այդ երկու թագաւորները։

Կապադովկիայի գահազուրկ թագաւոր Արիոբարզան երկու անգամ փորձեց հռովմայեցոց օգնութեամբ ձեռք բերել իր գահը։ Բայց երկու անգամ էլ հայկական զօրքը նրան քշեց։ Նրա փոխարէն թագաւորեց Միհրդատի որդի Արիարաթ։

Միհրդատ մտածեց իր հսկայական ծրագիրն իրագործել՝ խորտակել հռովմայեցոց զօրութիւնը։ Նա ձեռնարկեց 200000—300000 հոգուց բաղկացած մի ահեղ բանակ պատրաստելու։ Իր այդ բանակը պաշտպանելու համար պատրաստեց 300 նաւերից բաղկացած մի նաւատորմիղ։ Նրա զօրաբանակում կային 10000 հեծեալներ՝ Փոքր Հայքից ժողոված, որոնք Տիգրանի՝ Մեծ Հայքի զօրքի թուին չէին պատկանում։

Միհրդատ 88 թուին յարձակուեց Փոքր Ասիայի վրայ և հասաւ մինչև Բիւթանիա։ Հռովմայեցիք դիմադրում էին 190000 զօրքով. նրանք կատարեալ պարտութիւն կրեցին։

Մինչ Միհրդատ զբաղուած էր այդ պատերազմով, Տիգրան յարմար ժամանակ համարեց իր երկրի սահմանները ընդարձակելու դէպի հարաւ, արևելք և հիւսիս։ Պարթևաստանում այդ միջոցին գահի շուրջը խռովութիւն կար։ Նա իր վրէժը լուծելու համար նախ յարձակուեց Պարսկաստանի վրայ. անցաւ Եփրատը, Արբելա, Մարաստան և Ատրպատական, այրեց Եկբատանը և հարկադրեց

պարթևաց թագաւորին վերադարձնել այն եօթանասուն գաւառները, որոնք խլուած էին Տիգրանի հօր թագաւորութեան ժամանակ, այլ և զիջել Միջագետքի երկու պտղաբեր նահանգներն ու ճանաչել իր արքայից արքայութիւնը։ Դրանց հետ միաժամանակ նրա գերիշխանութիւնը ճանաչեցին ադուանները, իբերները, Մեծ Մարաստանը, որի թագաւորն ամուսնացաւ Տիգրանի դստեր հետ, Կորդուաց երկիրը, Ադիաբենը (Վերին Տիգրիսի վրայ)։ Այդ երկրների թագաւորները դարձան արքայից արքայ Տիգրանի վասսալները։ «Նրանք խաղաղութեան ժամանակ հպատակութիւն էին ցոյց տալիս և տուրք վճարում, իսկ պատերազմի միջոցին զօրք ու բանուորներ տալիս»։

Տիգրան այնուհետև հիւսիսից և արևելքից վախ չունենալով՝ անցաւ Եփրատի արևմտեան կողմը և թափառաշրջիկ բեդուինների անապատից գաղթեցրեց ու նստակեաց դարձրեց. նա տէր դարձաւ կարաւանների Մեծ ճանապարհին։ Այդտեղից շատ մօտ էր Ասորիքը, ուր իշխում էին վերջին Սելևկեանները։ Տիգրան իր իշխանութեան տակ կէս միլիոն զօրք ունէր, որի անունը միայն բաւական էր, որ սարսափէին խեղճ սելևկեանները։ Եւ 83 թուին Տիգրան առանց լուրջ դիմադրութեան գրաւեց Ասորիքը։ Անտիոքը դարձաւ նրա մայրաքաղաքներից մէկը, որը նրա պատկերով դրամ էր կտրում։ Նա այդտեղ սատրապ

նշանակեց իր զօրավարներից մէկին։

Հրէաները սասիկ երկիւղի մէջ ընկան, երբ լսեցին, որ Տիգրան մտադիր է իրանց վրայ արշաւելու։ Աղէքսանդրա թագուհին մեծամեծ ընծաներով գրաւեց Տիգրանի սիրտը և հպատակութիւն խոստացաւ։ Դրանից յետոյ Տիգրան մտաւ Կիլիկիա, Սելևկեաններից խլեց նրա դաշտային մասը, կործանեց շատ քաղաքներ և նրա յոյն ու հրէայ բնակիչներին քշեց Հայաստան։ Այնուհետև 77 թ. հայերը երրորդ անգամ գրաւեցին Կապադովկիան, բռնեցին Արիոբարզանին, որ հռովմայեցոց օգնութեամբ կրկին ձեռք էր գցել իր գահը, և յունական շատ քաղաքների բնակիչներ՝ 300000 քշեցին մի մասը արքայից արքայի նոր մայրաքաղաք Տիգրանակերտը, իսկ միւս մասը՝ Հայաստանի զանազան կողմերը։

Տիգրան այդքան երկրներին տիրել էր հակառակ Միհրդատի հետ կապած դաշնագրութեան։ Նա տիրանալով դրանց՝ շատ քիչ մտածեց նրանց բարեկարգման և ներքին կապ ստեղծելու մասին. նա նոյն իսկ հոգս չէր քաշում հռովմայեցիներից սպասուելիք վրէժխնդրութեան մասին։

Նա հասել էր իր փառքի ամենաբարձր գագաթնակէտին. նրան հպատակւում էին Կուր գետից սկսած մինչև Յորդանան և Մարաստանի լեռներից մինչև Տաւրոսի ստորոտներն ընկած երկրները։ 25 տարի Տիգրան արքայից արքան

իշխում էր այդ երկրների վրայ։ Այդ երկրների մէջ էին գտնւում բուն Մեծ Հայքը, որ բաժանւում էր 120 գաւառի, Ասորիքն ու Կիլիկիան՝ Անտիոք մայրաքաղաքով, Պարսկաստանի սահմանակից մի շարք մանր թագաւորութիւններ, որոնց իշխանները պարթևների ազգականներն էին, օր. Ուռհայաստանը, Կորդիք, Ադիաբեն, արևելեան և հիւսիսային վասսալները՝ Աղուանք, Վիրք և նրանց դրացիները։ Նրա հեծելազօրքը կազմուած էր նախարարներից և սեպուհներից (ազատներից)՝ զրահաւորուած՝ թէ իրանք և թէ իրանց երիվարները։ Աղուանները տալիս էին լաւ սուսերաւորներ, իսկ վրացիները՝ քաջ ազեղնաւորներ։ Մարաց թագաւորը (Ատրպատականի), որ Տիգրանի փեսան էր, կարող էր հասցնել 40000 հետևակ և 10000 հեծելազօրք՝ արաբացիք տալիս էին հեծելազօրք, կորդուացիք առաջապահներ էին և կալազօրք, կորդուացիք առաջապահներ էին և մուրջներ կառուցանողներ. կային և վարձկան մուրջներ կառուցանողներ. կային և վարձկան զինուորներ, բացի զանազան ուրիշ ցեղերի զինուորներից։ Այսպիսի մեծ զօրաբանակը կերակրելու համար արքայից արքան պէտք է անբաւ հարստութիւն ունենար, և, յիրաւի, Տիգրան Արտաշատի շրջակայքում ունէր մեծամեծ քաղաքներ՝ գանձով լիքը։

Նա «արքայից արքայի» տիտղոսը կրելով՝ հեռևեց արևելեան թագաւորների սովորութեանը։ Զորս գահազուրկ ամենամեծ ազնուականներ նրա

մօտ թիկնապահների պաշտօն էին կատարում. երբ ձիով մի տեղ էր գնում, նրանք հասարակ շապիկ հագած ոտքով պէտք է վազէին նրա առջևից, իսկ դահ նստած ժամանակ կանգնած էին մնում և, 'ի նշան հնազանդութեան, ձեռները խաչաձև պահում։ Նա մեծ յարգանք էր պահանջում ամենքից դէպի իր անձը, իրեն ասածու տեղ էր գնում և երբէք ժողովրդին չէր երևում առանց կարմիր ու սպիտակ ծալքերով շապկի և առանց աստեղազարդ բարձր թագի։ Նրա պալատում շատ դահազուրկ թագաւորներ պալատականների պաշտօն էին կատարում։ Նա իր զօրքի մէջ մըտցրեց յունական և հռովմէական զինուորական կարգեր, թէև զինուորները, որպէս անկուլ'տուրական ասիացիներ, չկարողացան իւրացնել դրանք։ Տիգրան ամեն կերպ, թէկուզ արտաքինով, աշխատում էր նմանուել հռովմայեցիներին. ըստ յունական և հռովմէական սովորութեան՝ նա երեսն ամբողջովին ածիլում էր։ Յանկանալով Միջագետքն ու Մարաստանը քաղաքակրթել՝ բազմաթիւ յոյն գաղթականներով բնակեցրեց և բազմամարդ դարձրեց։ Իր երկրի մէջ մտցրեց յունական կուլ'տուրան և արդիւնաբերութիւնը։ Արաբ ցեղերին ստիպեց Եփրատ գետն անցնել, նստակեաց դառնալ և վաճառականութեամբ զբաղուել, կամ Տիգրանակերտից անցնող Մեծ ճանապարհից տուրքեր ժողովել յօգուտ իր գանձարանի։

Նոր յունա-հռովմէական քաղաքակրթութեանը նպաստեցին բազմաթիւ յոյն գաղթականները, թէև բուն Հայքում հին կալուածատիրական կարգերը՝ շնորհիւ երկրի դիրքի շարունակուեցին։ Կալուածատէր իշխանները պետութեան մէջ միակ դեր խաղացողներն էին. նրանք պարապում էին որսորդութեամբ, երկարատև քէֆերով ու խնջոյքներով, կամ թէ իրանց օրերն անց էին կացնում դատաստանական գործերով և կանանոցում։ Նրանց կանանոցները շատ բազմամարդ էին. այդպիսի ընտանեկան կազմը աղետալի հետևանք ունեցաւ մանաւորապէս Տիգրանի համար, երբ նա արդէն ծեր էր։ Պալատի կեանքն ազդեց և երկրի վրայ, որը ձգտում էր աւելի բարձր՝ յունական քաղաքակրթութեանը։

Տիգրան Փոքր-Ասիայից բերել էր շատ աստուածների ու աստուածուհիների արձաններ, որոնք օրինակ կարող էին ծառայել հայերի համար արուեստների զարգացման գործում։ Հայերի հին պարզ կրօնն էլ կերպարանափոխուեց՝ ազդուելով յունական կռապաշտութիւնից և նրանց ծիսակատարութիւններից։ Տիգրան Մեծի անունով ծնացած շատ դրամներ իրանց նուրբ կերտուածքով ապացոյց են, թէ որ աստիճանի նրբութեան էր հասել Հայաստանում դրամահատութիւնը և պատկերագրութիւնը։

Պալատում գոյութիւն ունէր յունական թատ-

րոն. երիտասարդ հայ իշխանազունները կրթւում էին յունական ձևով և վարժւում յունական գիտութիւնների մէջ։ Տիգրանի անդրանիկ որդին Արտաւազդ, ապագայ թագաւորը, դարձաւ նշանաւոր յունարէն գրող։

Տիգրան ամեն մի երկրում ունէր առանձին մայրաքաղաք։ Նա հազարաւոր բանուորներ էր բերել տալիս իր գերիշխանութեան տակ գտնուած երկրներից՝ թէ նորանոր քաղաքներ հիմնարկում իր երկրի զանազան կողմերում և թէ եղածները զարդարում գեղեցիկ շինութիւններով։ Իբրև նմուշ նրա շինարարութեան կարող է ծառայել իր սիրելի մայրաքաղաք Տիգրանակերտը, որ նա ինքը հիմնարկեց և գեղեցիկ շինութիւններով զարդարեց՝ Մծբինի հիւսիս-արևմտեան կողմում։ Նա շրջապատուած էր յիսուն կանգուն բարձրութեամբ աղիւսից շինուած պարիսպներով, որոնք այնքան հաստ էին, որ իրանց մէջ տեղաւորում էին ախոռատներ։ Քաղաքն ունէր ամուր միջնաբերդ. պարիսպներից դուրս շինուած էին հրաշալի պալատներ, իսկ ամբողջ շրջակայքը ծածկուած էր պարտէզներով, որսի ծառաստաններով և շտեմարաններով։ Քաղաքը չափազանց հարուստ էր և զարդարուած ամեն տեսակ զարդանկարներով։ Բնակիչներն իրանց կարողութեան չափով մրցում էին թագաւորական շքեղութեան հետ և ամեն

կերպ աշխատում էին մայրաքաղաքը զարդարել։ Պեռութեան առաջնակարգ ճնտանիքները, իրանց սատացուածքները յարքունիս գրաւելու երկիւղից ստիպուած, տեղափոխուեցին արքայից արքայի սիրելի մայրաքաղաքը։ Ասորեստանցիներ, աղիաբեններ, կորդուացիներ և շատ ուրիշ ազգեր այդ տեղ տեղափոխուեցին. դրանց թիւը հասնում էր 300000 հոգու՝ բացի Կապադովկիայի և Կիլիկիայի յոյներից, որոնց մի մասն էլ այստեղ բնակեցրեց։

Այսպիսով՝ թէ արևմտեան Հայաստանը և թէ նրա դրացի երկրները ամենապայծ չափով ենթարկուեցին յունա-հռոմէական քաղաքակրթութեան։

III

Հռովմայեցիների նոր արշաւանքը. Լուկուլլոս. Միհրդատի պարտութիւնը. Տիգրանակերտի առումը և Տիգրանի պարտութիւնը. Նոր ճակատամարտ և հռովմայեցիների պարտութիւնը. Պոմպէոս. Միհրդատի ու Տիգրանի վերջնական պարտութիւնը. Տիգրանի և Միհրդատի մահը։

Հռովմը Սիլլայի փոխարէն ուղարկեց Լուկուլլոսին։ Նա մեծ զգուշութեամբ էր առաջ գընում, որովհետև զգում էր, որ քիչ հեռու գանւում է Տիգրանը, «որը շատ զօրեղ է, որը Ասիան խլել էր Պարթևներից, Մարաստանը բնակեցրել էր իր տիրապետած հելլենական քաղաքների բնակիչներով, որ նա իշխում է Ասորիքի և Պաղեստինի վրայ, որ Սելևկեան երեք թագաւորներին մահուան դատապարտեց և նրանց աղջիկներին ու կանանց գերեց և որը վերջապէս Միհրդատի բարեկամն էր ու փեսան». ուրեմն եթէ Միհրդատ դիմէր նրան, նա անշուշտ օգնութեան կըհասնէր և Հռովմի դէմ սոսկալի կռիւ կըյայտարարէին։ Այդ երկիւղի տակ Լուկուլլոս, թէև համարեա նուաճել էր արդէն Պոնտոսը, սակայն յապաղում էր Տիգրանի վրայ յարձակուել, մինչդեռ վերջինս վաղուց առիթ էր որոնում նրանց վրայ յարձակուելու։

Տիգրան Ասորիքումն էր։ Միհրդատ սաստիկ ջարդ կրելով Լուկուլլոսից փախաւ Տիգրանի երկիրը։ Լուկուլլոս դեսպանի միջոցով պահանջեց պարտուած Միհրդատին, որովհետև Հռովմը պարզ տեսնում էր, քանի Միհրդատ ազատ է, ինքը հանգստութիւն չպիտի ունենայ։ «Բարբարոսները» (հռովմայեցիք այդպէս էին անուանում ասիացիներին, որոնց թւում և հայերին) դեսպանին խաբէութեամբ շրջեցնում էին զանազան կողմեր, մինչև Տիգրան վերադառնար։ Վերջ 'ի վերջոյ դեսպանը հասկանալով այդ խաբէութիւնը, ուղղակի դիմեց Ասորիք՝ Տիգրանի մօտ և յայտնեց Լուկուլլոսի պահանջը։ Այդ ժամանակամիջոցում դեսպանը կարողացաւ դրդել Տիգրանի հպատակ մի քանի ցեղերի, մանաւանդ բռնի գաղթեցրած յոյներին՝ ապստամբուել արքայից արքայի դէմ, «որը չափազանց հպարտացել էր իր բաղդաւոր աստղից և կարծում էր, թէ ամբողջ աշխարհը ստեղծուած էր իր համար»։

Տիգրան մեծ շքով ընդունեց Լուկուլլոսի դեսպանին, բայց երբ լսեց հռովմայեցու համարձակ պահանջը, որպիսի պահանջ նա 25 տարուց 'ի վեր առաջին անգամն էր լսում, սաստիկ զայրացաւ և յայտնեց, որ Միհրդատին երբէք չի յանձնիլ, իսկ եթէ հռովմայեցիներն են առաջինը պատերազմի կոչ անում, ինքը պատրաստ է այն ընդունելու։ Նա ցոյց տուաւ, որ շատ վշտացած է Լուկուլլոսից, որովհետև նա իր նամակում «արքայից արքայ» չէր անուանել Տիգրանին։ Եւ

դրա փոխարէն, երբ ինքն էլ նրան նամակ գրեց, «իմպերատոր» չանուանեց։ Այնուամենայնիւ Տիգրան հրամայեց ընծաներով պատուել դեսպանին։

Տիգրան վերադարձաւ Հայաստան և փոխանակ Միհրդատի խորհուրդներից օգտուելու, նրան տեսնել անգամ չցանկացաւ, այլ ուղարկեց մի ճահճոտ տեղ։ Բայց երբ հռովմայեցիները նեղը լծեցին Տիգրանին, այն ժամանակ կանչեց Միհրդատին և մեծ պատուով ընդունեց։

Պարզուեց, որ Տիգրանին մոլորեցրել է Միհրդատի պալատականներից մէկը, որին Միհրդատ պատերազմի սկզբին ուղարկել էր Տիգրանի մօտ օգնութիւն խնդրելու։ Այդ պալատականը, որ շատ մտերմացել էր Տիգրանի հետ և «թագաւորի հայր» տիտղոսն էր կրում, Հայաստանի մեծութիւնից շլացած ասել էր. «Իբրև պատգամաւոր ձեզ յայտնում եմ, որ օգնէք իմ թագաւորին (Միհրդատին), իսկ իբրև խորհրդատու՝ կարծում եմ, որ լաւ կլինի, եթէ ձեռնպահ մնաք»։ Միհրդատ այդ բանն իմացաւ. նա սաստիկ զայրանալով սպանեց տիրանենդ իշխանին։

Տիգրան մի ահեղ զօրաբանակով մտաւ Լիկայոնիա՝ Լուկուլլոսի ճանապարհը փակելու։ Լուկուլլոս շտապեց նրա սիրելի մայրաքաղաք Տիգրանակերտը պաշարել, որպէսզի ստիպէ նրան վերադառնալ։ Տիգրան զայրացած սպանեց այն մարդուն, որ առաջին անգամ այդ լուրը բերաւ, որովհետև նա չէր հաւատում, թէ Լուկուլլոս այդքան յանդուգն կլինի։ Միւս կողմից շողոքորթ իշխանները հաւատիացնում էին, որ Լու-

կուլլոս երբէք չի համարձակուիլ այդպիսի քայլ անելու։ Միայն նրա մտերիմ Միտրոբարզան համարձակութիւն ունեցաւ յայտնելու իրողութիւնը։ Տիգրան՝ իբրև պատիժ՝ 3000 հեծեալ յանձնեց նրան, որպէսզի «իմպերատորին» կամ կենդանի բռնէ և կամ սպանէ։ 69 թուին Միտրոբարզան պարտութիւն կրեց և փախաւ. նրա զօրքից քչերն ազատուեցին,

Տիգրան օգնութեան կանչեց Միհրդատին, որն ստանալով նրա հրաւէրը, շտապեց, միաժամանակ առաջուց մարդու միջոցով զգուշացրեց նրան՝ ոչինչ չանել մինչև իր հասնելը։ Միհրդատ մտածում էր հեծելազօրքի միջոցով Լուկուլլոսի զօրքի պաշարի ճանապարհը կտրել և հարկադրել նրան անձնատուր լինել։ Տիգրան սկզբում վճռեց սպասել, բայց երբ ժողովեց իր ամբողջ բանակը, որը կազմուած էր կորդուացիներից, մարերից, Ադիաբենի բնակիչներից, արաբ հովիներից, «Բաբելոնեան ծովի» հեծելազօրքից, կասպիացիներից, վրացիներից, ալուաններից և վերջապէս Արաքսի հովտի բազմաթիւ թագաւորների գնդերից, այն ժամանակ հպարտացաւ և վճռեց միայնակ յարձակուել։ Ամենքը վստահ էին, որ Տիգրան այդ ահռելի ուժով կըյաղթէ։ Այդ բանակում կային 20000 աղեղնաւորներ և պարսատիկաւորներ, 55000 հեծեալներ, որոնցից 17000 երկաթէ զրահներով, 150000 հետեակներ, որոնց մի մասը ֆա-

լանգներով էր շարժւում, միւս մասը՝ սիներով՝ կոլոններով. առջևից էլ ընթանում էին 36000 ռահվիրաներ (առաջապահներ)։

69 թուի ամառը Տիգրան հասաւ Տիգրանակերտ։ Նրան յաջողուեց իր կանանց և գանձերը դուրս բերել քաղաքից։ Քաղաքը պաշտպանող բերդապահները քաջութեամբ յետ էին մղում հռովմայեցիներին։ Լուկուլլոս վճռեց յարձակուել Տիգրանի վրայ, որը հանգիստ նստած ծիծաղում էր նրանց քչութեան վրայ. «Եթէ այս օտարականները եկել են ինձ մօտ իբրև պատգամաւորներ,—շատ-շատ են, իսկ եթէ եկել են իմ դէմ կռուելու,—շատ քիչ են»։ Իշխանները հրճւում էին ուրախութիւնից։ Բայց երբ հռովմայեցիք գետն անցնում էին, Տիգրան սթափուելով բացականչեց. «Իսկապէ՞ս սրանք մեր վրայ են գալիս»։ Հայերի մէջ շփոթութիւն ընկաւ և սաստիկ ջարդ կրելով փախան։ Մինչև մութն ընկնելը հռովմայեցիք նրանց հալածեցին։ Միհրդատ Տիգրանին գտաւ յուսահատութեան մէջ. նա իջաւ ձիուց և հետը միասին լաց եղաւ, իր թիկնապահներով շրջապատեց միայնակ մնացած ծերունի թագաւորին։ Միհրդատին յաջողուեց նոր բանակ կազմել և «աշխատեցին պատերազմին կրօնական և ազգային նշանակութիւն տալ, որպէսզի ժողովրդի մոլեռանդութիւնը գրգռեն։ Դրա համար լուր տարածեցին, թէ Լուկուլլոս մտադիր է Ա-

սիայի ամենահարուստ և ամենասիրելի տաճարներից մէկը կողոպտել»։

Տիգրանակերտի յոյները լսելով Տիգրանի պարտութեան լուրը, քաղաքի դռները բացին Լուկուլլոսի առաջ, նախօրօք նրանից խոստում առնելով, որ իրանց կըվերադարձնէ հայրենիք։ Լուկուլլոս կողոպտեց Տիգրանակերտում եղած գանձերը՝ 8000 արծաթ տաղանդ (119500 ռ.)։

Տիգրան նոր բանակով գնաց իր երկրորդ մայրաքաղաք Արտաշատը պաշտպանելու։ Սակայն փոխանակ սպասելու հռովմայեցիներին, որոնք Տիգրանակերտի առումից յետոյ արշաւում էին նրա վրայ, նա չորս օրուայ ճանապարհ գնաց նրանց ընդառաջ և կրկին պարտութիւն կրեց։ Այդ կռուում շատ ազնուականներ գերի ընկան։

Լուկուլլոսի լեգիոնները երկարատև արշաւանքներից, տեղի ճահճային լինելուց և խոնաւ օդից յոգնել, ձանձրացել էին և չէին ցանկանում հնազանդուել իրանց զօրապետին, որը ցանկանում էր արշաւանքը շարունակել և Տիգրանին ու Միհրդատին վերջնականապէս ընկճել։ Լուկուլլոս ստիպուած եղաւ վերադառնալ Միջագետք և պաշարել Մծբինը. այդտեղ իշխում էր Տիգրանի եղբայր Գոռը։ 69 թուին անձնատուր եղաւ քաղաքը։

Լուկուլլոսի յետ քաշուելուց յետոյ, Միհրդատին և Տիգրանին յաջողուեց մի շարք կռիւներ

մղելով, կրկին տիրանալ իրանց կորցրած երկրներին և հալածել հռովմայեցիներին։ Միւս կողմից հռովմայեցոց զօրքն սպասում էր 67 թուին, երբ պէտք է լրանար նրանց զինուորական ծառայութեան 20-ամեակը, որից յետոյ կարող էին վերադառնալ հայրենիք։ Եւ զինուորները բացարձակ ապստամբութիւն բարձրացրին։ Այդ ձախորդութիւնների լուրը հասաւ Հռովմ, և ծերակոյտը յանդիմանութիւն ուղարկելով Լուկուլլոսին՝ նրան յետ կանչեց։ Այդ լուրը խրախուսեց դաշնակիցներին և նրանք մի սոսկալի ջարդ տուին Լուկուլլոսի թողած զօրքին։ Միհրդատ չնայելով իր ծերութեան (60 տարեկան էր) և վիրաւորուած լինելուն, հալածեց նրանց և 7000 մարդ ջարդեց։ Տիգրանի փեսայ Մարաց թագաւորն էլ միւս կողմից մտաւ Կապադովկիա և այդտեղ ցրուած հռովմէական զօրքերին կոտորեց։

Զուր էր Լուկուլլոս յուսահատութեան հասած զօրքին խրախուսում և համոզում, որ իրեն լսեն. նա համբուրում էր նոյն իսկ զինուորների ձեռները, սակայն նրան ոչ ոք չէր լսում, և նա ամօթահար ու պարտուած վերադարձաւ Հռովմ։

Տիգրան կրկին ձեռք բերաւ իր կորցրած բոլոր երկրները։

Հռովմը պարտուած Լուկուլլոսի փոխարէն ուղարկեց երիտասարդ Պոմպէոսին, որը 66 թուին ամենից առաջ Միհրդատի ոյժը խորտակեց։

Տիգրանի համար նոյնպէս սկսուել էր անկման շրջանը։ Նա իր Կլէոպատրա կնոջից երեք որդի ունէր։ Նրանցից ամեն մէկն էլ դեռ հօր կենդանութեան ժամանակ ցանկացան տէր դառնալ նրա գահին։ Նրանցից երկուսը, որոնք բացարձակ ապստամբուեցին հօր դէմ և, կուսակիցներ ժողովելով, ցանկացան գահը խլել, հօր ձեռքով սպանուեցան։ Կրտսեր որդին, որի անունն էր Փոքր Տիգրան, նոյնպէս ապստամբուեց հօր դէմ, բայց իր համախոհների հետ հալածուեց։ Նա նախ ապաւինեց իր աներոջ՝ պարթեւաց Հրահատ թագաւորի մօտ, ապա այդտեղից էլ ուղղակի դիմեց Պոմպէոսի մօտ, խոստանալով հռովմայեցոց զօրքին առաջնորդել դէպի իր հօր երկիրը, եթէ Պոմպէոս Տիգրան Մեծին յաղթելուց յետոյ իրեն թագաւոր կընշանակէ։ Նրանք մօտենում էին Արտաշատ մայրաքաղաքին։ Տիգրանի և Միհրդատի մէջ սառնութիւն էր ընկել։ Տիգրան մնացել էր միայն ամենքից. ծերութիւնը մի կողմից, հաւքուած ամենքից. բաղատ որդու դաւաճանութիւնը միւս կողմից, սակայն դուռդ արքայից արքային հպատակուել սպասեցին հռովմայեցիներին, և նա վճռեց գնալ Պոմպէոսի բանակը։ Նա ձիով էր գնում և թագը գլխին։ Երբ Պոմպէոս նրան տեսաւ, հրամայեց ձիուց իջնել։ Տիգրան հնազանդուեց և 'ի նշան խոնարհութեան իր թագը դրաւ նրա ոտքերի մօտ։ Պոմպէոս սաստիկ զգացուեց ծերունի թագաւորի

այս խոնարհութիւնից, թագը վերցրեց և դրեց նրա գլխին ու իր կողքին նստեցրեց։ Նա մխիթարեց նրան, հաւատացնելով, որ իր թագաւորութիւնը չի կորցրել, բացի այդ՝ դարձել է Հռովմի բարեկամը։ Կրասեր Տիգրանի համար Պոմպէոսի այդ վարմունքը անսպասելի էր. նա յուսահատուեց և փոխանակ իր դաւաճանութեան վրայ զղջալու, Պոմպէոսի 'ի պատիւ Տիգրանի տուած ճաշին նա չմասնակցեց։ Իսկ երբ հետևեալ օրը Պոմպէոս լսեց՝ թէ ինչպէս կրասեր Տիգրան կոշտութեամբ վիճում էր իր արքայից արքայ ծերունի հօր հետ, վճռեց Հայաստանը թողնել միանգամայն Տիգրան Մեծին, իսկ նրա գրաւած երկրները միացրեց Հռովմի տիրապետած երկրներին։ Տիգրան Մեծ բացի այդ՝ վճարեց և 60000 տաղանդ պատերազմական տուգանք, իսկ կրասեր Տիգրան իր դաւաճանութեան համար ստացաւ միայն Ծովից աշխարհը։ Վերջինս գոհ չմնաց և մտածեց փախչել Պարթևաստան ու իր աներոջը գրգռել Հռովմի դէմ. սակայն Պոմպէոս տեղեկանալով նրա մտադրութեան մասին, կապեց ոսկէ շղթաներով և իբրև յաղթութեան նշան նրան իր ընտանիքով և Տիգրան Մեծի կանանցից մէկի՝ Սոսեմի հետ տարաւ Հռովմ։

Պոմպէոս հիացած Տիգրանի բարութեան վրայ, որովհետև նա աւելի վճարեց, քան որոշուած էր, խնդրեց ծերակոյտից և ստացաւ «Հռովմի ժողովրդի բարեկամ և դաշնակից» տիտղոսը, որին այնքան ձգտում էր Տիգրան։

Մինչ Տիգրան իր թագաւորութեան վերջին տարիները հանգիստ անցկացրեց և մեռաւ խորին ծերութեան մէջ, Միհրդատ պաշարուած մի կողմից հռովմայեցիներից, միւս կողմից իր դաւաճան որդուց, որը նոյնպէս ցանկանում էր նրա գահին տիրանալ, Տիգրանից էլ միանգամայն անօգնական, մտածեց Կովկասեան լեռնականներից բանակ կազմել և ցամաքի վրայով արշաւել Հռովմի վրայ. սակայն երբ այդ նրան չյաջողուեց, նա անձնասպանութիւն գործեց։

IV

Արտաւազդ Գ. (56-36). հայերի և պարթևների դաշնակցութիւնը. Կրասոս և հռովմայեցոց պարտութիւնը. Անտոնիոս և հռովմայեցոց նոր պարտութիւնը. Արտաւազդի գերութիւնը. Արտաշէս. Տիգրան Գ. և Երատո. Արտաշիսեան հարստութեան վախճանը։

Տիգրան մեծ իր թագաւորութեան վերջին տարիներում, երբ Միհրդատի անձնասպանութեամբ Պոնտոսի թագաւորութիւնը կործանուեց և դարձաւ հռովմէական մի նահանգ, մտածեց մի դաշնակից գտնել։ Ասիայում Հռովմի ախոյեան մնացել էր միայն Պարսկաստանը, որին Տիգրան նուաստացրել էր՝ խլելով նրա թագաւորներից արքայից արքայի պատիւը։ Չնայելով այդ հանգամանքին, պարթև թագաւորներն ամբողջ հայ-հռովմէական պատերազմների ընթացքում չէզոքութիւն էին պահպանել և բոլորովին չէին մըտածել հայերին անհանգստացնել։

Որքան հայերին նրանք թշնամի նկատէին, այնուամենայնիւ պարսիկներին ձեռնտու եւ ցանկալի չէր Հռովմայեցոց ներկայութիւնը Ասիայում. հայերն ամենաբաւ պատուարն էին նրանց նուաճումների առաջ։

Այս հանգամանքը փոքր 'ի շատէ մօտեցնում էր երկու թշնամի հարևաններին։ Տիգրան ամենից առաջ էր հասկացել հայերի և պարթևների դաշնադրութեան անհրաժեշտութիւնը և թշնամու-

թիւնը վերացնելու նպատակով իր որդի կրտսեր Տիգրանին ամուսնացրել էր պարթևաց Հրահատ (Պրատէս) թագաւորի դստեր հետ։ Սակայն այդ դաշնակցութիւնը գաղտնի էր հռովմայեցիներից։ Հայերի և պարթևների մերձեցումը առաւել ևս անհրաժեշտ դարձաւ, երբ հռովմայեցիք անցնելով Եփրատ գետը՝ յառաջացան մինչև Միջագետքի արևելեան սահմանները. մի հանգամանք, որ սաստիկ անհանգստացնում էր պարթևներին։

Պոնտոսի եւ Մեծ Հայքի ոյժը կոտրելուց յետոյ Հռովմայեցոց պատերազմական ծրագրի մէջ էր մտնում Պարսկաստանի վրայ ենթադրելիք արշաւանքը։

Այսպիսի պայմանների մէջ Տիգրան Մեծին 56 թ. յաջորդեց Արտաւազդ։ Նա իրանց բարեկամութիւնն ու դաշնակցութիւնը աւելի հաստատուն դարձնելու համար իր քրոջը կնութեան տուաւ պարթևաց Բակուր արքայորդուն։ Արտաւազդն ու պարթևաց թագաւորն այնքան մտերմացել էին, որ յաճախ խնջոյքներով իրար հիւրասիրում էին և յունական բանաստեղծութիւնների ընթերցանութեամբ էին անցկացնում իրանց օրերը։ Արտաւազդ յօրինում էր յունարէն ոտանաւորներ, ճառեր ու պատմութիւն և կարդում էր, իսկ պարթևաց թագաւորը, որն անտեղեակ չէր յոյն լեզուին, մեծ բաւականութեամբ էր լսում։

Այդ մտերիմ ժամանցների միջոցին ծրագրում

էին իրանց ապագայ գործունեութիւնը հռոմայեցիների դեմ:

Նրանց դաշնակցութիւնը թէև հռոմայեցիներից գաղտնի, սակայն բարեկամութիւնը յայտնի դարձաւ:

Միւս կողմից, Արտաւազդ իր հօր՝ Տիգրանի հռոմայեցիների հետ կապած դաշինքի համաձայն դաշնակից էր համարում նրանց եւ ակնյայտնի թշնամութիւնից խուսափում էր:

Մինչ Պոմպէոս մեծ յաղթութեամբ վերադառնում էր Ասիայից, Հռոմում մեծամեծ խռովութիւններ էին բարձրացել. նախ սարուկներն էին ապստամբուել, ապա հիւսիսային կողմից տեղի ունեցան գերմանական զանազան ցեղերի արշաւանքները: Հռոմն այդպիսի ճգնաժամից հանելու համար կառավարութեան ամբողջ ղեկը յանձնեցին երեք նշանաւոր զօրապետների, որոնք յայտնի էին իրանց պատերազմական հմտութեամբ: Ասորիքն ու Փոքր-Ասիան ուտացաւ Լիկիանոս Կրասոսը, որ ահագին հարստութեան տէր էր, միաժամանակ վերին աստիճանի ընչաքաղց մարդ էր: Նա Ասիան ընտրեց իր բաժին գլխաւորապէս հարստութիւն դիզելու նպատակով:

Մտնելով Ասիա, նա, տասներեք լեգիոնների գլուխն անցած, անցաւ Եփրատը և արշաւեց Պարսկաստանի վրայ: Զուր էր պարթեւաց թագաւորը յիշեցնում Պոմպէոսի հետ կապած դաշինքը.

Կրասոս վճռել էր պարթեւաց հարստութեանը տէր դառնալ: Սակայն պարթեւաց Սուրէն սպարապետի զօրքը միանգամայն չարդեց հռոմայեցիներին և Կրասոսն ու իր որդին սպանուեցին պատերազմում: Հայոց Արտաւազդ արքայի պալատում տօնում էին պարթեւ Բակուր արքայորդու և նրա քրոջ հարսանիքը: Սուրէն իբրև հարսանեկան ընծայ Կրասոսի գլուխն ու աջ թեւն ուղարկեց նրանց: Յոյն դերասան Յասոնը յանպատրաստից մի ողբերգութիւն արտասանեց այդ առիթով, որ շատ դուր եկաւ հանդիսականներին. (53 թ.)

Հռոմայեցոց այդ պարտութիւնից յետոյ, պարթեւները արշաւեցին Ասորիքի վրայ: Միւս կողմից Պոնտոսի թագաւոր Փառնակէս (Միհրդատի որդին) մտաւ փոքր-ասիական նահանգները: Սրանց ոգևորողն այն կռիւներն էին, որ տեղի էին ունենում երկու եռապետների՝ Յուլիոս Կեսարի և Պոմպէոսի միջև: Պոմպէոս Յունաստանում պարտուեց և փախաւ Եգիպտոս, ուր և սպանուեց: Յուլիոս Կեսար նրան հետևեց մինչև Եգիպտոս, ապա երբ լսեց Ասիայում տեղի ունեցած դէպքերի մասին, շտապեց Հռոմէական բանակի օգնութեան և թէ Փառնակէսին փախցրեց ու թէ պարթեւներին յաղթեց. Բակուր այդ պատերազմում սպանուեց: Յուլիոս Կեսար շատ արագ վերջացրեց այդ արշաւանքը և բաւականացաւ ծերակոյտին այսպիսի տեղեկութիւն ուղարկելով.

«Veni, vidi, vici» («Եկայ, տեսայ, յաղթեցի»)։

Յուլիոս Կեսարի սպանութիւնից յետոյ Հռովմում նոր բարձրացած խռովութիւնները զսպելու համար կազմուեց երկրորդ եռապետութիւնը (43 թ.)։ Եռապետներն իրանց անձնական շահն 'ի նկատի առնելով անխնայ ոչնչացնում էին իրանց հակառակորդներին և երբ ժողովրդին այդ ձևով սարսափահար արին, ամբողջ երկիրը բաժանեցին իրար մէջ. Անտոնիոսին ընկաւ Յունաստանը և Արևելքը։ Անտոնիոս, թէև շնորհալի, բայց կոպիտ և թեթև վարքի տէր մարդ էր. նա շատ վատ կերպով օգտուեց իր իշխանութիւնից. նա այնպէս էր զրաւուել եգիպտական Կլէոպատրա թագուհով, որ նրա սիրոյ համար պետութեան ամենակարևոր գործերն անդամ արհամարհում էր։

Անտոնիոս Ասիա գալով, առաջին գործն եղաւ արշաւել պարթևների վրայ և Կրասոսի պարտութեան վրէժն առնելով՝ միաժամանակ վերադարձնել հռովմէական արծուանիշ դրօշակները, որոնք գերի էին վերցուել նախընթաց պատերազմում։ Արտաւազդ իբրև դաշնակից հարկադրուած էր օգնական զօրք ուղարկել. սակայն Արտաւազդի ուղարկած հեծելազօրքը, որ շատ առաւելութիւններ ունէր հռովմէականից, միշտ էլ խուսափում էր պատերազմից։ Իսկ երբ Անտոնիոս իր բանակով մոլորուեց անջրդի անապատներում, Արտաւազդի հեծելազօրքն առանց պատերազմի

վախճանին սպասելու՝ վերադարձաւ Հայաստան։ Պարթևները ընկան Անտոնիոսի վրայ և սոսկալի կորուստներ պատճառեցին նրան։

Անտոնիոս իր պարտութեան պատճառը համարում էր Արտաւազդին, սակայն իր վրէժխնդրութիւնն առ ժամանակ թաղցրեց, որպէսզի Արտաւազդից պաշար և ձմեռելու տեղ ստանայ։ Արտաւազդ նրան թոյլ տուաւ ձմեռն անցկացնելու Հայաստանի հարաւային կողմում և պաշար ուղարկեց։

Անտոնիոս վերադարձաւ Ասորիք և զօրք պատրաստելով՝ վճռեց իր պարտութեան վրէժը լուծել Արտաւազդից։ Նա նախ զանազան խորամանկ միջոցներով նրան հրաւիրեց իր մօտ, բայց երբ Արտաւազդ զգուշացաւ գնալ, այն ժամանակ Անտոնիոս զօրքով մտաւ Հայաստան։ Նա հաւատացրեց, որ նրան ձեռք չի տալ, այլ եկել է միայն հարկը վերցնելու։ Արտաւազդ հաւատալով գնաց նրա բանակը։ Անտոնիոս հակառակ թէ իր խոստմանը և թէ Հռովմի ծերակոյտի խաղաղասիրական՝ Արտաւազդին արծաթէ շղթաներով կապեց և Հայաստանի գանձերը կողոպտելուց յետոյ՝ նրան իր ընտանիքով տարաւ Եգիպտոս։

Անտոնիոսի և միւս եռապետ Օկտաւիանոսի յարաբերութիւնները տարէցտարի լարւում էին։ Անտոնիոս հռովմէական նահանգներն սկսեց նուիրել իր, Կլէոպատրայից ծնուած, որդիներին։ Այն

ժամանակ Օկտաւիանոս զօրքով գնաց Անտոնիոսին իշխանութիւնից զրկելու։ Անտոնիոս իմանալով, որ Օկտաւիանոս Արտաւազդին պէտք է ազատէ բանտից և վերադարձնէ իր թագաւորութեանը, մի քանի ժամանակ բանտում պահելուց յետոյ՝ սպանեց, երբ նա չցանկացաւ խոնարհուիլ Կլէոպատրայի առաջ և նրան անուանել «թագուհիների թագուհի» (63 թ.)։

Անտոնիոս և Կլէոպատրա պարտուեցին Օկտաւիանոսից և երկուսն էլ անձնասպանութիւն գործեցին։ Օկտաւիանոս Արտաւազդի որդիներին տարաւ Հռոմ՝ իրանց սովորութիւնների համաձայն կրթելու, որպէսզի ապագայում Հայաստանում ունենան Հռոմին բարեկամ իշխողներ։

Արտաւազդի անդրանիկ որդին Արտաշէս գերութիւնից փախուստ տալով եկաւ Հայաստան, զօրք ժողովեց և յարձակուելով Անտոնիոսի վրայ՝ ցանկացաւ հօրն ազատել, սակայն պարտութիւն կրեց ու փախաւ ապաւինեց Պարթեւաց թագաւորի մօտ։

Անտոնիոսի անկումից յետոյ նրա դրդմամբ պարթեւները յարձակուեցին Մարաստանի վրայ, որի թագաւորը Անտոնիոսի դաշնակիցն էր եղել, և տիրեցին այդ երկրին. իսկ Արտաշէս կրկին վերադառնալով Հայաստան, բարձրացաւ հօր գահը, ընկաւ հռոմայեցոց մնացորդ զօրքի վրայ և բոլորին ջարդեց։

Սակայն նա բռնակալ մարդ էր և տասն տարի (30—23) թագաւորելուց յետոյ զոհ գնաց իր ցեղակիցների դաւադրութեանը։

Արտաշէսի մահուանից յետոյ Օկտաւիանոս Հայաստանի վրայ թագաւորեցրեց Արտաւազդի միւս որդի Տիգրանին (Բ.), որ Հռոմում լաւ կրթութիւն էր ստացել։ Ինչպէս դրա ժամանակուայ, այնպէս էլ նրա յաջորդների գործերի մասին որոշ տեղեկութիւններ չկան. սակայն հոռոմայեցիք մի քանի անգամ ստիպուած եղան հարերի ապստամբութիւնը ճնշել։

Տիգրան Բ-ին 6 թ. յաջորդեց որդին Տիգրան Գ. իւր քոյր Երատոյի հետ, որոնք ըստ այն ժամանակուայ սովորութեան ամուսնացած էին իրար հետ։ Այդ Տիգրանը միայն մի տարի թագաւորեց։

Վերջերս գտնուած է Օկտաւիանոսի մի կտակը, որի մէջ ասուած է. «Մեծ Հայքը իր թագաւոր Արտաշիսի սպանութիւնից յետոյ՝ կարող էր դառնալ հռոմէական մի նահանգ, եթէ ես ուզենայի. ես, իմ նախնիքների օրինակին հետեւելով, զերադաս համարեցի այդ երկիրն իմ որդեկիր Տիբերիոս Ներոնի ձեռքով տալ Արտաւազդի որդի Տիգրանին, որը Տիգրան Մեծի թոռն էր։ Յետոյ երբ այս ազգն ապստամբուեց Հռոմի դէմ, ուղարկեցի իմ որդի Կայիոսին և այդ թագաւորութիւնը յանձնեցի մարերի թագաւոր Արտաւազդի որդի Արիոբարզանին, իսկ սրա մահ-

ուանից յետոյ՝ իր Արտաւազդ որդուն։ Երբ այս վերջինն սպանուեց, Տիգրանին ուղարկեցի Հայաստանի վրայ թագաւորելու. այս Տիգրանը Հայաստանի թագաւորական անիցն էր»։

Այս վերջին Տիգրան Դ.-ից յետոյ կրկին գահ է բարձրանում Երատոն, որը թագաւորում է 11—14 թ. Ք. յ.։

Նրանից յետոյ վերջանում է Արտաշիսեան ազգային հարստութիւնը։

Արտաշիսեան հարստութիւն.

Արտաքսիաս կամ Արտաշէս Ա.	190—159
Արտաւազդ Բ.	159—149
Տիգրան Ա. Մեծ	94— 59
Արտաւազդ Գ.	56— 36
Արտաշէս Բ.	34— 20
Տիգրան Բ.	20— 6
Տիգրան Գ. և Երատո	6— 5
Արտաւազդ Դ.	5— 2
Երատո	11— 14

Ե.

Պարթև Արշակունիների հարստութիւն

I

Հայաստանը Հռովմէական նահանգ. Հռոգամիզդ-Պարթևների ձգտումը. Վաղարշակ. Հռոգամիզդի արտաքսուիլը. Տրդատ Հայաստանում. պատերազմ Հռովմայեցոց և Պարթևաց մէջ. Հայոց կառավարութեան եղանակը։

Արտաշիսեան ազգային հարստութեան անկումից յետոյ մի շարք կռիւներ սկսուեցին պարթևների ու հռովմայեցիների մէջ՝ Հայաստանին տիրելու համար։

Հռովմայեցիք չբաւականացան Հայաստանին տիրելով. նրանք իրանց արշաւանքները շարունակեցին և Եփրատի միւս ափը։ Այդ հանգամանքը մի կողմից, միւս կողմից էլ այն հանգամանքը, որ հնում Հայաստանը եղել է Աքեմենեանների մի նահանգ, պարթևներին դրդեցին իրանց իրաւունքները տարածել և Հայաստանի վրայ։

Այդ շրջանում Հռովմն անընդհատ խռովութիւնների և ներքին ապստամբութիւնների վայր էր դարձել. ծերակոյտը փոխուեց եռապետութեան, եռապետութիւնը՝ միապետութեան. իսկ այդ փոփոխութիւններն առանց արիւնհեղութեան չէին վերջանում։ Հեռաւոր գաղութներում անընդհատ ապստամբութիւններ էին տեղի ունենում, և Հռովմն ստիպուած էր արշաւանքներ կազմակերպել։ Այդ դրութիւնն էլ միւս կողմից էր խրախուսում պարթևներին։

Հռովմը հնարաւորութիւն չունէր հեռու Արևելքում մշտական զօրք պահելու, իսկ առանց մշտական զօրքի ասիացիների հպատակութիւնը միայն երևակայութիւն կարող էր համարուել. այդ էր պատճառը, որ իր գերիշխանութեան տակ եկող հեռաւոր երկրներին տալիս էր լայն ինքնավարութիւն՝ միայն թէ իրեն հաւատարիմ սատրապների իշխանութեան տակ։

Պարթևական հարստութիւնն ևս ճգնաժամի մէջ էր. ընտանեկան անկանոն կազմը (բազմակնութիւնը) ինչպէս շատ ազգերի՝ պարթևների մէջ ևս վատ հետևանքներ ունեցաւ։ Գահի շուրջը անընդհատ խռովութիւններ էին բարձրանում. թագաւորի մահուանից յետոյ նրա բազմաթիւ ժառանգների մէջ ընդհարումներ էին տեղի ունենում՝ գահին տիրանալու համար։ Շատ անգամ հայր թագաւորը կոտորել էր տալիս իր որդիներին, որպէսզի ժամանակից առաջ չզրկուի թէ կեանքից և թէ գահից։ Պարսիկ ժողովուրդը բացարձակ իր դժգոհութիւնն էր յայտնում դէպի

թագաւորող տունը։

Այդպիսի դրութիւնն էր պատճառ, որ հռովմայեցիներին առժամանակ յաջողուեց իրանց գերիշխանութիւնը յարատև դարձնել Ասիայում, մինչև իսկ պարթևներից յետ ստացան նախորդ պատերազմներում կորցրած դրօշակները, այլ և նրանցից պատանդներ վերցրին։ Պարթև արքայորդիները կրթւում էին Հռովմում։

11 թուին Որոդ Բ.-ի մահուանից յետոյ պարթևները խնդրեցին Հռովմի ծերակոյտին թագաւորեցնել իրանց վրայ Հրահատի անդրանիկ որդի Վոնոնին, որը մի բարեկիրթ անձնաւորութիւն էր և յունական կարգերով էր ապրում։ Սակայն պարթևները յետոյ արտաքսեցին նրան, յունական սովորութիւնների պատճառով։ Նրանք Բահլ գաւառից հրաւիրեցին նախկին պարթևական ցեղից Արտաւանին, որ եկաւ և թագաւորեց։ Վոնոն փախաւ Հայաստան և կուսակիցներ գտնելով թագաւոր յայտարարեց։

Արտաւան նշանաւոր թագաւոր եղաւ. նա օգտուելով Տիրերիոս կայսեր ծերութիւնից՝ ցանկացաւ Հայաստանին տիրել. յարձակուեց Կապադովկիայի վրայ և հռովմայեցիներից պահանջեց հին պարսից (Աքեմենեաններին) պատկանող երկրները, որոնց թւում և Հայաստանը։ Սակայն մինչև իր ծրագիրն իրագործելը Արտաւան և նրա յաջորդները դաւադրութեան զոհ դարձան, մինչև որ 50 թուին գահ բարձրացաւ Արտաւանի եղբօր որդին Վաղարշ կամ Վաղարշակ Ա. իբրև 23-րդ արշակ։ Վաղարշ ցանկացաւ իրագործել Արտաւանի ծրագիրը Հայաստանի նկատմամբ և դրա համար հռովմայեցիների և պարթևների մէջ մի երկարատև պատերազմ սկսուեց։

Տիրերիոս կայսր ցանկանալով Հռովմի խախտուած վարկը բարձրացնել, զօրք ուղարկեց Ասիա, որպէսզի պարթևներին չթողնէ Հայաստանին տիրելու։ Հռովմայեցիք Արտաշատ մայրաքաղաքում թագաւոր պսակեցին Պոնտոսի թագաւորի որդի Զենոնին, որը մանկութիւնից մեծացել էր հայոց սովորութիւններով, նրանց որսերին և ուրախութիւններին մասնակցել էր, այլ և «բարբարոսների» ճաշակի համաձայն էր շարժւում։ Նա իր կողմն էր ձգել հայոց շատ մեծամեծների։ Հայերն 'ի նշան հաճութեան՝ նրան անուանեցին Արտաշէս (18 թ.)։ Սրա գործերի մասին ոչինչ յայտնի չէ։

Զենոն-Արտաշէսի մահուանից յետոյ Տիրերիոս կայսրը շտապեց Հայաստանի վրայ նոր թագաւոր կարգել, որպէսզի պարթևները չմիացնեն իրանց երկրին։ Այս նոր թագաւորը եղաւ Վրաց Փարսման թագաւորի եղբայրը՝ Միհրդատ։ Վերջինիս պատճառով նոր պատերազմներ ծագեցին պարթևների և վրացիների մէջ։ Պարթևները պարտուեցին և Միհրդատ թագաւորեց։

Վրաց Փարսման թագաւորը տեսնելով որ իր չար և փառասէր որդի Հռադամիզդ մտադիր է իրենից խլել թագը, մտածեց նրան որևէ պատրուակով հեռացնել Վրաստանից։ Նա ուղարկեց նրան Հայաստան՝ իբ եղբօր մօտ և սովորեցրեց սպանել նրան և գահին տիրանալ։ Հռադամիզդ այդպէս էլ արաւ. եկաւ Հայաստան, սպանեց Միհրդատին և իրեն թագաւոր յայտարարեց։ Հռովմայեցիք չհակառակեցին, որովհետև նրանց համար միևնոյն էր, միայն թէ պարթևները չտիրէին։

Հռադամիզդ հայ անուամբ կոչուեցաւ Երուանդ (45—53 թ.)։

Այդ ժամանակ էր, որ Տիրիթ կամ Տրդատ՝

պարթևաց Վաղարշ թագաւորի եղբայրը զօրքով մտաւ Հայաստան։ Հայերն ատում էին Հռոդամիզդին. նրանք միաբանեցին Տրդատի հետ և պաշարեցին Հռոդամիզդին, որը փախաւ Վրաստան՝ ճանապարհին վիրաւոր ընկած թողնելով իր կնոջ Զենոբիային։ Տրդատ գրաւեց Հայաստանը 53 թ։ Հռովմայեցիք լսելով Հայաստանի անցքերի մասին, Կորբուղոն զօրապետի առաջնորդութեամբ մեծ զօրք ուղարկեցին պարթևների դէմ։ Պատերազմ արծարծուեց երկու ազգերի մէջ և Հայաստան ռնակոխ եղաւ։

Տրդատ բացարձակ պատերազմ չէր մղում. նա խուսափում էր ճակատամարտից. մանր յարձակումներով յոգնեցնում էր հռովմայեցիներին։ Կորբուղոն խորհուրդ էր տալիս Տրդատին թագը խնդրել Հռովմից և լինել հարկատու կամ հպատակ. Տրդատ չէր գնում հռովմայեցոց բանակը բանակցութեան։ Այն ժամանակ Կորբուղոնն սկսեց հայոց բերդերը պաշարել, որոնցից շատերն առնուեցան և կործանուեցան։ Այրուեցաւ և Արտաշատ մայրաքաղաքը (53 թ.)։ Այնուհետև առնուեցաւ և Տիգրանակերտը և Տրդատ ստիպուեցաւ քաշուել Մարաստանի կողմերը։

Հռովմը Հայաստանի վրայ թագաւոր կարգեց Կապադովկիայի թագաւորի որդի Տիգրանին։ Հայերը, որ ձանձրացել էին երկարատև աւերածութիւններից, մանաւանդ տեսնելով պարթևների ապիկարութիւնը՝ առանց ընդդիմութեան ընդունեցին նրան (59 թ.)։

Այս բոլոր պատերազմների ժամանակ հայերը լուռ հանդիսատեսներ էին և ենթակայ դանդաղ

քախտախնդիրների արկածներին. նրանց մէջ ոչ մի անգամ չարտայայտուեց հայրենասիրական զգացումը. նրանք տեսնում էին իրանց հայրենիքի աւերուելը և անտարբեր մնում։ Տիգրան Մեծի փառաւոր շրջանը կարծես նրանց մէջ ոչ մի յիշողութիւն չէր թողել։ Այդ նրանց բնաւորութեան մի գիծն է, որն ըմբռնելու համար հարկաւոր է ծանօթանալ նրանց կառավարութեան եղանակի և այն ներքին պայմանների հետ, որոնց մէջ նրանք գտնում էին։

Թէ մակեդոնական միապետութիւնը և թէ Հռովմը՝ տիրելով Հայաստանին՝ ձեռք չտուին ոչ նրանց կառավարութեան եղանակին և ոչ տիրող օրէնքներին. նրանք բաւականանում էին հայերի հպատակութեամբ։ Հայերն ու նրանց հետ ձուլուած մանր ցեղերն ապրում էին իրանց սեպհական ձգտումներով. վարչական նորաձևութիւններ Հայաստանի մէջ մտցրին պարսիկ նշանաւոր միապետները՝ Կիւրոս և Դարեհ։ Ուստի, որպէսզի ծանօթանանք հայերի վարչական ձևի և ներքին քաղաքական պայմանների հետ, պէտք է ծանօթանանք նախ վարչական այն ձևի հետ, որ գոյութիւն ունէր նախկին ընիկների՝ խալդերի մէջ և երկրորդ այն սկզբունքների հետ, որով ղեկավարուում էին պարսիկ միապետները վարչական գործերում։

Հայաստանն իր կազմութեամբ և դիրքով

բոլորովին առանձնայատուկ երկիր է ներկայանում Ասիայում. նրա սահմանները բաց են արտաքին ներս խուժումների առաջ. արևելքից Պարսկաստանի վրայով կարող էին զանազան ցեղեր մտնել. հարաւից՝ Ասորիքից սեմական ժողովուրդներն ազատ մուտք ունէին. հիւսիսից՝ Կովկասեան լեռների երեք անցքերով սկիւթացիներ և այլ լեռնականներ ազատ արշաւում էին. արևմուտքից յոյներ և Փոքր Ասիական զանազան ցեղերի առաջ ազատ ասպարէզ կար առաջանալու։

Այդ ժողովուրդներից իւրաքանչիւրն ունէր իր առանձնայատուկ սովորութիւններն ու վարչական ձևը, որ իրանց հետ պէտք է բերէին իրանց նոր հայրենիքը։

Բացի դրանցից կային և երկրի ընիկները՝ ուրարտցիները՝ իրանց որոշ կառավարութեան եղանակով։

Երկրի դիրքը բարեբաղդող պայմաններ չէր ներկայացնում զանազան տարերին 'ի մի ձուլելու եւ միաձուլոյն ձգտումներով ազգ ստեղծելու գործում։

Հայաստան երկիրը ներսում միանգամայն սահմանների հակապատկերն է ներկայանում. երկրի ամեն մի փոքր ու մեծ կտորները շրջապատուած ու անջատուած են լեռնակոյտերով ու լեռնաշղթաներով, որոնք ներսում յարաբերութիւնն ու շփումը միանգամայն դժուարին են դարձնում։ Այդ հանգամանքը նպաստում է իրա-

քանչիւր գաւառի ազգաբնակութեան իր յատուկ ձգտումներով զարգանալուն։ Այդպիսի պայմաններում նախնական կեանքը շատ քիչ փոփոխութեան կ'ենթարկուեր։

Այդ բոլոր երևոյթները նկատելի էին Ուրարտուի նախկին բնիկների՝ խալդերի մէջ. նրանց մէջ ինքնուրոյնութիւնն այնքան զարգացած էր, որ նոյն իսկ հարևան իրանց ցեղակից գաւառի ազգաբնակութեանը վանդ սպառնալիս նրանք միանգամայն անտարբեր էին մնում։ Նրանց մէջ բացակայում էր ընդհանուր մեծ հայրենիքի սէրը։ Ամեն մի գաւառի ազգաբնակութիւն սիրում էր իր գաւառը. ամեն մի գաւառի ազգաբնակութիւն ունէր իր առանձին բարբառը. որքան այլազան էին գաւառները, այնքան զանազանատեսակ էին և նրանց բարբառները։

Ամեն մի գաւառ կառավարում էր անկախ՝ իրեն առանձնայատուկ սովորութիւններով, որ ծագում էր երկրի պայմաններից։

Պարզ էր նրանց կառավարութեան եղանակը. նահապետական պարզ կենցաղը ստեղծել էր և նոյնպիսի վարչական ձև. տան (գերդաստան) գլուխ կանգնած էր հայրը, որի ձեռքում ամփոփուած էին ընտանիքի բոլոր իրաւունքները. մի քանի գերդաստաններ միացած կազմում էին գիւղական համայնք, որի գլուխ կանգնած էր գիւղապետը. գիւղում բացի գիւղապետից կային և հայրերը

(ծերերը). մի գաւառի համայնքների դաշնակցութեան ղեկավար ներկայանում էր տոհմապետը (նահապետը)։ Տոհմապետը գաւառի դատաւորն էր, տանուտէրը՝ գիւղի, հայրը՝ գերդաստանի։ Տոհմի բոլոր ստացուածքը, հողերը պատկանում էին նրա նահապետին. նահապետը ամբողջ տոհմի իրաւունքների մարմնացումն էր. դրա համար էլ նա պարտաւոր էր տոհմի ստացուածքը թէ պահպանել արտաքին յարձակումներից և թէ այժը ներածին չափ մեծացնել։ Եթէ տոհմապետն ուժեղանում էր, իր գերիշխանութեանն էր ենթարկում և մնացած տոհմապետներին։ Հայաստանը վարչական տեսակէտից ներկայանում էր տոհմապետների մի դաշնակցութիւն։ Գերիշխող նահապետի նշանակութիւնը կայանում էր նրանում, որ նա հարկ էր ստանում իրեն ենթարկուող տոհմապետներից, իսկ պատերազմի դէպքում՝ զօրք, առանց խառնուելու նրանց ներքին գործերում։ Նահապետ և տոհմապետ անունները յետակայում արտայայտուեցին միայն մի բառով՝ նախարար, իսկ աւագ տոհմապետ կամ աւագ-նահապետ բառերը դարձան թագաւոր, առանց նրանց իրաւունքների մէջ որևէ փոփոխութիւն մտցնելու։ Խալդերի շրջանում նոյնիսկ իւրաքանչիւր տոհմապետ թագաւոր տիտղոսն էր կրում։ Այսպիսով ուրեմն ժողովուրդը վարչական տեսակէտից բաժանւում էր միայն երկու դասակարգի.

իշխողների (տոհմապետ և նախարար՝ իրանց ժառանգներով) և գիւղացիութեան։ Կրօնաւորների պաշտօնն էլ գտնւում էր տոհմապետի կամ նրա մօտիկ ազգականի ձեռքում։ Այդպիսի երևոյթներից շատերը մինչև այժմ անփոփոխ նկատելի են հայ գիւղերում. քրիստոնէութեան առաջին շրջանում հայ կաթողիկոսները թագաւորական զարմից էին։

Այդպիսի կառավարութեան պարզ եղանակի վրայ աւելացան Կիւրոսի և Դարեհի բարենորոգութիւնները և նորանոր կարգերը։

Կիւրոս դառնալով իր մեծամեծներին ասաց.—Ես կարծում եմ, որ նրանք ովքեր մնում են այստեղ՝ ինձ մօտ, և որոնց ես պէտք է ուղարկեմ նուաճած ազգերի մօտ զանազան յանձնարարութիւններով, պէտք է որ իրանց տրամադրութեան տակ ունենան տուն և հող, որպէսզի իջևանելու վայր ունենան, ինչպէս իրանց տանը։

Այս ասելով նա շատերին հողեր բաժանեց զանազան երկրներում։ Այդ կալուածքներին այնուհետև ժառանգաբար տիրում էին նախորդ իշխանների յաջորդները, որոնք թէև թագաւորի պալատում էին գտնւում, բայց օգտւում էին այն հողերից։

Այդ կարգերի արդիւնքն ամենից առաջ այն եղաւ, որ հին նահապետների ու տոհմապետների վրայ աւելացաւ նոր ազնուականների դասակարգ, որոնք իրանց կալուածքները պարգև էին ստանում օտար արքաներից։ Իսկ վաճառականնում

թեան մուտք գործելով, երբ երևան եկաւ և հարուստ փողատէրերի դասակարգը, մնանկացած իշխաններից (հին նահապետներից և նոր ազնուականներից) կալուածքները գնելու սովորութիւնը մտաւ։ Այսպիսով ամբողջ երկիրը բաժանուեց կալուածքների, որոնք կամ հայրենական էին, կամ պարգևական և կամ քսակալին։ Այդ կալուածքներին տիրողները կազմում էին ազնուականների դասակարգը։

Գիւղացիները կամ ռամիկ, շինական դասակարգը մի քանի տեսակ հարկեր էր վճարում թէ ազնուական-նախարարին (կալուածատէր), թէ աւագ նախարարին (թագաւորին) և թէ օտար տիրապետողներին, որոնց իշխանութեան տակ գտնուում էր երկիրը։ Նրանք վճարում էին. խարաջ (խարջ)՝ հողային հարկ, գլգիս (գլխահարկ), բահրակ (բահրա)՝ եկամտի տուրք, այլ և պարտաւոր էին կատարել զանազան աշխատանքներ, որոնք ընդհանուր անունով կոչւում էին թեկար։ Գլխահարկ վճարում էին բացի իշխաններից, աւագներից, զինուորականներից, հոգևորականներից և աստիճանաւորներից (գործակալներից) 20—50 տարեկան հասակ ունեցողները՝ 12, 8, 6 և 4 դիրեմ-դրամ (տրեմ)՝ տարեկան երեք նուագ։

Կիւրոս պատուիրեց սատրապներին ամեն բանով իրեն նմանուել, և պահանջեց՝ նրանից,

որ նրանք սեպհական հող ունին և օգտում են իշխանութեամբ,-սատրապի արքունիքում լինին, ծառայեն նրան և իրանց որդոց տան այնտեղ կրթեն։

Աքեմենեանները ունէին հետևեալ պաշտօնեաները, հարկահան, ծախսարար, հասարակական աշխատանքների վերակացու, հետևակ զօրքի հրամանատար, հեծելազօրքի հրամանատար՝ սպարապետ և այլն, այլև պալատում կային՝ հացագործ, գինեպետ, արարողապետ, խոհարարապետ, տակառապետ, բաղանապետ, սպասաւորներ, անկողին փռողներ ու հաւաքողներ և այլն։

Պարթև Արշակունիները էլ նոյն օրինակին հետևելով՝ նուաճած երկրներում հողեր բաժանեցին իրանց ազգականներին։ Այս հանգամանքն է պատճառ, որ երկրում շարունակ նորանոր իշխանական տոհմեր էին աւելանում։ Երբ Արշակունիները հաստատուեցին Հայաստանում, ամբողջ երկիրը բաժանեցին 120 գաւառների կամ նախարարութիւնների (ինչպէս Տիգրան Մեծի ժամանակ)։ Նրանք ճանաչեցին հին տոհմապետների ժառանգներին իբրև իշխանական սերնդի, այլ և նորերն աւելացրին։

Նախարարներն անկախ կառավարում էին իրանց կալուածները, և դատում ժողովրդին հին բարքերի ու սովորութիւնների (ադաթների) համաձայն. գրաւոր օրէնք բացակայում էր։ Նախա-

իրանց ցոյց տուած օգտաւէտ ծառայութիւնների թագաւորից կամ մեծ արքայից վարձատրւում էին կալուածներով կամ ասպիճանով՝ բարձով։ Երբ հայ նախարարները գնում էին պարսից արքունիքը՝ արքայից արքան մեծարում էր նրանց՝ մատուցանելով պսակ կամ կանաչ ճիւղ։

Նախարարներն իրանց կալուածներն ամբողջութեամբ պահելու նպատակով ամուսնանում էին իրանց մերձաւոր ազգականուհիների հետ. այդ սովորութիւնը շարունակուեց նոյն իսկ քրիստոնէութեան շրջանում։

Ժողովուրդը շատ քիչ յարաբերութիւն ունէր թագաւորի հետ՝ բացի թագաւորական կալուածներում ապրողներից. ընդհանուր օրէնք, միանման կարգադրութիւններ համարեա թէ բացակայում էին. իւրաքանչիւր գաւառ զարգանում էր անկախ իր ձգտումներով։ Այդ է պատճառը, որ երբ ազգային հարստութիւնը վերջացաւ, երկիրը խաղալիկ դարձաւ զանազան բաղդախնդիրների ձեռքին, ժողովուրդը համարեա անտարբեր էր, որովհետև հարցը իր անմիջական թագաւորին՝ իշխանին չէր վերաբերում։

II

Տրդատ-Արտաշէս. նրա բարենորոգումները. Մովսէս Խորենացու աւանդութիւնները Տրդատ-Արտաշէսի և պարթև Արշակունիների հարստութեան մասին։

Հռովմայեցիների նշանակած Հայաստանի թագաւորը, որ Կապադովկիայի թագաւորի որդի Տիգրանն էր, յարձակուեց Ադիաբենի վրայ և Տիգրանն աւերեց։ Պարթև մեծամեծները շատ զայրացած էին Վաղարշակի դէմ, որովհետև հռովմայեցիք վռնդեցին Տրդատին՝ նա լռեց, Տիգրան աւերեց Ադիաբենը նա զէնքի չդիմեց. «Մեծ պետութիւններն այդպիսի դէպքերում չեն լռում և անգործ չեն նստում, այլ մրցում են թէ զէնքով և թէ մարդկանցով։ Մարդկանցից նա է իրաւացի, ով ուժեղ է»։

Վաղարշակ ազդուած այդ բողոքից՝ խորհուրդ դումարեց, Տրդատին նստեցրեց իր կողքին և այսպէս խօսեց. «Իմ հարազատ եղբօր Տրդատին ես նշանակեցի Հայաստանի թագաւոր, որը մեր տերութեան երդուած մասն է կազմում . . . բայց հռովմայեցիք արգելեցին . . . ես ամենից շատ եմ ցանկանում, որ իմ նախահայրերի ձեռք բերածը օրէնքի՝ իրաւունքի հիման վրայ պահպանեմ, քան թէ արիւնով . . . ես դանդաղութեամբս սխալ գործեցի, այդ սխալը ես կարող եմ քաջութեամբս ուղղել»։

Այնուհետև Վաղարշակ գրքեր տուաւ Տրդատին, ուղարկեց Հայաստան, ինքն էլ գրքեր պատրաստեց հռովմայեցիների վրայ արշաւելու։ Միւս կողմից նա պատգամաւոր ուղարկեց Հռովմի սենատին, իր իրաւունքները Հայաստանի վրայ ապացուցելու, որպէսզի նա Տրդատին օրինաւոր թագաւոր ճանաչէ։ Սենատը մերժեց նրա միջնորդութիւնը և պատերազմը դրդուեց։

Հռովմայեցիք պարտուեցին և շատ լեգիոններ գերի ընկան կամ մեռցին պաշարուած։ Վաղարշակ մեղմութեամբ էր վարւում նրանց հետ. նա երկրորդ անգամ դեսպան ուղարկեց Հռովմ՝ բացատրելու հռովմայեցիների դրութիւնը և իր վեհանձն վարմունքը։ Նա դեսպանների միջոցով յայտնում էր, որ Տրդատ կրհամարուի Հռովմից նշանակուած թագաւոր. իսկ եթէ մինչև այժմ նա չէ գնացել անձամբ թագ ստանալու, պատճառն այն է, որ նա իրեն մոգ՝ չեր կարող ծոմով ճանապարհորդել. ջուրը նրանց օրենքով աստուածորին է եւ նրա մէջ թքելը՝ արբապղծորին։ Միաժամանակ նա հռովմայեցոց զօրապետ Կորբուլոնին զինադադար առաջարկեց. որպէսզի Տրդատ բանակցութեան մէջ մտնէ նրա հետ։

Որոշուած օրը Կորբուլոն երկու սպայ ուղարկեց Տրդատի բանակը, որից յետոյ Տրդատ քսան հեծեալներով գնաց հռովմայեցոց բանակը. նա իջաւ ձիուց, որին հետևեց Կորբուլոն, և իրար

ձեռք տուին։ Կորբուլոն Տրդատի վարմունքը շատ խելացի համարեց՝ անկախ թագաւորելը գերադասելով պատերազմից։ Տրդատ շողոքորթեց նրան ասելով, որ չնայելով պարթևները չեն պարտուել, այնուամենայնիւ նա կըգնայ Հռովմ թագ ստանալու, որպէսզի կայսեր փառքն աւելի մեծանայ։ Ապա պայմանաւորուեցին, որ Տրդատ իր թագը կըդնէ կեսարի պատկերի առաջ և, 'ի նշան խոնարհութեան, կըվերցնէ ու գլխին կըդնէ։ Նրանք նախ քան բաժանուելը համբուրուեցին։

Մի քանի օրից յետոյ երկու բանակները մեծ շքով շարուեցին իրար դիմաց. հայերը խառն էին պարթևների հետ։ Լեգիոնները կիսաշրջան կազմելով շրջապատել էին մի տաճար, որի վրայ դրուած էր կեսարի արձանը։ Տրդատ մօտեցաւ, զոհ մատուցեց, իր թագը դրեց կենդանագրի ոտքերի մօտ։ Այնուհետև Տրդատ մեծ խնջոյքներ կազմեց, որոնց ժամանակ գործադրեց իրանց ամենահին սովորութիւնները. այդ սովորութիւնները մեծ հետաքրքրութիւն էին զարթեցնում հռովմայեցիների մէջ։

Այդտեղից Տրդատ գնաց իր մօրը, Բակուրոս և Վաղարշակ եղբայրներին «միաս բարև» ասելու։ Վաղարշակ մի նամակով խնդրեց Կորբուլոնին, որ Տրդատին պատիւներ տան և չնուաստացնեն, որպէսզի նա (Տրդատ) միշտ իր սուրը վրան ունենայ, որ նահանգապետներին ողջունելիս համբուրուելու իրաւունք ունենայ, նրանց դէմքերի մօտ սպասեցնել չտան, որ Հռովմում նա միևնոյն

պատիւներին արժանանայ, ինչ որ կոնսուլները։

Հռովմի կայսրն էր Ներոն, մի թեթևամիտ և վերին աստիճանի փառասէր մարդ. նա համաձայնուեց, որ Տրդատ գնայ Հռովմ և իրանից թագ ստանայ։ Նա Տրդատի համար մեծամեծ ընծաներ ուղարկեց՝ 'ի նշան իր հաճութեան։

Տրդատի ճանապարհորդութիւնը տևեց ինն ամիս. նա Բոսֆորից անցնելով մինչև Հռովմ յամաքով ճանապարհորդեց։ Նա շրջապատուած էր 3000 հայ և պարթև հեծեալներով և մոգերով։ Նրա գնացքը մեծ շքով էր կատարւում. Ներոն իր վրայ էր վերցրել ամբողջ ճանապարհորդութեան ծախքը, որպէսզի աւելի շուք տայ։ Ինն ամսուայ ընթացքում ծախսուեց 20150000 ռուբ.։ Հրաշալի տեսարան էր. ոսկեզօծ սաղաւարտների շարքեր շրջապատում էին Տրդատի առաջին կնոջը, որը ոսկէ թագ ունէր գլխին, ձի նստած՝ շրջապատուած բազմաթիւ մանուկներով. դրանք միայն Տրդատինը չէին, այլ և Վաղարշակինը, Բակուրոսինը և Ադիաբենի թագաւոր Մանաւազինը։ Պակաս գեղեցիկ չէր և ինքը Տրդատ, որը մի վառվռուն երիտասարդ էր։ Քաղաքները մեծ շքով էին ընդունում նրանց. ազգաբնակութիւնը ընդառաջ էր գնում։

Ներոն այն ժամանակ Նապոլի էր. Տրդատ գնաց այնտեղ։ Նա հրաժարուեց սուրը Ներոնի առաջ դնելու, միայն մի ծնկի վրայ չոքեց՝ ձեռքերը կրծքին ծալած և երկրպագեց՝ իբրև իր աստծուն։ Կայսրը 'ի պատիւ Տրդատի Պուտէլէոս կրկէսում ըմբշամարտութիւն սարքեց. ամբողջ օրը բեմը լցուած էր եթովպացի դերասաններով՝ կին, տղամարդ և երեխայ։ Տրդատ իր գահից մեծ յաջողութեամբ նետահարում էր ցուլերին, իսկ

հանդիսականները հրճւում էին։

Այնուհետև նրանք վերադարձան Հռովմ։ Ամբողջ քաղաքը ծաղկապսակ լապտերներով լուսաւորուած ողջունում էր օտարերկրացիներին, որոնք այնքան հեռու տեղից եկել էին յարգանք մատուցանելու իր կայսրին։ Ամբոխը սպիտակ հագած լցրել էր Ֆորումի հրապարակը. տունները զարդարել էին ծաղկեպսակ զարդարանքներով. եղանակը վատանալու պատճառով մի օր յետաձգուեց հանդէսը. հետևեալ գեղեցիկ գիշերը երևան եկան այդ պատրաստութիւնները։

Առաւօտեան երեսցին կանոնաւոր գեղեցիկ շարքերով շարուած զինուորներն իրանց փայլուն զէնքերով. ծառուղիներն այնպէս էին լցուել պլէբէյներով, որ տեղ գտնելու տեղ չկար։ Այդ ամբոխի և զօրքի շարքերի միջով անցաւ Ներոն՝ հագած սպիտակ պատմուճան, որը մեծ յաղթանակներ տանելու առթիւ էր հագնում. նա շրջապատուած էր սենատով և իր թիկնապահներով։ Նա բաւականաչափ աստիճաններ բարձրանալուց յետոյ նստեց իր գահի վրայ։ Տրդատ մօտեցաւ և երկրպագութիւն տուաւ։ Ամբոխն այդ բանը տեսնելով սաստիկ աղաղակներ բարձրացրեց 'ի պատիւ Տրդատի. սակայն նա կարծելով թէ իրեն անարգելու համար է, մնաց շփոթուած։ Երբ ամբոխը լռեց Տրդատ վեր կենալով ասաց Ներոնին. «Կեսար, ես Արշակունիների որդին եմ, Պակուրոսի և Վաղարշակի եղբայրը. ես ինձ քեզ ծառայ եմ յայտարարում։ Ես եկել եմ քեզ մօտ՝ իմ աստծուն մօտ. ես քեզ պաշտում եմ, ինչպէս իմ Միթրա աստծուն. քո հրամանը կատարելը ինձ համար մեծ բաղդաւորութիւն կլինի, որովհետև դու ինձ համար և Բաղդ ես և Բարիք»։ 'Ի պատասխան դրան՝ Ներոն արտասանեց. «Դու շատ խելօք վարուեցիր, որ եկար ինձ յարգանք մատուցանելու, որովհետև ես քեզ տալիս

եմ մի թագաւորութիւն, որ ոչ քո հօրից ես ստացել իբրև ժառանգութիւն և ոչ եղբայրդ քեզ տուեց, որովհետև չկարողացաւ իր սեպհական ուժով պահպանել։ Ես քեզ Հայաստանի վրայ թագաւոր եմ նշանակում, որպէսզի թէ քեզ և թէ ուրիշներին ցոյց տամ, որ ես ոյժ ունիմ կայսրութիւններ բաժանելու և յետ վերցնելու»։ Այս ասելուց յետոյ հրամայեց Տրդատին իւր մօտ բարձրանալ՝ նրա համար պատրաստած առանձին ճանապարհով։ Տրդատ նստեց Ներոնի ոտների մօտ, որը թագը վերցնելով բազմութեան ազազակների տակ դրաւ Տրդատի գլխին։ Այդ զուարճութիւնները Սենատը կազմակերպել էր Պոմպէի կրկէսում. ամբողջ ռեպերտուար էին խաղում։ Բեմը, օթեակները, նստարանները փայլում էին ոսկեզօծ զարդարանքներով, վարագոյրները ծիրանի էին. Ներոն օթեակում փայլում էր ոսկեհուռ վերարկուի՝ մէջ. երբ նա իր կառքն էր վարում, արհեստական մի լոյս ասղեր էր փայլեցնում նրա չորս կողմը. նա այդ ժամանակ հագած էր լայն թևերով կանաչ քազակ և գլխին դրած կառապանի գդակ։ Խնջոյքի ժամանակ, երբ խաղերն ընդհատուեցին, Ներոն քնար ածեց։ Տրդատ այդ բոլորն անվայել էր համարում մի կայսեր համար։ Տրդատ Ներոնին մի «մոգական խնջոյք» տուեց, որից յետոյ Ներոն ցանկացաւ մոգութեան աբարողութեան ժամանակ օրհնութիւն ստանալ, սակայն Տրդատ մերժեց։ Այնուհետև Ներոն հիացած իր վառքից Տրդատի գլխին թանկագին նուէրների մի անձրև թափեց. դրանց արժէքը 50 միլիոն դնիէի էր հասնում։ Տրդատի թագաւորութեան օրը կոչուեց Ոսկէ օր։

Տրդատ մեծ շքով վերադարձաւ Հայաստան բազմաթիւ արհեստաւորներով և արուեստագէտներով՝ Արտաշատ մայրաքաղաքը զարդարելու և

վերանորոգելու։ Արհեստաւորների մի մասը ինքը կայսրն էր նուիրել։

Այնուհետև Տրդատ իշխեց Հայաստանի վրայ միանգամայն խաղաղ 60—107 թ.։ Հայաստանի երկու հզօր մրցակիցները՝ հռովմայեցիք ու պարթևները բարեկամ էին և երբէք չմտածեցին երկրի խաղաղութիւնը վրդովել։ Ազգային հարստութեան անկումից յետոյ առաջին անգամն էր Հայաստանն այդպիսի երկարատև խաղաղութիւն վայելում։ Այդ խաղաղութեան արդիւնքը եղաւ երկրի բարգաւաճումը։ Տրդատ կարողացաւ օգտուել այդ դրութիւնից. նա աւերուած գիւղերն ու քաղաքները վերանորոգեց, անբնակ տեղերը գաղթականներով բնակեցրեց, զարկ տուաւ երկրագործութեանն ու արհեստներին. շնորհիւ իր Հռովմ կատարած ճանապարհորդութեան՝ նա մօտիկից ծանօթացաւ հռովմայեցոց քաղաքակրթութեան, շինութիւնների ձևերի և կարգերի հետ, և վերադառնալով Հայաստան շատ նորանոր կարգեր մտցրեց։

Վաղարշակ իբրև քաղաքագէտ և հեռատես մարդ՝ ըմբռնել էր հայ իշխանների դերը երկրի խաղաղացման գործում. դրա համար է, որ նա սկզբից գրաւեց հայ ազնուականներին, և, երբ Տրդատ ոտք դրեց Հայաստան, նրանք ամենքն էլ միացան նրա հետ։ Ի վարձատրութիւն նրանց ցոյց տուած աջակցութեան և մասամբ էլ նրանց

շոյելու և Տրդատին ենթարկելու նպատակով Աքեմենեանների սովորութեան համաձայն նրանցից ամեն մէկին պաշտօններ տուաւ։ Վաղարշակի քաղաքականութիւնն էր խոնարհուել, միայն թէ իշխանութիւն ստանալ։

Հայերն այնքան սիրեցին Տրդատին, որ նրան տուին Արտաշէս անունը։ Տրդատ դուր էր գալիս նրանց մանաւանդ իր գեղեցկութեամբ։

Հայ ժողովրդին հէնց այդպիսի թագաւոր էլ հարկաւոր էր, որովհետև նա աւելի շատ հակուած էր խաղաղ աշխատանքին, քան թէ պատերազմների, մանաւանդ որ նա երկարատև արշաւանքներից ձանձրացել էր։

Մի անգամ միայն խաղաղութիւնը վրդովուեց ալանների յարձակմամբ, որոնք արշաւել էին Մարաստանի վրայ։ Տրդատ իր երկրի սահմանները պաշտպանելու ժամանակ մեծ փորձանքի մէջ ընկաւ. լեռնական ալանները ըստ իրանց սովորութեան վայրենի ձի որսալու պարան ձգեցին Տրդատի վրայ և քիչ մնաց նրան բռնէին։ Տրդատ ճարպիկութեամբ սրով կտրեց պարանը և փախաւ։ Ալաններն աւերեցին Հայաստանի հիւսիս արևելեան սահմանները։ Հայերի և նրանց մէջ ճակատամարտ տեղի ունեցաւ, որի ժամանակ ալանաց թագաւորի որդին գերի բռնուեց։ Այդ բանից զրդուած ալանները խաղաղութեան դաշն կնքեցին հայերի հետ, որը հաստատուեց

Տրդատի և ալանաց թագաւորի դստեր ամուսնութեամբ։

Տրդատ-Արտաշէսի թագաւորութիւնը անմոռաց մնաց հայ ժողովրդի յիշողութեան մէջ և նրա կեանքը նիւթ դարձաւ վիպասանական երգերի, որը բերում է Մովսէս Խորենացին։

Այդ աւանդութեան համաձայն Արտաշէս Բ. (Տըրդատ-Արտաշէս) հարաւային Հայաստանի Արշակունի Սանատրուկ թագաւորի որդին էր։ Երուանդ՝ մօր կողմից Արշակունի իշխանը կուսակալ էր նշանակուած հիւսիսային Հայաստանում։ Սանատրուկի մահուանից յետոյ Երուանդ յափշտակեց նրա գահը և ջնջեց Սանատրուկի սերունդը։ Սմբատ Բագրատունի իշխանը ազատեց փոքրահասակ Արտաշէսին և փախցրեց նախ Կորդուաց կողմերը, ապա Պարսկաստան՝ Դարեհ թագաւորի պալատը։ Երուանդ փորձեց համոզել Դարեհին, որ Արտաշէս հասարակ մար հովուի որդի է, բայց չյաջողուեց։ Արտաշէս մեծանում էր Դարեհի պալատում, իսկ Սմբատ ծառայում էր Պարսից զօրաբանակում։ Նրա ցոյց տուած ծառայութիւնների փոխարէն Դարեհ հաւանեց զօրք տալ, որպէսզի Հայաստանի գահը վերադարձնէ Արտաշէսին։

Երուանդ լսեց Սմբատի և Արտաշէսի գալու մասին և շտապեց զօրք գումարել. նա հայ նախարարներին մեծամեծ ընծաներով իր կողմն էր գրաւում. Մուրացան ազգի տանուտէր Արգամին երկրորդական գահը տուաւ, տակայն բոլորն 'ի զուր անցան. հէնց որ Արտաշէս մուտք գործեց Հայաստան, նրանք միացան նրա բանակին։ Միայն Արգամն էր մնացել, որը Սմբատից երկրորդական գահն ստանալու խոստումն առնելով՝ չմասնակցեցաւ

նակցեց ճակատամարտին։

—Երբ Երուանդի զօրքի դէմ երևացին Արտաշէսի դրօշակները, Արգամ վերցրեց իր հետևակների բազմութիւնը և մի կողմ քաշուեց։ Սմբատ հրամայեց պղնձէ փողերը հնչեցնել, և իր ճակատն առաջ քաշելով՝ արծուի նման կաքաւների երամի վրայ խոյացաւ։ Իսկ հայոց նախարարները, որոնք (Երուանդի) աջ և ձախ կողմերին էին, նրա հետ միացան։ Վրաց զօրքը իրանց Փարսման բազաւորի հետ բեռ յանդուգն յարձակմամբ առաջ ելնել, սակայն արագութեամբ մի կողմ դարձան եւ փախան։

Այդտեղ կարելի էր տեսնել այն սարսափելի կռորածը, որը տեղի ունեցաւ Երուանդի գնդի և Միջագետքի զօրքերի մէջ։ Կռուի խառնուածքում Տաւրոսի քաջերը, որոնք խոստացել էին իրանց կեանքի գնով Արտաշէսին սպանել, պատահեցին նրան։ Նրանց դէմը ելաւ Արտաշէսի սանդուկ որդի Գիսակը, որը նրանց սպանելով՝ ինքն էլ դէմքի կիսից զրկուեց սրով և յաղթութիւն տանելով մնաց։ Մնացորդ զօրքը փախուստի դիմեց։

Իսկ Երուանդ իր բանակից մինչև քաղաք եղած ամբողջ տարածութիւնը ձիով անցաւ՝ իջևաններում ձիանք փոխելով։ Սմբատ նրան հետապնդելով ամբողջ գիշերը քշեց մինչև քաղաքի դուռը։ Մարաց գունդը հեռանալով Երուանդին կուսակից զօրքից՝ բանակեց դիակների վրայ։ Արտաշէս հասաւ Երուանդի վրանին. նրա ննջարանը շրջապատուած էր կաշիով և կտաւով. այդ գիշերը նա նրա մէջ անցկացրեց։ Առաւօտեան նա, իբրև թագաւոր, հրամայեց դիակները թաղել և այն հովիտը, որտեղ դիակների վրայ բանակեց, անուանեց Մարերի մարգ, իսկ ճակատամարտի տեղը՝ Երուանդավան, որ մինչև այսօր էլ կոչւում է, այսինքն՝ այստեղից քշեցին Երուանդին։ Ինքը չուեց-գնաց քաղաքը։ Կէսօրից առաջ հասաւ Երուանդի մայրաքաղաքին և զօրքին հրամայեց միահամուռ գոչել. «Մար ամատ», որը նշանակում է՝ «Մարը եկաւ», յիշեցնելով այն վիրաւորանքը, որ Երուանդ ուղարկել էր պարսից թագաւորին և Սմբատին՝ նրան (Արտաշէսին) «մար» անուանելով։ Նոյն աղաղակի համաձայն էլ մայրաքաղաքը կոչուեց Մարմէտ՝ Արտաշէսի կամքով, որպէսզի Երուանդի անունը վերացուի այդտեղից։ Այդ է մայրաքաղաքի այդպէս կոչուելու պատճառը։

Սմբատ գիշերը հասնելով Երուանդին՝ փոքրաթիւ զօրքով քաղաքի դուռը պահեց մինչև Արտաշէսի և ամբողջ զօրքի հասնելը։ Երբ քաջերը կռուեցին ամբոցի դէմ, նրա միջի մարդիկ անձնատուր եղան, իսկ զինուորներից մէկը մտնելով՝ թրով խփեց Երուանդին, ուղղը ցրուեց տան յատակի վրայ, և այսպէս ջախջախուելով մեռաւ՝ քսան տարի թագաւորելուց յետոյ։ Բայց Արտաշէս յիշելով, որ Արշակունի (թագաւորական տոհմից) արքայ է, հրամայեց նրա դին թաղելուց յետոյ մահարձան կանգնեցնել։ Սմբատ արքունի գանձարանում գտնելով Սանատրուկի թագը, նրանով պսակեց Արտաշէսին։

Այս աւանդութեան համաձայն՝ այնուհետև Արտաշէս վարձատրեց այն նախարարներին, որոնք իրեն օգնել էին, հռովմայեցիներին հարկ վճարեց ու դաշն կապեց և Արտաշատ քաղաքը շինելով՝ իր գահն այնտեղ հաստատեց։

Ալանաց արշաւանքի մասին հետևալն է պատմում.

—Այս միջոցին լեռնական ալաններն ամենքը միարանելով՝ իրանց կողմը գրաւեցին և վրաց աշխարհի կէս մասը և մեծ բազմութեամբ տարածուեցին մեր աշխարհում։ Արտաշէսն էլ ժողովեց իր զօրքի բազմու-

թիւնը և պատերազմ ծագեց երկու երկրների քաջերի և ազնուականների մէջ։ Ալանաց ազգը մի քիչ յետ նահանջելով անցաւ մեծ կուր գետը և բանակեց գետի եզերքին՝ հիւսիսային կողմից։ Արտաշէս հասաւ, բանակեց հարաւային կողմում, իսկ գետը մնաց նրանց մէջ տեղում։

Որովհետև հայոց զօրքերը Ալանաց արքայի որդուն գերի բռնելով բերել էին Արտաշէսի մօտ, ուստի նա (Ալանաց թագաւորը) խաղաղութիւն էր խնդրում խոստանալով Արտաշէսին տալ՝ ինչ նա ցանկանայ. երդմամբ մշանջենաւոր դաշինք խոստացաւ հաստատել, որպէսզի միւս անգամ ալանաց երիտասարդները աւազակների պէս չյարձակուեն Հայոց աշխարհի վրայ։ Երբ Արտաշէս յանձն չառաւ պատանուն տալ, գետափ եկաւ նրա քոյրը, կանգնեց մի մեծ բլրի վրայ և թարգմանների բերանով ասաց՝ Արտաշէսի բանակին ուղղելով խօսքը.

—Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
Ե՛կ հաւանեաց աչագեղոյ դստերս Ալանաց՝
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու
Ո՛չ է օրէն դիւցազանց
Զայլոց դիւցազանց զարմից
Բառնալ զկենդանութիւն,
Կամ ծառայեցուցանելով և 'ի սարկաց կարգի պահել
Եւ թշնամութիւն յաւիտենական
'Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել։

—Քեզ եմ ասում, ով քաջ Արտաշէս,
Որ Ալանաց քաջ ազգին յաղթեցիր
Լսիր ալանաց գեղատեսիլ օրիորդին
Եւ վերադարձրու պատանուն։

Դիւցազուններին վայել չէ՝ մի թշնամութեան համար
Ուրիշ դիւցազունների զարմից ժառանգութիւնը ջնջել,
Կամ ծառայ դարձնելով սարկի պէս պահել
Եւ երկու քաջ ազգերի մէջ յաւիտեան թշնամութիւն
հաստատել։

Արտաշէս լսելով այսպիսի խելացի խօսքեր, գնաց գետի եզերքը և տեսնելով գեղեցիկ աղջկանն ու լսելով նրա խելացի խօսքերը՝ հաւանեց նրան։ Կանչելով իր դայեակ Սմբատին՝ յայտնեց իր սրտի ցանկութիւնը՝ թէ ցանկանում է կնութեան առնել նրան, ուստի և դաշինք հաստատել երկու քաջ ազգերի մէջ և պատանուն ազատ արձակել։ Սմբատ հաւանելով նրա խօսքերին, մարդիկ ուղարկեց Ալանաց արքայի մօտ և խնդրեց Ալանաց արքայադուստր Սաթենիկին կնութեան տալ Արտաշէսին։ Ալանաց արքան պատասխանում է. «Ո՞րտեղից կարող է տալ քաջ Արտաշէսը անագին գանձ Ալանաց քաջ ազգի օրիորդի համար։

Այն ժամանակ՝

Հեծաւ արի արքայն Արտաշէս 'ի սեաւն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց 'ի մէջք փափուկ օրիորդին Ալանաց
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով 'ի բանակն իւր։

—Արտաշէս քաջ արքան հեծաւ իր գեղեցիկ սև ձին,
Հանեց ոսկէօղ կարմրափոկ պարանը,
Արծուի նման սլացաւ անցաւ,
Ոսկէօղ կարմրափոկ պարանը ձգեց,
Որ ընկաւ Ալանաց օրիորդի մէջքը։
Նա շատ ցաւեցրեց քնքոյշ օրիորդի մէջքը,

Արաղ հասցնելով իր բանակը։
Հարսանիքի մասին երգում էր.
Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշէսի,
Տեղայր մարգարիտ 'ի հարսնութեանն Սաթինկանն։

—Արտաշէսի փեսայութեան ժամանակ ոսկի էին ցրում,
Սաթենիկի հարսնութեան ժամանակ՝ մարգարիտ։
Նրա գործունէութեան մասին աւանդութիւնը պատմում է.

—Այնուհետև Արտաշէս հրամայեց գիւղերի և կալուածների սահմանները որոշել, որովհետև շատ դաղթականներ բերելով և բնակեցնելով լեռներում, հովիտներում և դաշտերում՝ Հայոց աշխարհը բազմամարդ դարձրեց։ Սահմանների նշաններն այսպէս հաստատեց. հրամայեց քառանկիւնի քարեր տաշել, նրանց մէջ պնակի ձևով փոս շինել և հողի մէջ թաղել. նրանց վրայ քառանկիւնի թումբեր կանգնեցրեց՝ երկրի մակերևոյթից քիչ բարձր։ Արտաշէսի ժամանակ Հայոց աշխարհում պարապ տեղ չմնաց՝ ոչ լեռնային և ոչ դաշտային մասերում, որովհետև երկիրը շէնացել էր։

Թէպէտ և Վաղարշակ և ուրիշ նախկին թագաւորներն էլ գեղեցիկ կարգեր եւ սովորութիւններ մտցրին, սակայն մեծամեծ գիտութիւններից եւ արուեստներից անտեղեակ էին մնացել, շնորհիւ աւազակների եւ ասպատակաւորների, և դէպի այդպիսի գիտութիւնները, կամ անփոյթ էին դառնում, կամ չէին կարողացել ձեռք բերել. օրինակ՝անտեղեակ էին շաբաթներին, ամիսներին եւ տարուայ հաշիւներին։ Որովհետեւ նրանք չգիտէին այդպիսի բաներ, ուստի ուրիշ ազգերի հաշուով էին կատարում. ոչ մեր աշխարհի ծովակների վրայ նաւագնացութիւն կար, ոչ գետերի վրայով նաւապարհորդութիւն եւ ոչ ձրկ-

նորութեան գործիքներ կային. ամեն տեղ երկրագործութիւն չկար, միայն սակաւ տեղերում զոյութիւն ուներ. հիւսիսականների սովորութեամբ նրանք որսով եւ այլ այսպիսի բաներով էին կերակրւում։

Արտաշէսի մահուան մասին պատմում է.

—Արտաշէս հիւանդացաւ Մարանդի Բակուրակերտ աւանում։ Արեգնից տոհմի նահապետ Արեգն, որ մի կեղծաւոր մարդ էր, նա ուղարկեց Եկեղեաց գաւառի Երիզա աւանը՝ Արտեմիզի մեհեանում կուռքերից բժշկութիւն և երկար կեանք խնդրելու։ Արտաշէս մահուան անկողնում անձկանօք բացականչում էր. «Ո՞վ կըտայ ինձ ծխանի ծուխը և Նաւասարդի առաւօտը, եղնիկների վազելն ու եղջերուների վազելը. մինչ փող էինք փչում և թմբուկ զարկում, ինչպէս որ թագաւորների սովորութիւնն է»։

Արեգը դեռ չվերադարձած՝ Արտաշէս վախճանուեց։ Մեծ բազմութիւն, սիրելի կանայք, հարճեր և հաւատարիմ ծառաներ մեռան Արտաշէսի համար։ Ի պատիւ նրա դիակի՝ մեծ շուք արին ոչ թէ բարբարոսների սովորութեան համաձայն, այլ քաղաքավարի կարգերով։ Դագաղը ոսկեզէնէր, բարձնուանկողինը՝ բեհեզից, դիակի վրայ ձգած հանդերձը՝ ոսկեթել. գլխին թագ էր կապուած և ոսկեզէն գէնքերն առաջ էին դրուած։ Նրա բարձի շուրջը որդիքն ու ազգականների բազմութիւնն էր. նրանցից յետոյ զինուորական պաշտօնեաները, նահապետները և նախարարների զնդերը և ապա բոլոր զօրապետների վաշտերը՝ ամենքը զինուած, որպէս թէ պատերազմի էին գնում։ Առջևից պղնձէ փողեր էին հնչեցնում. յետոյ ողբերգու ազգգեստ կոյսեր և ողբասաց կանայքն էին հետևում. ամենից վերջը ռամիկ բազմութիւնն էր։ Այսպէս տարան թաղեցին։ Նրա վերեղմանի շուրջը կամաւոր մահացողներ էին լինում։

Նա այսպէս սիրելի լինելով մեր աշխարհին՝ քառասուն տարի թագաւորեց։

Մովսէս Խորենացին պատմում է պարթևների հաստատուելը Հայաստանում՝ համաձայն ազգային աւանդութեան՝ հետևեալ կերպով։

—Պարսից և պարթևաց մեծ արքայ Արշակը, որ ազգով պարթև էր, ապստամբուեց մակեդոնացիներից և թագաւորելով ամբողջ Արևելքի և Ասորեստանի վրայ, Նինուէում սպանեց Անտիոքոս թագաւորին և ամբողջ աշխարհը հնազանդեցրեց իրեն։ Սա թագաւորեցրեց մեր Հայոց աշխարհի վրայ իր եղբօր Վաղարշակին՝ յարմար համարելով այսպիսով իր թագաւորութեան համար յիշատակ ստեղծել։ Նրան մայրաքաղաք նշանակեց Մծբինը, սահմաններ նշանակեց մի փոքր Ասորիքի արևմտեան կողմից, Պաղեստինը, Փոքր Ասիան, ծովերի միջև տարածուած երկրները, Թիտաղիան, Պոնտոսի ծովից մինչև այն տեղը, ուր Կովկասեան լեռները յանգում են ծովին և էլի՝ «որքան քո խելքը և քաջութիւնը կարում են. որովհետև քաջերի սահմանները իրանց գենքն է. որչափ կտրում է, այնքան էլ վերցնում է»։

Վաղարշակ իր իշխանութիւնը կարգի բերելով և թագաւորութիւնը հաստատելով՝ ցանկացաւ իմանալ՝ թէ ովքեր կամ ինչպիսի մարդիկ են մեր աշխարհին տիրել մինչև իր ժամանակը. արդեօք քաջերի՞, թէ՞ վախկոտների տեղ է թագաւորում։ Եւ գտնելով Մար Արաս Կատինա անունով մի քաղդէացի, որը խելացի, յունարէն և քաղդէարէն լաւ իմացող մարդ էր, ուղարկեց իր մեծ եղբօր Արշակի մօտ՝ նրան արժանի ընծաներով, որպէսզի նրա առաջ բանայ արքունի դիւանը։

Արշակ սիրով կատարեց եղբօր խնդիրը և Մար Արաս քաղելով Հայոց պատմութեան վերաբերեալ դէպքերը՝ բերաւ Հայաստան։ Վաղարշակ այդ պատմութեան

համաձայն՝ հին տոհմապետներին նախարարութիւններ դարձրեց եւ իշխանութիւն տուաւ։

Նրա կարգած նախարարութիւններն են.

Բագրատունիք՝ թագադիրներ և ասպետներ,

Գնունիք՝ հանդերձապետներ (թագաւորին հագցնողներ),

Խորխորունիք՝ թագաւորական թիկնապահներ,

Գնունիք՝ արքունի տակառապետներ,

Ամատունիք՝ թագաւորական դրօշակակիրներ,

Վարազնունիք՝ արքունի որսատեղերի վերակացուներ,

Գաբեղեանք՝ արքունի ախոռապետներ,

Աբեղեանք՝ պալատի և գահերի վերակացուներ (արարողապետներ),

Սպանդունիք՝ արքունի մատակարարներ (սպանդանոցի վերակացուներ),

Հաւեանունիք՝ թագաւորական բաղէակալներ,

Զիւնական նախ.՝ ամարանոցների վերակացուներ,

Վահեվահեանք՝ հին թագաւորական սերնդից՝ քրմեր։

Նահապետութիւններ.

Ծոփաց մեծ նախարարութիւնը, Ապահունեաց, Մանաւազեան, Բզնունեաց, Սկիւռեաց, Մամիգոնեաց, Կորդուաց, Անձեւացեաց, Ռշտունեաց, Գողթնեաց, Մուրացան։

Տոհմանապահներ՝ բդեշխներ.

Սիւնեաց, Դուգարաց, Անգեղեան (Անգղեան), Ապնունեաց։

Բացի դրանցից՝ Վաղարշակ կարգեց բարին և չարը յիշեցնողներ, դատաւորներ՝ թէ պալատում, թէ քաղաքներում և թէ գիւղերում. ժողովրդին բաժանեց քաղաքացի և գիւղացի դասակարգերի՝ իւրաքանչիւրի պարտականութիւնները սահմանելով։ Վաղարշակ կարգ սահմանեց, որ թագաւորի որդիքը՝ բացի անդրանիկից, ապրեն Հաշտենից գաւառում։

III

Հայաստանը հռովմայեցոց մի նահանգ. պարթևների և հռովմայեցիների մրցումը՝ Հայաստանին տիրելու. Խոսրով Ա. և յեղափոխութիւն Պարսկաստանում. Սասանեանք. Տրդատ Բ. նրա փախուստը Հռովմ, վերադարձը և կրկին թագաւորելը։

Տրդատ-Արտաշէսի մահուանից յետոյ յաջորդեցին իրար յետևից Արտաւազդ և Աշխադար որդիքը։ Արտաւազդ շատ կարճ թագաւորեց։ Հայաստանն այդ շրջանում միանգամայն հռովմայեցոց ազդեցութեան տակ էր, և այդ ազդեցութիւնն անհետանալ չէր անցնում պարթևների համար. Հռովմը յաճախ պատրուակ էր գտնում խառնուելու նրանց ներքին գործերում և իր ազդեցութիւնը տարածելու Պարսկաստանի վրայ։ Պարթև թագաւորներին այդ բանը ձեռնտու չէր, որովհետև թէ պարսիկ ժողովուրդը և թէ նրա ազնուականութիւնը միանգամայն խորշելով արևմտեան քաղաքակրթութիւնից՝ զայրանում հատելութեամբ էր վերաբերւում դէպի իր թագաւորները, որոնց թուլութեանն էին վերագրում հռովմայեցիների ազդեցութեան հզօրանալը։

Պարթևաց թագաւոր Խոսրով Ա. (108 – 121) հռովմայեցոց ազդեցութիւնը Ասիայից դուրս վանելու նպատակով ցանկացաւ Հայաստանի պարթև թագաւորներին, որոնք հակուած էին դէպի Հռովմը, զրկել գահից և Հայաստանն իր ազդեցութեան

տակ ձգելու համար թագաւոր նշանակեց իր եղբայր Պարթամասիրին։ Հռովմայեցիք զբաղուած էին դակերի դէմ պատերազմով և Խոսրովին յաջողուեց իր մտադրութիւնն իրագործել։

Հռովմայեցոց կայսրն էր Տրայիանոս, որ հատարակ ընտանիքից էր, սակայն շնորհիւ իր զինուորական ընդունակութիւնների առաջացաւ։ Նա վերին աստիճանի փառասէր մարդ էր և երազում էր Ալէքսանդր Մակեդոնացուն նմանուել՝ հիմնելով մի մեծ Ասիական պետութիւն։ Խոսրովի արած քայլը Հայաստանի վերաբերմամբ պատրուակ ծառայեց Տրայիանոսի համար, և նա մեծ պատրաստութեամբ արշաւեց Ասիայի վրայ՝ իր մտադրութիւնն իրագործելու։

Աշխադար հալածուած Հայաստանից շրջում էր Ասորիքի կողմերում։ Խոսրով լսեց Տրայիանոսի արշաւանքի մասին և ցանկացաւ իր մեծ նախորդի՝ Վաղարշակի քաղաքականութիւնը բանեցնել։ Նա մեծամեծ ընծաներով դեսպանութիւն ուղարկեց Տրայիանոսի մօտ՝ խնդրելով Հայաստանի վրայ թագաւորեցնել Պարթամասիրին՝ Տրդատի օրինակով։ Տրայիանոս մերժեց. դեսպանութիւնը և ընծաները չընդունեց։ Նա շարունակեց արշաւանքը և հասաւ Կարնոյ կողմերը։ Այն ժամանակ Պարթամասիր ինքը փորձեց դեսպաններ ուղարկել ու ազաչել, որ իրեն թագաւոր ճանաչէ։ Տրայիանոս կանչեց իր մօտ, մերժեց

թագ տալ և մի զունդ զօրքի հսկողութեան տակ նրան քշեց Հայաստանից, որպէսզի նա չդրդռէ հայերին հռովմայեցիների դէմ։

Տրայիանոս վճռեց Հայաստանի վրայ այլևս թագաւոր չկարգել, այլ դարձնել ուղղակի Հռովմի մի նահանգը։ Այդ մաքով էլ նա հայերին հրաման ուղարկեց։ Հայաստանի բերդերում նա պահապան զօրքեր թողեց և ապա արշաւեց Միջագետքի վրայ։ Շատ քաղաքներ ու գաւառներ նուաճեց, ապա ձմեռը պատրաստութիւն տեսաւ Բաբելոնի վրայ արշաւելու։ Նա մտադիր էր նուաճել Պարթևաստանը եւ ապա անցնել մինչև Հնդկական ծովը։

Հետևեալ գարնանն արդէն Տիզբոնումն էր, որի համար և կոչուեցաւ «ինքնակալ պարթևական»։ Խոսրովին հալածեց և նրա փոխարէն թագաւոր կարգեց Աշխադարի որդուն։ Մինչ Տրայիանոս իր առաջ բացուած էր տեսնում Հնդկական ովկիանոսը, իր թիկունքում ապստամբուեցին Ասորեստանը, Սելևկիան և ուրիշ քաղաքներ։ Նա ջերմախտով վարակուած վերադարձաւ ապստամբութիւնները ճնշելու և 117 թ. Կիլիկիայում մեռաւ։

Խոսրով վերադարձաւ իր գահը։ Տրայիանոսի յաջորդ Ադրիանոս նրա հետ խաղաղութեան դաշն կնքեց և երկու երկրների սահմանը կրկին Եփրատը դարձաւ։ Հայաստանի վրայ թագաւորում

էր Աշխադարի որդի Պարթամասպատ։

Պարթևները 161—162 թուին կարողացան նուաճել Հայաստանը, սակայն հռովմայեցիք մեծ զօրք ուղարկեցին նրանց դէմ. պարթևները յաղթուեցին և Հայաստան կրկին անցաւ Հռովմին։

180 թուից սկսած Հռովմում բարձրացան ներքին խռովութիւններ. մի շարք գահի թեկնածուներ կռուում էին իրար դէմ և Հռովմը բաժանուել էր մի քանի կուսակցութիւնների։ Այդ ժամանակ Հայաստանում թագաւորում էր Սանատրուկը, որին յաջորդեց որդին Վաղարշ։ Պարթևաց թագաւորն էր համանուն Վաղարշ Դ. (191—209)։ Նա կարողացաւ իր կողմը գրաւել Հայոց Վաղարշ թագաւորին և միասին արշաւել հռովմայեցոց երկրների վրայ։

Հռովմայեցիք պարթևների դէմ երրորդ արշաւանքը կազմակերպեցին։ Միջագետքն առնուեցաւ և Տիզբոն մայրաքաղաքը կրկին աւերուեցաւ։ Հայոց Վաղարշ թագաւորը կարողացաւ ընծաներով հռովմայեցիների սիրտը գրաւել, և նրանք ճանաչեցին նրա թագաւորութիւնը։ Սակայն հռովմայեցիք 211 թուին կրկին ցանկացան Հայաստանը դարձնել հռովմէական նահանգ՝ տեսնելով պարթևների և նրանց մտերմութիւնը։ Այդ նպատակով նրանք հայոց Վաղարշ թագաւորին հրաւիրեցին Հռովմ և բանդարկեցին։ Հայերն ապստամբուեցին և յաղթեցին հռովմայեցիներին։

Միւս կողմից պարթևները պատրաստում էին հռովմայեցիների վրայ արշաւելու։ Հռովմայեցիք հայերի սիրտը շահելու համար ստիպուած եղան Վաղարշի որդի Տրդատ Բ.-ին թագ տալ և ուղարկել Հայաստան 218 թ., իսկ պարթևների հետ հաշտութիւն կնքեցին՝ Միջագետքը վերադարձնելով նրանց։ Այդ շրջանից Պարսկաստանի պարթև թագաւորների ազդեցութիւնը բաւական մեծանում է Հայաստանի վրայ, և Հռովմն ստիպուած է լինում հաշտուել այդ հանգամանքի հետ։ Տրդատ Բ.-ին յաջորդեց Խոսրով Ա. (222—252). սա Պարթևաց Արտաւան թագաւորի մերձաւոր ազգականն էր, կամ եղբայրը։

Պարսկաստանում այդ միջոցին մի յեղափոխութիւն էր պատրաստւում. պարսիկ ժողովուրդը վաղուց հետէ ատելութեամբ էր վերաբերւում դէպի թագաւորող պարթևական տոհմը. այդ տոհմի յունասիրութիւնը միանգամայն խորթ էր պարսիկների հոգեբանութեանը. նրանց ատելութիւնը մեծացաւ մանաւանդ այն ժամանակից սկսած, երբ Դարեհ Մեծի գահը ժառանգողները խաղալիք դարձան Հռովմի ձեռքին. ազնուականութեան դժգոհութիւնը մասամբ արտայայտուեց Վաղարշակ Ա.-ի ժամանակ։ Պարսիկ և պարթև ազնուականութիւնը դաւադրութիւն կազմեց թագաւորող տան դէմ. այդ դաւադրութեան գլուխն անցաւ Արտաշիր Սասանեան պարսիկը, որ ծրագրեց վերականգնել հին պարսկական իշխանութիւնը, նրա կուլտուրան, կրօնը և կարգերը։ Արտաշիր երեք ճակատամարտում յաղթեց վերջին Արտաւան թագաւորին (Լ.-րդ արշակին) և սպանեց (224 թ.)։

Արտաշիրի առաջին գործն եղաւ հռովմայեցիներին քշել Միջագետքից, ապա նրանց ազդեցութիւնը Ասիայից վերացնելու նպատակով՝ Հայաստանում պարթևների հարստութեանը վերջ տալ և միացնել Պարսկաստանի հետ, ինչպէս հնում եղել էր։ Այդ գործում նրա հետ միացել էին Պարսկաստանի պահլաւ ցեղի երկու տոհմերը։ Սպանուած Արտաւանի որդիքը փախել էին Հայոց Խոսրով թագաւորի մօտ։ Արտաշիրի Միջագետք արշաւելու լուրը հասաւ Հռովմ. Խոսրով զայրացած էր իր եղբօր մահուան համար. Հռովմին ձեռնտու չէր, որ Պարսկաստանում բարձրանար թշնամի Սասանեան տոհմը։ Աղէքսանդր Սևերոս և Խոսրով մեծ զօրքով դիմեցին Արտաշիրի վրայ. պարսիկները պարտուեցին և Արտաշիր յետ քաշուեց երկրի խորքերը։

Այնուհետև Խոսրովի միակ յոյսը՝ իր գահի վրայ մնալու՝ միայն հռովմայեցիք կարող էին լինել և դրա համար հայերը բարեկամ մնացին նրանց։ Մինչ Արտաշիր նոր արշաւանքի էր պատրաստւում, վախճանուեց և նրան յաջորդեց Շապուհ կամ Սապոր Ա։

Շապուհ արշաւեց Միջագետքի վրայ։ Հռովմայեցիք նոր բանակ ուղարկեցին և նրան քշեցին։ Այն ժամանակ նա մտածեց յարձակուել Հայաստանի վրայ, սակայն հայերը քաջութեամբ յետ մղեցին։ Շապուհ հետևելով իր նախորդին՝ մտածեց հռովմայեցիներին զրկել Ասիայի իրանց յենարանից. այդ նպատակով նա դաւադրութեամբ Խոսրովին պատնել տուաւ իր իսկ ազգակցի ձեռքով. հայ պատմագիրները յիշատակում են այդ արիւնակից ոճրագործի անունը. դա Անակ Պահլաւունին էր։ Հռովմայեցիք լսեցին Հայաստանում կատարուած դէպքերի մասին և երկիրն իրանց գերիշխանութեան տակ առնելով՝ թագաւորեցրին Խոսրովի որդի Տրդատին (252 թուին)։ Սակայն Հռովմն այդ միջոցին մեծամեծ խռովութիւնների մէջ էր. Աղեքսանդր Սեւերոսի սպանութիւնից յետոյ ամեն մի գաւառական բանակ մի-մի կայսր էր հրատարակում. մի սոսկալի խառնաշփոթութիւն ընկաւ երկրի մէջ, որից օգտուեցին պարսիկները, գոթերը և ալմանները, որոնք ներս էին խուժում կայսրութեան երկրները և ջարդում հռովմէական բանակները։ 35 տարուայ ընթացքում իրար յաջորդեցին մի շարք բարբարոս կայսրներ։

Պարզ է, որ այդպիսի խառնակ վիճակից ամենից աւելի պէտք է օգտուէր նոր կազմակերպուող Սասանեան հարստութիւնը. և, յիրաւի,

260 թուին մի չլսուած դէպք տեղի ունեցաւ. Շապուհ ջարդեց հռովմէական մեծ բանակը և գերի բռնեց Վալերիանոս կայսրին. Տրդատ, որ միացած էր հռովմայեցիների հետ, հազիւ կարողացաւ Եփրատից լողալով փախչել պարսիկների հետապնդումից։ Նա փախաւ Հռովմ։ Շապուհ անարգել մտաւ Հայաստան. հայերն սկզբում գլուխ ունենալով նախարարներին քաջութեամբ դիմադրեցին Շապուհին, սակայն երբ վերջինս հաւաստիացրեց, որ իշխանական տոհմերին ձեռք չի տալ, այն ժամանակ հայերը հանգստացան և ընդունեցին նրա գերիշխանութիւնը, մանաւանդ որ Հռովմի վրայ այդ ժամանակ յոյս դնել չէր կարելի։ Այդ դրութիւնը շարունակուեց մինչև 297 թ.։ Այդ ժամանակամիջոցում Հռովմ մի քանի անգամ փորձեց վերականգնել իր կորցրած վարկը՝ նրա հետ ձեռք բերել և Ասիայի գերիշխանութիւնը, սակայն 'ի զուր. 293 թուին Ներսեհ Սասանեան թագաւորը վերջնականապէս քշեց Հռովմի նշանակած Հայաստանի թագաւոր Տրդատին և երկիրն իր իշխանութեան տակ առաւ։

Հռովմում երեսուն բռնապետների շրջանն անցնելուց յետոյ՝ դեռ երկար շարունակւում էին խռովութիւնները՝ մանաւանդ քրիստոնէութեան դէմ հանած հալածանքների շնորհիւ, որն այդ ժամանակ բաւականաչափ տարածուել և սպառնում էր հին կարգերին։ Մինչև որ 284 թուին

դահ բարձրացաւ Դիոկղետիանոս. նա հասարակ ծագումն ունէր, բայց կարողացաւ մի ուժեղ միապետական կառավարութիւն ստեղծել, որի շնորհիւ խաղաղութիւնը վերականգնուեց։ Իր լայնածաւալ պետութիւնը հեշտութեամբ պաշտպանելու համար կայսրութիւնը բաժանեց չորս կառավարիչների մէջ. իր համար օգնականներ ընտրեց երեք ամենաարժանաւոր զօրավարներ. արևելեան մասը, որի հետ և Ասիան, ստացաւ Գալերիանոսը, որը 297 թուին մեծ ջարդ տուաւ պարսիկներին և Խոսրովի որդի Տրդատին Դիոկղետիանոսի համաձայնութեամբ վերստին թագաւորեցրեց Հայաստանի վրայ։ Տրդատ այնուհետև 40 տարի Հռոմի հովանաւորութեան տակ ապահովութեամբ թագաւորեց։ Նրա թագաւորութեան օրով հայերի բախտը վերջնականապէս որոշուեց. նրանք ընդունելով քրիստոնէութիւնը՝ ընդ միշտ յարեցին Արևմտեան քաղաքակրթութեանը։

IV

Հայոց լեզուն. գրականութիւնը. անգիր բանահիւսութիւն. մեհենական գրեր. կրօնը. հաւատալիքներ. սկզբնական պաշտամունքներ. հոգու անմահութիւն և հանդերձեալ կեանք. պարսկական և յունական ազդեցութիւնը. սրբազան Մասսի ընակիչները։

Եթէ կար միացնող կապ իրարից տարբեր ձգտումներով ապրող տոհմերի մէջ, դա լեզուն էր և կրօնը։ Մեծ և Փոքր Հայքում ցրուած այլատարբ ցեղերի համար հայոց լեզուն ընդհանուր էր. այստեղից երևում է հայ ցեղի ոյժն ու կենսունակութիւնը. նա կարողացաւ ամենքին ենթարկել իր քաղաքակրթութեանը և ձուլել իր մէջ. դա նրա ամենաաչքի ընկնող յատկութիւններից մէկն է։ Նախապատմական շրջանից մնացած դիցաբանութիւնների հատուկտոր նմուշներն ապացուցանում են, որ հին հայերն ունեցել են մի վերին աստիճանի կանոնաւոր մշակուած և ճկուն լեզու։ Թէև նա ունեցել է, ինչպէս և այժմ էլ ունի բազմաթիւ բարբառներ, սակայն դրանցից մէկը ընդհանուր է եղել, պարտաւորեցուցիչ ամենքի համար։ Այդ բարբառը մշակուել է արքունիքում և մեհեաններում. նա կոչուել է «ոստանիկ» կամ արքունի բարբառ, որպէսզի տարբերուի «գեղջուկ» կամ «գռեհիկ» բարբառներից։ «Ոստանիկ» բարբառը, որ յետոյ իր զարգացման գագաթնակէտին հասաւ Քս. յետոյ Ե.-րդ դարում,

կոչւում է գրաբար և այժմ գործ է ածւում միայն եկեղեցիներում։ Հնում գրաբարը զարգացել և ընդհանուր գրական լեզու է դարձել ըստ երեւութին Տիգրան Մեծի և Տրդատ-Արտաշիսի ժամանակ։

Լեզուն զարգանում է գլխաւորապէս գրականութեան միջոցով, երբ նա պարտաւորեցուցիչ է ժողովրդի համար և նա իր կարիքներին նրա միջոցով է բաւարարութիւն տալիս։ Ի նկատի առնելով հին շրջանից մնացած հատուկտոր երգերի դարձուածքները, բառերի նրբութիւնն ու նրանց զանազան ձևի արտայայտութիւնը, պէտք է ենթադրել, որ հնում հայերն ունեցել են բաւականաչափ հարուստ ազգային գրականութիւն, սակայն, դժբախտաբար, նրանից մեզ միայն հասել են անգիր բանաստեղծական կտորներ՝ շնորհիւ գլխաւորապէս Մովսէս Խորենացու։ Բացի «մեհենական» կոչուած գրքերից, որոնք անշուշտ կրօնական և ազգային պատմական բովանդակութիւն պէտք է ունենային, Մ. Խորենացին յիշատակում է հետևեալ երգերի տեսակները. «թուելեաց», որոնք թագաւորական գործերի տարեգրութիւններն էին պարունակում, «ցուցք»՝ բանաստեղծական մրցութիւններ կամ ներկայացումներ, «վիպասանական»՝ դիւցազներգութիւն, «զբոյցներ», «առասպելներ» և այլն։

Բացի ազգային լեզուից թագաւորական հրո-

վարտակների և հասարակական վճիռների համար գործ էին ածում և պարսկերէն կամ յունարէն՝ նայած՝ թէ հայերը ում դերիշխանութիւնն էին ընդունում. դրա համար էլ թագաւորական արքունիքում լինում էր «արքունի դիւանապետ» կամ հմուտ քարտուղար։

Հայերն ունեցել են գրերի երեք ձև զանազան ժամանակներում. ա. գաղափարագրեր, որոնց հետքերը մնացել են մեր գրաբար գրականութեան մէջ, բ. սեպագրեր, որոնք իբրև կենդանի յուշարձաններ անցեալի՝ ցրուած են բազմաթիւ աւերակների վրայ և գ. հնչիւնագրեր, որոնցից դժբախտաբար ոչ մի հետք չի մնացել, որովհետև քրիստոնէութեան առաջին քարոզիչները միանգամայն ոչնչացրել են հին հեթանոսութիւնը յիշեցնող և հայերին արեւելեան կուլ'տուրայի հետ կապող այդ յիշատակարանները։ Որովհետև գիրն ու դպրութիւնը կենտրոնացած են եղել մեհեաններում, պարզ է, որ հեշտութեամբ կարող էին նրանց փլատակների տակ անյայտանալ, եթէ միայն ներկայումս մեր գործածելիս Մեսրոպեան տառերը հնի վերարտադրութիւնը չէ։

Հայերի հին կրօնը երեք տարրից է կազմուելը, ուն հայկական, որ շատ նման է եղել հին յունականին. նրա հետ խառնուել են նոր հայրենիքում տպրող ընիկների և եկուոր տարրերի հաւատալիքները, տպանախ քան Արտաշիսեան հարբս-

տութիւնը ենթարկուել է պարսկական ազդեցութեանը, իսկ Արտաշիսեան հարստութեան շրջանում մուտք են գործել յունական ծաղկման շրջանի աստուածները։

Իբրև արիական ցեղին պատկանող ժողովուրդ՝ հայերն սկզբում պաշտում էին բնութիւնը. երկնքի անհուն կապուտակութիւնը անհամար աստղերով, որ անձրևով և ձիւնով մուտքանում է արտերն ու արօտները, որոտն ու կայծակը, որ սարսափ էին ազդում նրանց. մայր-երկիրը, որ բուսցնում էր հացաբոյսերը, բարձրաբերձ լեռներն ու կանաչ բլուրները, որոնք հիացմունք էին պատճառում նրանց և իրանց կաթնաղբիւրներով ու մեծ ու փոքր գետերով ոռոգում շինականի ծարաւ արտերն ու զովացնում նրա տապից այրուող սիրտը, սաղարթախիտ կուսական անտառներն իրանց հսկայ մայրիներով ու սօսիներով, որոնք իրանց սօսափիւնով բնութեան լեզուն էին հանդիսանում և աստուածների կամքը մարդկանց յայտնում,—բոլորը հայի պաշտամունքի առարկաներն էին։ Աստուածներն այնտեղ՝ այն վսեմ լեռների գագաթներին էին ապրում և այնտեղից հսկում հայ շինականի աշխատանքին, որպէսզի չար ոյժերը՝ ոգիները չխորտակեն նրա յոյսերը։ Եւ հայն աղօթելիս բարձրանում էր լեռների ու բլուրների վրայ, որպէսզի նրա աղօթքը լսելի լինի աստուածներին։ Հայաստանի

լեռների հսկան՝ որբազան Մասիսն էր աստուածների մշտական օթեւանը։ Յոյների աստուածներն էլ ապրում էին Օլիմպոս լեռան վրայ։

Հայաստանի հին բնակիչները՝ խալդերը նոյնպէս պաշտում էին բնութեան երևոյթները, իսկ հայերը երկար ժամանակ նրանց ազդեցութեան տակ են եղել։

Յետակայում, ինչպէս յունական, նոյնպէս և հայերի աստուածները կազմում էին նահապետական դերդաստան, որի գլուխը կանգնած էր նահապետ-աստուածը. նա պարսկական անունով Արամազդ էր կոչւում. նա երկնքի և երկրի ստեղծողն էր համարւում։ Դերդաստանը պահպանւում է աշխատող ձեռքերով. այդ օրինակով էլ հայը Արամազդն ունէր որդիք և դստերք. նրանք արտայայտում էին հայ երկրագործի աշխատասիրութիւնը, քրտնաթոր ու պարզ կեանքը. նրանք գիշեր ու ցերեկ հսկում էին Հայաստան աշխարհին, նրա աշխատասէր գիւղացու վաստակին և դրա համար արժանանում էին նրա անհուն գոհունակութեանը, որ արտայայտւում էր բազմամարդ տօնախմբութիւններով և զոհաբերութիւններով։ Ամեն մի աստծու համար հայ գեղջուկը յօրինել էր պաշտամունքի առանձին ձև և առանձին տօնակատարութիւն, որոնք մեծ շքով էին կատարւում. տօնակատարութիւնները նշանաւոր էին դարձնում երգերով ու պարերով, որոնցից յիշա-

տակւում են՝ «կաքաւք», «կոյթք», «վազք», «պար» և «պարանցիկք»։ Այդ տօնակատարութիւնների ժամանակ Հայաստանի հեռաւոր անկիւններից սրբազան վայրն էին հաւաքւում տարբեր բարբառներով այլազան տարրեր և նրանց մէջ միութեան կապ էր ստեղծւում իրանց արածու շուրջը։ Քրիստոնէութեան մուտք գործելով այդ սովորութիւնը չխախտուեց։

Հայ գիւղացու անտեսութիւնն ապահով էր, քանի կանգուն էր գերդաստունը, քանի նրա անդամները խմբուած էին ընդհանուր օճախի շուրջը. օճախը գերդաստան գոյութեան նշանաբանն էր, դրա համար էլ նա պաշտւում էր։ Պարսիկներն էլ պաշտում էին կրակը, սակայն հայկական օճախի պաշտամունքը նման էր յունականին. պարսկական կրակապաշտութեան ազդեցութիւնը նկատելի էր միայն հարաւ—արևմտեան մասում։ Եթէ գերդաստան մի անդամը ցանկանում էր բաժանուել և նոր ընտանիք կազմել, հարկ էր համարում գերդաստան օճախից մի բուռը մոխիր տանել իր նոր տան համար։ Այն գերդաստունը, որի սկզբնաւորութիւնը շատ հին էր, աւելի էր յարգւում։ Այսօր էլ մեր գիւղերում երիտասարդ զոյգերը նախ քան եկեղեցի գնալը, ծունկ են չոքում օճախի առաջ և երկրպագում. այժմ էլ մեր գիւղերում յայտնի «օճախ»-ներ կան։

Օճախի պաշտամունքի հետ էր կապուած

նախահօր՝ գերդաստան նահապետի պաշտամունքը. տոհմապետի և նահապետի փորձառու և խելացի լինելուցն էր կախուած և գերդաստան յաջողութիւնը։ Նրա խօսքը սուրբ էր. նախահայրերի վճիռները ցեղի սովորութիւնները և նրա օրէնքների հիմքը դարձան. դրա համար էլ ցեղը և տոհմը մեծարում և պաշտում էր նախահարց յիշատակը. ամեն մի տոհմ պարծենում էր իր ծագումով, որ ներկայացնում էր իր տոհմապետը, աշխատում էր նրա յիշատակը անմոռաց պահել։ Պարթեները կանգնեցրին իրանց նախահայրերի արձանները ըստ այդ ժամանակուայ սովորութեան և պաշտեցին։ «Մեծոց (մեծաց) խօսք է», պատճառաբանում է իր ասածը գիւղացին՝ իր խօսքին աւելի կշիռ տալու համար։ «Հայրերից մնացած սովորութիւն է» ասելով՝ ցանկանում են որևէ սովորութեան անձեռնմխելիութիւնը ցոյց տալ։ Այժմ էլ գիւղերում գործածական է «քենդխուդա» բառը, որ նշանակում է գիւղի ասուած։ Այդ օրինակով էլ Տիգրան Մեծ պահանջում էր, որ իրեն ասածու տեղ պաշտեն։

Հայերը հաւատում էին գուշակութիւնների. ծառերի սօսափիւնը, թռչունների արտասովոր ձայները, շների ոռնոցը իրենց առանձին նշանակութիւնն ունէին և դրանք բացատրելու համար կային առանձին հոգևորականներ, որոնք այդ երևոյթները բացատրող գիտութիւնների մէջ վարժ-

ւում էին։ Մ. Խորենացին յիշատակում է, որ հայոց իշխաններից մէկը՝ Արայեան Արան մեռնելով՝ «թողեց մի արու զաւակ վերին աստիճանի ընդունակ թէ խօսքի և թէ գործի մէջ. Անուշաւան էր նրա անունը, որ Սօս էր կոչւում, որովհետև պաշտամունքի (կրօնի) համաձայն նա նուիրուած էր Արմաւիրում գտնուած Արամանեկի սօսիներին, որոնց տերևների, սաստիկ կամ մեղմ քամու հանած, սօսափիւնը Հայոց աշխարհում սովորութիւն էր դուշակել. այդ սովորութիւնը երկար ժամանակ տեղի ունէր»։ Յոյներն էլ ունէին յայտնի դուշակող՝ Պիւթիա քրմուհին։

Ամեռուայ ձիւնախառն բուքը, ամառուայ ամպամած և փոշիախառն փոթորիկը, լեռներից յաճախակի ժայթքող հրաբխային լաւան իր կործանիչ ալիքներով, մրրիկը, որ ճղակոտոր էր անում ծառերը,—այդ բոլորը հին և նախապաշարուած հային անհասկանալի էին, և նա կարծում էր՝ թէ աներևոյթ ոյժեր կամ ոգիներ են, որ իրանց զօրութիւնը երևան են հանում. հայերը հաւատում էին, որ բնութիւնը լիքն է չար և բարի ոգիներով՝ յաւերժահարսներով, յուշկապարիկներով, քաջքերով, դևերով, հրեշտակներով և սատանաներով։ Արտաւազդ արքայորդու մասին պատմում էին, որպէս թէ նա ծնուելու ժամանակ պատահարի էր ենթարկուել. կարծում էին, որ Աժդահակի ցեղի կոնանց կախարդութիւնից

պատահեց այդ, որի համար և Արտաշէս շատ չարչարեց նրանց։ Եւ այդ բանը երգիչները «առասպելի» մէջ պատմում էին՝ «Վիշապաղունները զողացան մանուկ Արտաւազդին և նրա փոխարէն մի դև դրին»։

Սաստիկ տարածուած էր կախարդութիւնը՝ դրա հետ միաժամանակ և «չար աչքից» ազատ պահելու սովորութիւնը։ Մի աւանդութեան մէջ պատմուում է, որ Ասորեստանի Շամիրամ թագուհին ուլունքներ ունէր իր վրայ, որոնք հմայելու զօրութիւն ունէին։ Այժմ էլ նախապաշարուած գիւղացին իր մինուճար զաւակի հագուստին՝ թևի վերևը «աչքաուլունք» է կարում՝ նրան չար աչքից ազատ պահելու համար։ Այդ հաւատալիքի հետ կապուած էր և ճակատագրի գաղափարը։

Հայերը դեռ հեթանոսութեան ժամանակ հաւատում էին հոգու անմահութեանը և հանդերձեալ կեանքին, որտեղ մարդիկ իրանց արածի համար հաշիւ պիտի տան. յոյները նոյնպէս հաւատում էին թէ մէկին և թէ միւսին։

Մ. Խորենացին հետևեալ աւանդութիւնն է բերում.

—Արամին յաջորդեց որդին Արա, որ գեղեցկութեան համար կոչւում էր Արա Գեղեցիկ։ Ասորեստանի Շամիրամ թագուհին լսել էր նրա գեղեցկութեան համբաւը. իր ամուսնու մահուանից յետոյ մեծ ընծաներ ուղարկեց Արային և առաջարկեց՝ իր հետ ամուսնանալ։ Մի քանի անգամ պատգամաւորներ եկան Արայի մօտ, սակայն նա չհամաձայնուեց։ Այն ժամանակ՝ «Շամիրամ սաստիկ զայրանալով ժողովեց իր զօրքի բազմութիւնը

և շտապեց հասնել Հայոց աշխարհը՝ Արայի վրայ։ Բայց, ինչպէս երևում է, նա շտապում էր՝ ոչ այնքան նրան սպանելու կամ հալածելու, որքան նուաճելու և ձեռք գցելու, որպէսզի իր կամքը կատարուի։ . . . Շտապով գալիս հասնում էր Արայի դաշտը, որը նրա անունով էլ Այրարատ էր կոչւում։ Ճակատամարտի միջոցին պատուիրում է իր զօրապետներին, որպէսզի, եթէ հնարաւոր լինի, կենդանի թողնեն նրան։ Բայց երբ տեղի ունեցաւ ճակատամարտը, Արան զարնուեց Շամիրամի երիտասարդներից և սպանուեց։ Յաղթութիւնից յետոյ դիակապուտներ ուղարկեց Շամիրամ ճակատամարտի վայրը՝ դիակների մէջ իր ցանկացած դիակը որոնելու։ Արային քաջամարտիկների մէջ մնաց գտան. նա հրամայեց զին դնել իր ապարանքի վերնատանը։ Իսկ երբ հայոց զօրքը կրկին դրդուեց Շամիրամի դէմ և ցանկացաւ Արայի մահուան վրէժն առնել, նա ասաց. «Ասուածներին հրամայեցի լիզել նրա վէրքերը. նա կենդանանայ»։ Միևնոյն ժամանակ նա յոյս ունէր իր կախարդութեամբ կենդանացնել Արային։ Բայց երբ նրա զին նեխուեց, հրամայեց մի մեծ վիհ ձգել և ծածկել։ Իր սիրելիներից մէկին զարդարելով՝ լուր տարածեց, որպէս թէ ասուածները լիզել և կենդանացրել են. . . , դրա համար և նրանք (ասուածները) աւելի պաշտելի են և փառքի արժանի՝ իբրև ցանկութիւն կատարողներ. . . ։ Մի նոր պատկեր էլ կանգնեցրեց դևերի անուանը և մեծամեծ զոհերով պատուեց, ցանկանալով դրանով ցոյց տալ՝ որպէս թէ ասուածների զօրութիւնն է կենդանացրել Արային։ Եւ Հայոց աշխարհում այսպիսի լուր տարածելով՝ ամենքին հաւատացրեց, և պատերազմը դադարեց»։

Գողթան երգիչներից քաղելով՝ Մ. Խորենացին բերում է մի ուրիշ աւանդութիւն, որ վերաբերում է

Արտաւազդ արքայորդուն։

—Արտաշէսի (Տրդատ-Արտաշէսի) մահուան միջոցին, հեթանոսների սովորութեան համաձայն շատ կոտորած էր տեղի ունենում, որի համար Արտաւազդ (Արտաշիսի անդրանիկ որդին) նեղանալով ասում է հօրը. «Դու գնացիր և ամբողջ երկիրը քեզ հետ տարար. ես այս աւերակների վրայ ինչպէս պիտի թագաւորեմ»։ Ուստի Արտաշէս անիծելով նրան այսպէս ասաց.

Եթէ դու յորս հեծցիս
Յաղատ 'ի վեր 'ի Մասիս,
Զքեզ կալցեն քաջք,
Տարցեն յաղատ 'ի վեր 'ի Մասիս,
Անդ կացցես
Եւ զլոյս մի տեսցես։

—«Եթէ դու որսի գնաս ազատ Մասիսն 'ի վեր, թող քեզ քաջքերը բռնեն, տանեն ազատ Մասիսն 'ի վեր. այնտեղ մնաս և լոյս չտեսնես»։

Երբ Արտաշէսից յետոյ թագաւորեց Արտաւազդ, Այրարատեան երկրից հալածեց իր բոլոր եղբայրներին..., որպէսզի չընակուեն արեայի կալուածքում՝ Այրարատում... Մի քանի օր թագաւորելուց յետոյ, երբ անցաւ Արտաշատ քաղաքի կամրջից՝ Գինա գետի ակունքի մօտ գինջ և վայրի էշ որսալու, մի տեսակ խելագարութիւն եկաւ վրան և երիվարի հետ գլորուելով մի խորխորատ՝ անյայտացաւ։ Իսկ պատմիչները պատմում են, որ մի այրի մէջ փակուած է նա՝ երկաթէ շղթաներով կապկրպած։ Երկու շուն նրա շղթաները կրծում են, և նա աշխատում է դուրս գալ և կործանել աշխարհը, բայց դարբինների կռանների ձայնից կապանքները հատատնում են, որի համար և նոյն իսկ մեր ժամանակ դարբիններից շատերը կիրակի օրը երեք-չորս անգամ զարկում են սալին, «որպէսզի, ասում են, ամրանան Ար-

տաւազգի շղթաները»։

Քրիստոնէութիւնը չկարողացաւ վերացնել այդ սովորութիւնը։ Հին յոյներն էլ Կովկասեան բարձունքներում փակել են Պրոմէթէոսին։

Հանգուցեալի յուղարկաւորութեան ժամանակ սգոյ մայրը, երբեմն երաժշտական գործիքի նուագակցութեամբ, ողբաձայն երգում և յիշատակում էր նրա գործերը, նրան ձայնակցում էին սգոյ կոյսերը (գատերք սգոյ), որպիսի սովորութիւնը շարունակուեց քրիստոնէութեան շրջանում ևս։

Նշանաւոր անձանց թաղման ժամանակ պատահում էին կամաւոր մեռնողներ, որոնք չէին ցանկանում իրանց սիրելի անձից յետոյ ապրել. որքան շատ էին լինում մահացողներ, այնքան հանգուցեալի յարգն ու պատիւը մեծանում էր. դրա համար էլ իշխանների թաղման ժամանակ յաճախ լինում էին և բռնի մահեր։ Հին դամբարանների պեղումները ցոյց են տալիս, որ շատ անգամ իշխանի մահը սոսկալի դժբաղդութիւն էր դառնում նրա ծառաների և մերձաւորների համար, որովհետև յաճախ նրա ծառաներին, սիրելի կնոջը, երեխային, դիակառքը, կառապանին միասին թաղում էին իրանց տիրոջ հետ՝ բացի 'ի հարկէ նրա զէնք ու զրահից։

Այնուհետև նախ պարսից, ապա և յունաց ազդեցութեան տակ աւելացան նորանոր աստուածներ։ Սկզբում հայերը կուռքեր չունէին,

բայց շփուելով արևմտեան ազգերի հետ՝ կուռքեր ևս ունեցան. Տիգրան Մեծ բազմաթիւ արձաններ փոխադրեց Հայաստան Փոքր Ասիայի յունական քաղաքներից։ Նրանց կուռքերը շինուած էին փայտից, քարից, պղնձից, արծաթից և ոսկուց։ Այսպէս՝ աստուածների ընտանիքի հօր՝ Արամազդի դուստրն էր ոսկեձոյլ Անահիտը, որ համարւում էր հայ նահապետական ընտանիքի սրբութեան պաշտպան. նա էր՝ «մայր ամենայն զգաստութեանց, փառք և կեցուցիչ աշխարհին Հայոց»։ Հայ ազնուականներն իրանց դուստրներին ընծայում էին Անահիտ տիկնոջ տաճարին։ Մի քանի տեղեր կային նրա արձանները, բայց նշանաւորն Աշտիշատինն էր, որի հռչակը տարածուած էր շատ հեռու. Պոնտոսի բնակիչները նախ քան սրեէ գործի ձեռնարկելը ուխտի էին գալիս այդ մեհեանը՝ երդուելու համար։

Անահիտի քոյրն էր համարւում Նանէ՝ իմաստութեան դիցուհին. այսօր էլ գերդաստան ժրագլուխ մայրը գիւղերում «Նանի», «մեծ Նան» անունն է կրում.

Արամազդի որդին էր Վահագն պատերազմի և բանաստեղծական ձիրքի աստուածը։ Սրա մասին հետևեալ աւանդութիւնն էր պատմում.

—Տիգրան Երուանդեանի որդիքն էին Բար, Տիրան և Վահագն, որի մասին «առասպելները» պատմում են. Երկնէր երկին և երկիր,

Երկնէր և ծիրանի ծով.
Երկն 'ի ծովուն ունէր
Եւ զկարմրիկ եղեգնիկն։
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ 'ի բոցոյն պատանեկիկ վազէր։
Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք։

—Երկունքի ցաւերով էր բռնուած երկինքն ու երկիրը. երկունքի ցաւով էր բռնուած և ծիրանի ծովը. երկունքի ցաւով էր բռնուած ծովի մէջ բուած կարմիր եղեգնը։ Եղեգնի փողից ծուխ էր բարձրանում, եղեգնի փողից բոց էր բարձրանում, և բոցի միջից մի պատանի էր վազում. նա հրեղէն մազեր ունէր, բոցեղէն մօրուք և աչքերն էին զոյգ արեգակ։

«Այս բանի մասին ոմանց բաժրիոնները երգելը հէնց մեր ականջովը լսեցինք, որից յետոյ երգի մէջ պատմում էին, որ վիշապների հետ է կռուել և յաղթել»։

Գեղեցկութեան աստուածուհին էր և միաժամանակ Վահագնի կինը՝ Արամազդի միւս դուստրը՝ Աստղիկ։

Արամազդի որդին էր և արևի ու կրակի ներկայացուցիչը Միհր աստուածը, որին պաշտում էին ոչ միայն հայերն ու պարսիկները, այլ և շատ ասիական և հրոպական ազգեր։ Նրան նուիրուած պաշտամունքներից է և քրիստոնէութեան մէջ մուտք գործած Տեառնընդառաջի տօնին խարոյկ վառելու սովորութիւնը։

Գիտութեանց, պերճախօսութեան աստուածը և ընդհանրապէս գրագիտութիւնը հովանաւորողն էր Տիր, որ միաժամանակ համարւում էր «Արամազդի գրիչը»՝ նրա քարտուղարը։

Եղանակների և պտղաբերութեան աստուածներն էին Վանատուրի կոչուածները, որոնց տօնը կատարւում էր տարուայ սկզբին՝ Նաւասարդ ամսին (օգոստոսի 10-ին) և դրա համար էլ նրանք կոչւում էին Ամանոր և ամենաբեր։ Նրանց գլխաւոր մեհեանը և ուխտագնացութեան կենտրոնը Բագրևանդ գաւառի Բագաւան (աստուածների վայր) կամ այժմուայ Աշտիշատն էր։ Այստեղ կային հիւրընկալութեան համար բազմաթիւ իջևաններ, որովհետև Հայաստանի ամեն կողմից բազմաթիւ ուխտաւորներ էին գիմում այդտեղ, և մի քանի օր տևում էին նրանց ուխտագնացութեան հանդէսները։ Շատ կենդանիներ էին զոհւում և բաժանւում եկող-գնացողի։ Զոհաբերութեան և ուխտագնացութեան այդ ձևը մուտք գործեց և քրիստոնէութեան մէջ։

Պակաս շքեղութեամբ չէր կատարւում և Անահիտ դիցուհու տօնը նոյն Նաւասարդ ամսին. դիցուհուն նուիրաբերում էին ծաղկեփնջեր և պսակներ՝ գլխաւորապէս վարդեր, որի պատճառով և տօնը կոչուեց Վարդավառ։ Մատաղահաս աղջկերք վիճակահանութիւն էին կազմում և իրանց «Ջան գիւլումներով» թնդացնում սար ու

ձոր։ Այդ օրը ջուր էին սրսկում և տղաների թոցնում՝ Զրհեղեղի յիշատակին։

Կրօնական պաշտամունքներ կատարող և ընդհանրապէս կրօնն ուսուցանող ներկայանում էին մոգերը կամ քրմերը, որոնք աշխարհի գիտուններ էին, ուսում տարածողներ, աստուածներին սպասաւորողներ, գուշակողներ և կախարդողներ, երբեմն էլ դատաւորներ՝ համաձայն կրօնական գրքերի։

Քրիստոնէութեան մուտք գործելով այդ պաշտօններն անցան քրիստոնեայ հոգևորականներին։

Այսպիսով հայ ազգը կազմուած լինելով բազմաթիւ այլատարբ ցեղերից՝ իր կրօնի մէջ էլ մտցրեց բազմաթիւ այլատարբ հաւատալիքներ ու պաշտամունքներ, սակայն այդ բոլորը կարողացաւ նա միացնել, ամբողջացնել և մի հայկական հոգի ներշնչել, հայացնել։ Այդպէս նա վարուեց և իրեն ենթարկուող բազմաթիւ մանր ցեղերի հետ. դա նրա ցեղական բնորոշ կազմերից մէկն է։

Նա այդ հայացրած հաւատով ապրեց երկար դարեր, և այնուհետև ամեն մի նորամուտ գաղափար ընդունելիս նախ նրա մէջ մտցնում էր իր հոգեբանութիւնն ու իր հայեացքը։

Այդպէս վարուեց և քրիստոնէութեան հետ։

ՅԱՆԿ

ա. Ուրարտու

Աշխարհագրութիւնը . . . . . Երես 7

բ. Խարդեր.

I Նախնական տեղեկութիւններ 14

II Ասորեստանցիների արշաւանքները և նրանց գերիշխանութիւնը 18

III Ուրարտուի հզօրանալը և նրա գերիշխանութիւնը 28

IV Ուրարտուի անկումը 35

գ. Հայեր՝ մինչև Արտաշիսեան հարստութիւնը

I Արիական ցեղերի ծագումը և հայերը Փոքր Հայքում 45

II Հայերը Մարաց գերիշխանութեան տակ 58

III Հայերը Պարսից իշխանութեան տակ . . 74

IV Աղեքսանդր Մեծ. հայերը Մակեդոնական-Սելևկեան իշխանութեան ներքոյ . . . 88

դ. Ազգային Արտաշիսեան հարստութիւն.

I Արտաշէս հիմնադիր Արտաշիսեան հարստութեան 96

II Տիգրան Մեծ (95—56) 102

III Միհրդատի ու Տիգրանի վերջնական պարտութիւնը ու մահը 114

IV Արտաւազդ Գ. (56—36) և Արտաշիսեան հարստութեան վախճանը 124

ե. Պարթև Արշակունիների հարստութիւն

I Հայաստանը Հռովմէական նահանգ 131